

## ԳՐՎԵՑ ԱՊԱՌԱԺ ՔԱՐԻՆ

Մուրք խաչի օրն էր: Առավոտի հետ, գյուղին վերևից նայող գերեզմանատան կողմից դուրուկի սիրտ մաշող նվազի ձայն էր գալիս: Նվազը քնքշորեն շոյում, ավելոծում էր ձորում կծկված գյուղի անդորրը, հեծկլտում, բակերն էր մտնում ու կարծես նրա կանչով, մեկը մյուսի ետևից ճոնչալով, բացվում էին տների դռները:

Սկզբում ծանր-ծանր դուրս էին գալիս կանայք՝ սև գլխաշորերով կամ սև շալերի մեջ, հետո տղամարդիկ՝ շեմքին ծածկելով կեպիավոր գլխարկները, հետո հարսներն ու տղաներն էին հայտնվում ինչ-որ կապոցներ ու փաթեթներ թևերի տակ ու մեկ էլ լսվում էր երեխաների աղեխարշ ձայնը.

-Նանի՛, ա նան, ես էլ գամ, էլի՛...

Հետո մայրերի քնքուշ անեծքներն էին հնչում «շաշ» երեխաների հասցեին, որ տունը թողած, գերեզմանոց են ուզում գնալ, և ինչ-որ մեկի ուշացած կանչը.

-Աղջի, Հերիքնա՛գ, սպասի, ես էլ եմ գալիս...

Ու տղամարդկանց անշտապ զրույցը, կանանց վերջին կարգադրությունները տանը մնացողներին, երեխաների տրտունջն ու լացը հավաքելով, հավաքելով տներից, բակերից, թաղերից, նեղիկ ճամփաներից գալիս, խառնվում էին իրար ու բռնում գյուղի միակ կենտրոնական փողոցը, որը գերեզմանատուն էր տանում, և որտեղից կամացուկ հեծկլտում էր դուրուկը:

Ապրողները գնում էին իրենց անցյալի հետ հանդիպելու:

Միշտ այդպես էր լինում և այդպես էլ լինում էր:

Գերեզմանատան մուտքն անցնելուց հետո, թափորը ցրիվ եկավ անաղմուկ: Ամեն մեկը դեպի իր հարազատ շիրմաքարերը գնաց, ու գյուղը կրկին առանձնացավ տուն առ տուն, թաղ առ թաղ, ազգություն առ ազգություն: Հետո միանգամից, ասես ընդհանուր հրամանով, գերեզմանատան բոլոր կողմերից հեծկլտոց լսվեց ու սկսվեց կանանց ողբը: Այդ ողբի մեջ անցյալի բոլոր ձայները կային և բոլոր ցավերը կային՝ արարման տառապանքից սկսած մինչև հավերժ թվացող երջանկության անդառնալի կորուստը: Եվ որովհետև անհավատ էր գյուղը և որովհետև միակն էր ողջ գավառում, որ եկեղեցի ու տերտեր չէր ունեցել, կանայք հեթանոսությունն էին ժառանգել ու բերել իրենց հետ անհիշելի ժամանակներից և սգում ու կոծում էին հեթանոսաբար, մատներով ճանկռելով երեսները և հող լցնելով շաղարձակ մազերին: Նրանք լալիս էին բարձրաձայն և բարձրաձայն երգելով խոսում իրենց մեռած հարազատների հետ, հարցեր տալիս սրտակեղեք ու մորմոքալով պատասխանում այդ հարցերին, հիշում նրանց առաքինությունն ու մեծահոգությունը, առատաձեռնությունն ու քաջությունը, անմեղությունն ու ազնվությունը, երկինք պարզած ձեռքերով ծառա էին լինում աստվածների ու մարդկանց ճակատի գիրն անարդար, անզթորեն որոշողների դեմ ու անմիջապես էլ խոնարհաբար ծնկաչոք խնդրում բավարարվել տարածով ու խնայել,

պահպանել եղածը: Հանուն իրենց և հենց հանուն աստվածների գոյության: Որովհետև էլ ինչ աստված, եթե աղոթողներ չլինեն:

Ողբը բարձրացել, տարածվել էր ընդարձակ գերեզմանատան վրա և թվում էր, թե վերջ չի ունենալու: Երկու-երեք պատկառագողու, ալեհեր տղամարդիկ արդեն բարձրացրել էին գլուխները՝ կանանց սաստելու համար, երբ հանկարծ միանգամից լռություն տիրեց: Ավելի ճիշտ՝ մի շշուկ անցավ քարից-քար, թափորից-թափոր: Ինչ-որ մեկն ասաց.

Վարսենիկ աքիրը....

Եվ ամեն ինչ լռեց:

Բոլորի հայացքները ուղղվեցին դեպի գերեզմանատան մուտքը, որից ներս էր մտել ու հանդարտ, վեհաքայլ առաջ էր գալիս բարձրահասակ մի կին, մուգ կապույտ երկարափեշ հագուստի մեջ, սպիտակ մազերը խնամքով թաքցրած սև գլխաշորի տակ: Դեմքը զարմանալի գունատ էր, անկնճիռ ու մեղմ, և աչքերը կարեկցանքով ու բարոյությամբ էին նայում սգավոր շրջապատին:

Եվ, ուրեմն, ո՞վ էր այդ կինը, որին տեսնելով վայրկենապես զսպվեցին մարդիկ: Ով՞ էր նա, որ այդպիսի, գրեթե գերբնական ազդեցություն ուներ շրջապատի վրա:

Ներկաների համար այդ հարցում գաղտնիք չկար:

Նա միակն էր այդ գյուղում ծնվածներից, որ գերեզմանատանը իր ընտանեկան շիրմաթումբը չուներ: Նա մի մեծ գերդաստանի մայր էր եղել: Հպարտ ու երջանիկ իր ամուսնով, իր զավակներով, բայց հիմա չկային ու գոնե թաղված չէին գյուղի գերեզմանատանը, որպեսզի ինքն էլ մյուսների նման ծաղիկներ դներ հարազատ շիրմաքարերին: Նրա վիշտն այնքան մեծ էր, այնքան ահավոր, որ մարդիկ ամաչում էին նրա ներկայությամբ լաց լինել, որովհետև հոգու խորքում ինչ-որ տեղ վախենում էին, թե Վարսենիկ աքիրը կնեղանա և... աստված էլ կնեղանա:

## ՀՈՒՇԱՐՁԱՆ

Հուշարձանը արագ կառուցվեց, և որքան էլ տարօրինակ թվա, նախագծվեց առանց վիճաբանությունների ու կրքերի: Դա իսկապես տարօրինակ էր, որովհետև հոնուսցիներին առանձնապես որևէ պատճառ պետք չէր՝ վիճելու և կռվելու համար: Եթե դիմացը չլինի, հոնուսցիներն ինքն իր հետ կկռվի: Ուրիշ կերպ չի կարող: Նույնիսկ անեկդոտ կա այդ առթիվ, թեև դժվար թե դա իրողություն չլինի: Հոնուսցի Արշակը իր հարևան Սերգոյին առաջարկում է միասին գնալ սար:

- Ես էգուց պիտի գնամ,- հրաժարվում է Սերգոն:

- Վայ, բա ինչ անե՞մ,- վշտանում է Արշակը:

- Մենակ գնա:

- Մենա՞կ, ինչո՞ւ, ես հո գիժ չե՞մ,- ասում է Արշակը: - Ինձ հետ ճամփա գնալ կլինի: Ինքս ինձ կուտեմ: Բա ես մեղք չեմ...

Այնինչ հուշարձանի կառուցման առթիվ ոչ մի կոիվ չեղավ: Բոլորին էլ դուր էր գալիս մոխրագույն բազալտից տաշված միամիտ, անմեղ դեմքով պատանին, որն ասես պատրաստ էր ամեն վայրկյան դեն նետել հրացանը, ձեռն առնել ճիպոտը և վազել գառների ետևից:

Այդպիսի վաթսունչորս տղաներ չվերադարձան պատերազմից: Մեկ-երկու բացառությամբ, տարեց մարդիկ ետ եկան: Որը վիրավոր, որը հիվանդ, որն առանց ձեռքի կամ ոտքի: Իսկ ջահելները չեկան: Եվ հիմա հարկավոր էր մեկիկ-մեկիկ նրանց անուն-ազգանունները փորագրել պատվանդանի գորշավուն տուֆ քարի վրա: Որ գոնե քարի վրա մնան:

Եվ քարտաշ Սուրենը, որին հանձնարարված էր այդ գործը, գյուղսովետի տված և գյուղսովետի կնիքով հաստատված ցուցակը ձեռքին օր ու գիշեր փոքրիկ մուրճով ու բրիչով տառեր էր փորագրում գորշավուն ու ողորկ տուֆ քարի վրա: Սկզբում սանդուղքի վրա էր աշխատում: Հետո մի կողմ նետեց սանդուղքը: Հետո կռացավ ու կռացած էր աշխատում: Բայց անուն-ազգանունները շատ էին, և նա ծնկի իջավ: Ու երբ գիշերները բենզինով աշխատող գյուղի շարժական էլեկտրակայանը համաչափ թփթփոցով նրա թիկունքից լուսավորում էր հուշարձանը, գյուղից նայողին մի պահ թվում էր, թե դա Մատենադարանի առջև դրված Մաշտոցի արձանն է և վարպետ Սուրենն էլ աշակերտն է, ու գլխահակ ծնկել է ուսուցչի առաջ և հայոց տառերն է սովորում:

Գծեց, տաշեց, փորագրեց բոլոր անուն-ազգանունները քարտաշ Սուրենը ու մի երեկո հենց այնպես, աշխատանքային հագուստով, մատիտն ականջի ետևում և տուֆի գորշ փոշին մազերին, հոնքերին ու շորերի վրա, հայտնվեց կոլտնտեսության վարչության նախագահ՝ Յուլիաի առանձնասենյակում:

- Հը՞, պրծա՞ր,- հարցրեց նախագահը:

- Հա , - ասաց Սուրենը , - պրծա:

- Ապրես,- ուրախացավ նախագահը, մի թղթի վրա ինչ-որ բան գրեց ու թուղթը մեկնեց Սուրենին,- վերցրու, վարչության որոշմամբ քեզ լրացուցիչ հինգ կիլո պանիր ենք դուրս գրել և երկու կիլո կարագ:

- Ծնորհակալ եմ,- ասաց Սուրենը՝ թուղթը վերցնելով,- բայց ես սրա համար չեմ եկել:

- Հը՞:

- Թույլ տվեք,- ասաց Սուրենը,- որ պատվանդանի ետևի կողմում էլ գոհերի անունները գրեմ:

- Ո՞նց թե,- զարմացավ նախագահը,- ուրեմն՝ ըստ մեր ցուցակի բոլորին չես տեղավորե՞լ:

- Ըստ ձեր ցուցակի տեղավորել եմ,- ասաց վարպետ Սուրենը:

- Բա էլ ո՞ւմ անունը գրես, ա՛յ տղա,- տեղից բարձրացավ նախագահը:

- Անարդար բան է կատարվում, Յուլակ,- ասաց քարտաշ Մուրենը:- Եվ էդ անարդարությունը մենակ մեզ մոտ չի: Հիմա դու ասա, ճի՞ շտ է, որ պատերազմի գոհեր են համարվում մենակ նրանք, ովքեր սպանվել են կռվի դաշտում: Իսկ մյուսները... նրանք, որ հենց էստեղ սովից են մեռել ու անտերությունից, պատերազմի պատճառով չի: Նրանք, որ իրենց հարազատների կորստի ցավից են մեռել՝ պատերազմի պատճառով չի: Նրանք պատերազմի գոհեր չեն:

Նախագահը չպատասխանեց: Նա քարտաշ Մուրենի կողքով պատուհանից Սենիկի սարին էր նայում, որը հիմա հազիվ էր ուրվագծվում հեռվում և որտեղ միշտ փարթամ էր կանաչը: Նույնիսկ այն ժամանակ, պատերազմի տարիներին: Որպեսզի սովից չկոտորվեին, գնում էին հարևան գյուղին պատկանող այդ սարը՝ շուշան ու սիբեխ քաղելու: Հա, իհարկե, ինքը տասը տարեկան էր: Պատառոտված ու կարկատած շորերով, արևից ու կեղտից սևացած դեմքերով, գնչուների նման, կանայք արագ-արագ քաղում էին շուշանի ու սիբեխի գոխերը, լցնում պարկերի մեջ ու երեխաների շալակը տալիս: Քաղում էին հևալով, շնչասպառ և երջանիկ, որ իրիկունը կարող են մի բան լցնել ջրի մեջ, խաշել ու դնել անտեր սեղանին, անտեր երեխաների ու անտեր ծերերի առաջ: Մի բան: Ինչ-որ բան: Ծամելու բան:

Ու մեկ էլ հանկարծ մի ճիչ լսվեց.

- Ամա՛ն, ձե՛զ մատաղ, հանդապահները...

Եվ սարի գլխին, աղետի ու օրհասի նման հայտնվեցին երկու ձիավոր: Երևի իշխանությունն ու ուժը վայելելու համար, նրանք դեռևս ինչ-որ մի պահ մնացին անշարժ՝ հպարտ, կարմրաթույր ձիերի վրա, հետո մտրակեցին նժույգներին ու սլացան ներքև: Ի՛նչ կատարվեց, ի՛նչ կատարվեց...

Փախե՛ք,- ճչացին կանայք ու երեխաներին գառների նման առաջներն արած,վազեցին ցած բորիկ ոտքերը քարերին ու հողակտորներին քերծելով:

Բայց ու՞ր պետք է փախչեին ձիերից: Հանդապահները երկու կողմից շեղակի սլանալով, ներքևում փակեցին նրանց ճանապարհը, խլեցին պարկերը, շուշանն ու սիբեխը ցած թափեցին ու տրորեցին ձիերի սմբակների տակ՝ թափահարելով մտրակները ու հևալով.

- Էլի՞ կտրորեք հանդերը, էլի՞ կտրորեք ...

Հանդապահներից մեկն էլ վախեցնելու համար մտրակը Յուլակի մոր վրա բարձրացրեց, բայց Յուլակն առաջ նետվեց ու ակամա ընդունեց հարվածը: Դեմքն այրվեց, բայց տղան մնաց կանգնած հանդապահի առաջ, ասելությունից այրվող աչքերով և ոչ թե ցավից, նա ցավ արդեն շատ էր տեսել, այլ վիրավորանքից ճչաց.

- Դուք ֆաշիստներ եք, ֆաշիստներ՝ ը, ֆաշիստներ՝ ը...- և հանկարծ ինքն էլ չզգալով, թե ինչպես՝ հայիոյեց իր անհավատ պապերի նման:- Դուք մարդ չեք, է՛, մարդ, ես ձեր մարդ ասողի մերը...

Հանդապահներն ապշած կանգ առան: Նայեցին այդ մի մատ չոր ոսկոր երեխային ու հանկարծ սկսեցին ծիծաղել.

- Որ էդքան ուժեղ էք, գնացեք Հիտլերի դեմ կովեք, է՛,- ասում էր Յուլակը՝ անգորության արցունքներից խեղդվելով: - Անտեր մարդիկ էք գտել, չէ՞... Բա իմ հերը որ էստեղ լիներ, քա իմ ախպերը որ էստեղ լիներ, դուք կպրծնեի՞ք...

Հանդապահներից մեկը դադարեց ծիծաղելուց, մռայլվեց միանգամից, ուժեղ մտրակեց ձիուն ու սլացավ սարն ի վեր, չարացած բղավելով.

- Տո հարամ լինի էն հացը, որ մենք ենք ուտում: Հարամ...

Իսկ մյուսը, շարունակելով ծիծաղկոտ աչքերով Յուլակին նայել, ձայն տվեց նրա մորը.

- Այ աղչի, թուլիդ կապը քաշի գնա, մեղքի տակ չընկնես...

Ու Յուլակի մայրն ասաց.

- Դուք արդեն մեղքի մեջ ոտից գլուխ թաթախված էք, որովհետև խոտն ի՞նչ է սովից մեռնող մարդկանց խոտ էլ չէք թողնում ուտեն, ու որովհետև էս մի մատ անմեղ երեխային էլ հայիոյել սովորեցրիք:

Նախագահ Յուլակը տնքաց.

- Ա՛յ Սուրեն ջան, այ հոգուդ մեռնեմ, որ էդպես լինի, մեր ամբողջ աշխարհի անուն-ազգանունները պիտի գրես քարերի վրա: Չհաշված մի քանի հոգու: - Նա հանդապահներին միանգամից ջնջեց այդ ցուցակից:

- Գոնե Վարսենիկ աքոր անունը գրեմ, հը՞,- աղերսեց քարտաշ Սուրենը:

- Այ տղա, դու հո խելքդ չէ՞ս թոցրել, ապրող մարդու անունը ո՞նց ես ուզում գրել:

- Որովհետև նրա ապրելը հերոսություն է,- ասաց քարտաշ Սուրենը:- Որովհետև այդպես ապրելը ամենամեծ հերոսությունն է: Եվ ամենամեծ զոհողությունը: Որովհետև ոչ մեկն էնքան չի տուժել պատերազմից, ինչքան Վարսենիկ աքիրը:

Նախագահ Յուլակը շատ էր հոգնած: Ու քաղցած էր: Առավոտից ոչինչ չէր կերել և երեք խորհրդակցություն էր անցկացրել անասնապահական ֆերմայում, ծխախոտի չորանոցում և այգիներում: Ու երկու ժամ էլ համոզել էր գյուղատնտեսության մինիստրության վերահսկիչ-վերստուգիչ հանձնաժողովի մի պատանի աշխատողի, որ կոլտնտեսության ունեցվածքի տերը ընդհանուր ժողովն է և ընդհանուր ժողովն էլ կարող է տնօրինել իր միջոցները:

Նախագահ Յուլակը շատ էր հոգնած ու այդ պատճառով էլ բռնկվեց:

- Լսիր, դու ինձանից ի՞նչ ես ուզում: Կյանքս կերար, էլի: Դու ինձ պիտի բացատրես, թե ով է Վարսենիկ աքիրը: Իմ մերը մինչև հիմա նրա կարած շորերն է հագնում: Եվ ես կյանքում առաջին անգամ կուշտ նրա ձեռքից եմ հաց կերել: Հա, գիտեմ : Բայց էդպիսի կարգ չկա, օրենք չկա: Շատ եմ ուզում, մի առանձին քար տաշի նրա ընտանիքի համար: Ձեռքդ բռնե՛լ եմ...

- Կարծում ես չեմ տաշի<sup>օ</sup>, - հեզնեց քարտաշ Սուրենը: - Ես, եթե կուզես իմանալ, որոշ մարդկանց նման անաղուհաց չեմ և մինչև վերջին շունչս էլ պիտի հիշեմ, որ իմ ես կյանքով նրան եմ պարտական: Հա, հա, եթե Վարսենիկ աքիրը չլիներ, ես չգիտեմ, թե որ մանկատանը կմեծանայի, որտեղ կլինեի կամ չէի լինի հիմա, որովհետև Վարսենիկ աքիրը շրջկենտրոնում է ինձ խլել խելագարված մորս ձեռքից ու գյուղ հետ բերել: Բա<sup>օ</sup>, ընկեր Ցոլակ: Ու քանի որ դու էդքանը չես հասկանում, ինձ քո լրացուցիչ պանիրն ու կարագը պետք չեն, ա՛ն... Ու տեղը մի ավտո տուր ու երկու օր արձակուրդ, որ գնամ Քարափի գյուղը, մի լավ քար կտրեմ բերեմ:

Երկու օր հետո քարտաշ Սուրենը բազալտի մի հսկայական ժայռաբեկոր բերեց Քարափի գլխից: Բերեց, իջեցրեց իր տան բակում, ծածկ սարքեց, որ արևից պաշտպանվի, մուրճն ու բրիչը ձեռքն առավ ու մտավ ծածկի տակ: Բայց որ կողմից էլ մոտեցավ, ձեռքը չգնաց հարթելու ու տաշելու: Բնական, չքնաղ քար էր: Ու որոշեց այդպես էլ թողնել: Ու մտքում ասաց, որ ավելի համապատասխան քար անհնարին էր գտնել Վարսենիկ աքոր համար, որովհետև Վարսենիկ աքիրն էլ այդ քարի նման ազնիվ ու բնական է ու այդ լեռնակտորի նման լեռ համբերություն ունի: Ու էլ ձեռք չտվեց: Միայն մեջտեղում, հենց քարի սրտի վրա հարթեցրեց մակերեսը ու առաջինը վրան փորագրեց. «Հայրենական Մեծ պատերազմի զոհերը մի հայ ընտանիքում»: Տակը գիծ քաշեց ու անցավ հաջորդ տողին՝ «Սանասար Ալեքսանյան»: Ու գրեց ծննդյան ու մահվան թվերը՝ «1890-1941»:

## ՍԱՆԱՍԱՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հենց որ Սանասարը դարձավ տասնչորս տարեկան, պապը՝ Տաուշ գյուղի քահանա տեր Մեսրոպը, իր մոտ կանչեց թոռանը, համբուրեց գույգ այտերը և ասաց.

- Որդյակ իմ: Քո անհոգ ապրելու տարիները վերջացան, թեև աստված թող ների ինձ, որ ես անհոգ եմ համարում քո որբ ապրած տարիները: Բայց վկա է նույն աստված, որ ես ինչ կարողացել, արել եմ քեզ համար: Եվ պապ եմ եղել, և հայր եմ եղել, և մայր: Եվ ինչ ունեցել եմ, տվել եմ քեզ, ինչ իմացել եմ, տվել եմ քեզ: Բայց եթե իմ իմացածն ինձ հերիք էր՝ ապրելու և մարդկանց հավատի բերելու համար, այսօր նույն բանն անելու համար քոնը քիչ է: Դու պետք է սովորես: Ասա, ի՞նչ ես ուզում դառնալ դու, որ ես քո և քո հանգուցյալ ծնողների նկատմամբ կատարեմ իմ վերջին պարտքը: Ի՞նչ ես ուզում դառնալ դու, Սանասար զավակս:

Զրույցը տեղի էր ունենում եկեղեցու աղոթարանում: Ծխակալած պատերից պապին ու թոռանն էին նայում ճաքճքված, գունատ սրբապատկերները: Սանասարի ողջ կյանքն այդ եկեղեցու պատերի մեջ էր անցել և նա հարյուր-հարյուր անգամ տեսել էր, թե ինչպես են վշտի բեռան տակ կոացած տղամարդիկ ու կանայք ծնկաչոք մտել հավատի այդ մամուռակալած տաճարը և այդտեղից դուրս եկել մաքրված ու ազնվացած, հույսի լույս աչքերի մեջ:

Եվ Սանասարն ասաց.

Քեզ նման քահանա եմ ուզում դառնալ, պապ:

Տեր Մեսրոպը հուզվեց: Նա ավելի լավ էր ճանաչում թոռանը, քան թոռն ինքն իրեն: Նա գիտեր, որ Սանասարի կոչումը եկեղեցին չէ, որ նա «հայր մերն» արտասանելիս անգամ եկեղեցու նեղիկ պատուհանից երևացող կանաչ հանդերին է նայում կարոտած աչքերով: Նա

գիտեր, որ թոռն ավելի շատ պապի սիրտն էր ուզում առնել, ու թեև այս վայրկյանին գուցե իսկապես անկեղծ է, բայց հետո շատ է զղջալու իր անկեղծության համար: Նա գիտեր նաև, թե որքան դժվար բան է անհավատների մեջ հավատի սերմեր տարածելը, երբ ինքդ էլ մի կարգին հավատացյալ չես, և որովհետև շատ անգամ էր առիթ ունեցել խղճալու իրեն, խղճաց նաև թոռանը:

- Չէ,- ասաց տեր-Մեսրոպը,- չէ, ես համաձայն չեմ:

- Բա դու ի՞նչ ես ուզում, որ ես դառնամ, պապ,- զարմացավ Սանասարը:

-Մեր գյուղացիները,-ասաց տեր-Մեսրոպը,- և ընդհանրապես տառուշցիները ընդամենը մի հավատ ունեն՝ հողը: Եվ եթե երբեմն-երբեմն երկնքին են նայում, տիրոջ համար չէ, որոյակ իմ, այլ դարձյալ հողի:Նայում են տեսնեն՝ անձրև կգա՞ թե չէ: Ու եթե այդպես է, դու եկեղեցում անելիք չունես: Գնա ծառայի նրանց հավատին՝ հողին: Դա ևս աստվածահաճո գործ է: Ես քեղ կուղարկեմ Թիֆլիս, անտառային դպրոց: Որ վերադառնաս ու ես չլինեմ, քանզի մեր կյանքն էլ, մահն էլ տիրոջ ձեռքին է,- նկատելով թոռան բողոքի շարժումը, ավելացրեց նա,- մի ծառ կտանկես իմ գերեզմանի վրա, լորենի գարնանը հենց որ ծաղկեց, իմացիր, որ դա իմ օրհնությունն է քեզ, զավակս:

- Թող քո կամքը լինի, պապ:

Սանասարը ծնկի իջավ ու համբուրեց պապի խորշոմապատ ձեռքը, որից մեղրամոմի ու խնկի հոտ էր գալիս...

- Աստված քեզ օգնական,- խաչակնքեց ու հանկարծ փլվեց, լաց եղավ տեր- Մեսրոպը:

Երբ չորս տարի հետո Սանասար Ալեքսանյանը հայրենի տուն վերադարձավ, ծեր քահանան այլևս չկար: Տղան չորս փոս փորեց եկեղեցու բակի մի անկյունում սարքված կարմիր տուֆե համեստ տապանաքարի շուրջը, լորենու չորս շիվ տնկեց, որ բերել էր հետը հարթավայրից, մի լավ ջրեց, հետո մտավ եկեղեցի, տեր-Մեսրոպի խցից, իբրև ժառանգություն, վերցրեց նրա հպարտությունն ու հարստությունը հանդիսացող մի կապ հին կաշեկազմ գրքեր, որոնց մեջ էին նաև 16-րդ դարում նշանավոր Խորենավանքում արտագրված «Նարեկը» և Թիֆլիսում հրատարակված Միքայել Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը և երկաթե կախովի կողպեքով փակեց եկեղեցու դուռը:

Նոր քահանա դեռ չէին ընտրել: Խառնակ ժամանակներ էին, և մարդիկ մոռացել էին աստծուն:

Սանասար Ալեքսանյանը հիմնավորապես փակեց նաև տեր Մեսրոպի տան դուռը և գնաց Տառուշից ոչ այնքան հեռու գտնվող Հոնուտ գյուղը, որտեղ ամուսնացած քույրն էր ապրում: Ամբողջ գյուղում զարմանալիորեն ոչ մի այգի չկար, եթե հաշվի չառնվեին ձորում իրար խառնված հոնի վայրի ծառերը, որոնցից էլ գյուղն իր անունն էր ստացել, և մի քանի վայրի դարավոր տանձենիներ: Եվ Սանասար Ալեքսանյանը որոշեց այգիներ աճեցնել Հոնուտում, սկսելով քրոջ տնամերձ հողամասից: Նախ իր ստացած գիտելիքների համաձայն մշակեց պարարտացրեց հողը՝ օգտագործելով գոմաղբը: Եվ դա էլ հենց առաջին ծաղրական բացականչությունների հիմքը դարձավ:

- Տղա ջան, բա քո ծառի պտուղից թրիքի հոտ չի գա՞, - խնդանդում էին ծերունիները:

- Բա որ էստեղ ծառ բուսներ, մեր պապերը անխելք էին, որ այգիները գյուղից հեռու, Գետափին են գցել,- տարակուսում էին նրա հասակակիցները:

Բայց Սանասարը չէր վիճում: Նա գիտեր, որ խոսելով անհնար է համոզել մարդկանց, դրա համար էլ լուռ ու համբերատար մշակում էր այգին: Իսկ մի քանի տարի անց, երբ փարթամ ծաղկեցին, ապա և պտուղ տվեցին նրա տնկած խնձորի ու տանձի, ծիրանի ու սև սալորի ծառերը, երբ ծառերի սաղարթներն ի վեր մագլցեցին խաղողի որթերը, գյուղն այս անգամ ուղիղ երկու բանակի բաժանվեց: Մի բանակն ասում էր.

- Էստեղ սատանի մատը խառն ա:

Մյուս բանակն էլ թե՛

- Ոնց կարող ա պատահի, տերտերի թոռ ա:

Այդ ժամանակ Սանասար Ալեքսանյանը բոլորին այգի հրավիրեց, հյուրասիրեց իր ունեցած պտուղներով ու ասաց.

- Ուզում եք սատանա համարեք, ուզում եք աստված, բայց դրա իսկական անունը գիտությունն է: Իմ պապի խորհրդով ես սովորեցի այս գործը, որ այգիներ աճեցնեմ Տաուշի շրջանում, որովհետև մեր ժողովրդին պահողը այգեգործությունն է: Եվ հանուն ձեզ, խնդրում եմ, օգնեք ինձ: Իմ հանգուցյալ պապը որոշ միջոցներ է թողել ինձ, բայց դրանք քիչ են ամբողջ գործն անելու համար: Օգնեք ինձ, որ գնամ դեղամիջոցներ ու տնկիներ բերեմ ու այգիներ գցեմ ձեզ համար գյուղում ու Գետափի հողերում: Ծերացել են Գետափի այգիները, նորերը պետք է գցել:

Գյուղը հավատաց Սանասար Ալեքսանյանին, ավելի ճիշտ՝ համոզվեց, որ եթե նրա աճեցրած պտուղների մեջ նույնիսկ սատանի մատը խառն է, ապա դա միայն որակն է լավացրել և նրան գործուղեց Թիֆլիս:

Բայց ով չէ՛ Սանասարն ինքը բոլորից լավ գիտեր, որ անհամբեր Թիֆլիս էր մղվում ոչ միայն տնկիներ ու դեղանյութ բերելու, այլև նվերներ առնելու Ասլան բեկի կրտսեր աղջկա համար:

Նրան տեսավ Մեծ աղբյուրի մոտ: Հերիքնազ քրոջ հետ գորգերն էր լվանում աղբյուրի նովի մեջ, երբ փոքրիկ մի աղջիկ եկավ կուժն ուսին՝ ջուր տանելու: Սանասարը սկզբում իր սրտի ուժեղացած զարկերը լսեց և նոր միայն տեսավ աղջկան: Եղնիկ էր, խոշոր, սև աչքերով, որ մի պահ նայեց, հմայեց պատանուն ու անհետացավ:

- Հերիք, ո՞վ էր այդ աղջիկը,- հարցրեց Սանասարը:

- Ասլան բեկի աղջիկն է,- ասաց Հերիքնազը:

- Սիրտս կպավ,- ասաց Սանասարը:



- Փոքրիկ է, ա՛յ տղա,- ծիծաղեց Հերիքնազը:- Ասլան բեկը մեծ աղջիկներ էլ ունի՝ մեկը մեկից սիրուն:

- Ես սրան եմ ուզում,- ասաց Սանասարը:

- Փոքրիկ է, այ տղա,- կրկնեց Հերիքնազը:

- Կսպասեմ՝ կմեծանա:

Նա այգիների հետ գործ ուներ ու սովոր էր համբերել ու սպասել: Եվ, այնուամենայնիվ, որոշեցին նշան դնել: Հերիքնազն ու էլի երեք-չորս կանայք այցելեցին Ասլան ապորը, կանչեցին Վարսենիկին, ծաղկավոր մետաքսե շալ գցեցին ուսերին, կոնֆետներ լցրեցին գոգը, գաթա ու հավ էին բերել, նստեցին կերան ու երբ գնացին, Ասլան բեկը ասաց աղջկան

- Դու արդեն նշանված ես Սանասարի հետ:

- Ինչի՞,- զարմացավ Վարսենիկը:

Ու բոլորը ծիծաղեցին:

Չորս տարի տևեց նշանը: Չորս տարվա մեջ Վարսենիկի ծնողները էլ ոչինչ չէին առնում իրենց աղջկա համար: Սանասարն էր ուղարկում ամեն ինչ՝ էլ կոշիկ, էլ շոր, էլ զարդեր: Երբ Հերիքնազը ասում էր.

- Ինչի՞ ես էդքան բան ուղարկում, այ տղա...

- Ոչինչ,- ասում էր Սանասարը.- Թող ուրախանա ու մեծանա:

Այդ չորս տարիների ընթացքում Սանասարը ոչ մի անգամ չկարողացավ խոսեցնել Վարսենիկին: Անընդհատ դարանում էր նրան աղբյուրի մոտ, կալի կողքին կամ սարում, այցելում էր Ասլան բեկին, միննույն է, բռնել չէր կարողանում աղջկան, ամաչում էր Վարսենիկից ու փախչում էր:

Միայն մի օր բռնեց: Հերիքնազը խաբել, թե հիվանդ է, ավելուկ էր ուզել Վարսենիկից, ու երբ աղջիկը միամիտ-միամիտ տուն մտավ, Հերիքնազը դուրս եկավ տնից:

- Մոտիկ արի, ա՛յ աղջի,- ասաց Սանասարը:

Վարսենիկը չմոտեցավ:

- Ախր դու իմ նշանածն ես, ինչի՞ չես խոսում ինձ հետ:

Վարսենիկը չպատասխանեց:

- Լսել եմ, որ վարդի գույնի շալ ես ուզում,ճիշտ է՞:

- Չէ,- ասաց Վարսենիկը,- քեզանից չեմ ուզում: Սաղ լինի իմ ախպերը, որ ուզենամ, նամակ կգրեմ Բաքու՝ կուղարկի:

Նրա հագին մի կապույտ գույնի չթի շոր կար, մի քիչ պատռվել էր կողքը: Սանասարը մոտեցավ, մատը մտցրեց բացվածքի մեջ, քաշեց, ավելի պատռեց շորը:

- Ախպորդ առածն էս ա՞,- հարցրեց նա:

- Մի արա, լաց կլինեմ,- ասաց Վարսենիկը:

- Լաց մի լինի,- ծիծաղեց Սանասարը, գնա,- բարձրացրեց աղջկա փեշը ու կոնֆետներ լցրեց մեջը:- Գնա...

Ու Վարսենիկը դուրս թռավ տնից: Դուրս թռավ, բայց չգիտեր կոնֆետներն ինչ անի: Ափսոսում էր թափել: Վազելով տուն հասավ, տեսավ մայրը նստած է ճախարակի տակ, փեշը բաց թողեց, կոնֆետները լցրեց նանի փեշը ու փախավ: Ու նանը ձայն տվեց:

- Այ քո գլուխը հողեմ, էդ ո՞ր տեղից էս գալիս... Էդ ո՞վ է քեզ կոնֆետ տվել...

Բայց դե էլ ո՞վ էր նանին պատասխանողը:

Հարսանիքն արեցին աշնանը: Ուշ աշուն էր, ձյունով պատած էր ամեն ինչ: Հավաքվեցին գյուղի նորահարսերն ու աղջիկները, սանրեցին Վարսենիկի մազերը, ուլունքներով թագ դրեցին գլխին, ծածկեցին խոտով: Դեղ-գուռնայի ձայնը աշխարհը բռնեց: Երկու օր ու գիշեր տևեց հարսանիքը՝ ըստ բոլոր ծեսերի ու կարգի: Սկզբում սինին սեղանին դրեցին, և հարսանիքի մասնակիցները արծաթե դրամներ նետեցին սինու մեջ: Ով մոտենում էր սինուն, թամադան ազդարարում էր սրահով մեկ:

- Շեն կենա Սարգիս բեկը, տվավ մի մանեթ:

- Շեն կենա Սոսի բեկը, հիսուն կոպեկ բախշեց:

Եվ երկու օր ու գիշեր հոսում էր կարմիր գինին ու քեֆ էին անում Հոնուտ գյուղի անհամար բեկերը:

Գյուղում երևի ընդամենը մի քանի հոգի կլինեին, որ չունեին բեկի կոչում: Մնացածը բեկեր էին: Ըստ որում իրենց տարօրինակություններով նշանավոր հոնուտցիների բեկերն էլ էին տարօրինակ: Նրանց կոչումը ունեցվածքի ու հարստության հետ կապված չէր: Սովորական հողագործներ ու խաշնարածներ էին նրանք և բարձր կոչումի համար պարտական էին միայն ու միայն իրենց պապերին: Ռուս-պարսկական պատերազմների ժամանակ այդ պապերը անձնագոհության և հերոսության օրինակ էին հանդիսացել, սխրանքներ գործել՝ կասեցնելով դեպի Թիֆլիս մղվող պարսկական բանակի առաջխաղացումը և անառիկ պահելով Տաուշի նահանգը: Եվ ռուսական կայսրը նրանց տվել էր ազնվականի, այսինքն՝ բեկի կոչում, ազատել տերունական հարկերից, այդ ամենը վավերացնելով եղջերվի մորթուց պատրաստված մագաղաթի վրա:

Եվ ահա իրենց հերոս պապերի հաշվին քեֆ էին անում Հոնուտ գյուղի հողագործ ու խաշնարած բեկ-ազնվականները, որոնց կողքին ազնվականի նմանը թերևս միայն նորափեսան էր, Սանասար Ալեքսանյանը՝ իր եվրոպական կոստյումով, վերարկուով և կաշվե երկարաճիտ կոշիկներով, ժամացույցի ոսկե շղթան՝ ծոցագրպանից կախ:

Հարսանիքի ողջ ընթացքում Վարսենիկը շատ էր ուզում նայել փեսացուին, բայց ամաչում էր և անահամբերությամբ սպասում էր, թե երբ պիտի կենացներն ավարտվեն, որպեսզի ինքը կարողանա նայել Սանասարի ծիծաղկուն, սև աչքերին, փայլուն կոստյումին ու երկարաճիտ կոշիկներին... Բայց երբ հարսնեղբայրը մի թևից և փեսան մյուս թևից բռնած ձիակառքի վրա բարձրացրեցին նրան, Վարսենիկը ետ նայեց իրենց հողաշեն տանն ու լաց եղավ, նայեց խեղճացած, կծկված Ասլան բեկին ու լաց եղավ: Եվ Ասլան ապերն ու նանն էլ լաց եղան:

Երևի հենց այստեղից էլ սկսվեց:

Իսկ Տաուշում, տեր Մեսրոպի քարաշեն տանը, որն անթառամ ծաղիկների անուշ հոտով էր լցված, Վարսենիկին էին սպասում աշխարհի բոլոր անակնկալները, բոլոր հեքիաթները: Ասլան բեկի կրտսեր դուստրը կյանքում առաջին անգամ էր տեսնում փայլփլուն նիկելապատ մահճակալներ՝ մետաքսե փափուկ վերմակներով ու ծաղկազարդ բարձերով ծածկված: Եվ երբ Սանասարը քնքշորեն նրա ուսը գրկած բացատրեց, որ ահա այդ մահճակալին պետք է քնի Վարսենիկը, աղջիկը ետ քաշվեց երկյուղով:

- Վախում եմ, վեր կընկնեմ,- մրմնջաց նա:

Նա ափսոսում էր գորգերի վրայով քայլել և հողե հատակ էր որոնում անկյուններում, զմայլված նայում էր ուռած-փքված պղնձե պսպղուն ինքնաեռին, որը հայելու նման անդրադարձնում էր աղջկա երջանիկ աչքերի փայլը, մատներով շոյում էր հայելապատ հանդերձապահարանի ողորկ կողերը, ծիծաղելով հետևում էր թագի ուլունքների շողշողուն խաղին՝ լվացարանի հայելու մեջ, որի վերևի նկարում փոքրիկ բաղիկները ետ ծալած կարմիր տոտիկներով հանդարտ սահում էին կապուտակ ջրերի վրա, իսկ ներքևում անուշահոտ օձառներ էին դրված ու անուշահոտ սրվակներ, որոնցից ծաղիկների արբեցնող բույր էր գալիս: Հետո՝ Վարսենիկը տեսավ ու նետվեց դեպի «Զինգեր» ոտքի կարի մեքենան, որից ընդամենը մի հատ կար Հոնուտում, Սոսի բեկի տանը, չդիմացավ ու հարցրեց.

- Էս իմն է՞:

- Քոնն է, քոնը,- երջանիկ ծիծաղեց Սանասարը,- կարել սովորի, որ սիրուն-սիրուն շորեր հագցնես մեր երեխաներին:

Իսկ երբ տղան մոտեցավ անկյունում դրված արտասովոր ինչ-որ սարքի ու պտտեց փայլուն, սպիտակ բռնակը, Վարսենիկին թվաց, թե խելագարվում է, որովհետև հանկարծ տունը լցվեց օտար ձայներով, ինչ-որ տարօրինակ գործիքների տարօրինակ ու շատ դուրեկան նվագով: Նա նայեց չորս կողմը, բայց ոչ մի նվագողի չտեսավ: Նույնիսկ պատուհանից դուրս նայեց, բայց այնտեղ էլ մութ էր արդեն, և հարցրեց վախեցած.

- Էս ի՞նչ բան է, քոռանում ես:

- Գրամոֆոն է, գրամոֆոն,- գվարթ ծիծաղեց Սանասարը:
- Բա նվագողները որտե՞ղ են,- աչքը գործիքից չկտրելով, հարցրեց Վարսենիկը:
- Դրա մեջ են:
- Ո՞նց թե: Բա ոնց են էդտեղ տեղավորվում,- չհավատաց, կասկածեց Վարսենիկը:
- Իրենք չկան, ձայներն են դրա մեջ, ձայները:

Եվ Վարսենիկը ասաց ուրախությունից շողացող աչքերով.

- Ես էս տնից էլ ոչ մի տեղ չեմ գնա: Ինձ դուրս չանես հանկարծ, Սանասար ջան...

Հետո էլ ասաց.

- Սանասար ջան, բա ի՞նչ անեմ, որ համ էս տունը լինի, համ էլ նանի, ապոր կողքին լինեմ:

Եվ Սանասարը գրկեց նրա բարակ մեջքը...

- Քարերը մեկ-մեկ տեղափոխելով էս տունը կտանեմ Հոնուտ: Թող քո ասածը լինի, Վարսենիկ ջան...

Այդ ի՞նչ օրեր էին, այդ ի՞նչ երջանկություն էր...

Ինչպես անվերապահորեն կաչում, ամրանում, ծաղիկ էին տալիս երիտասարդ այգեգործի տնկած շիվերը, այնպես էլ ծաղկեց ու փթթեց Վարսենիկի և Սանասարի սերը, ծաղկեց ու պտուղներ տվեց առատ-առատ: Իրար ետևից աշխարհ եկան և տունը լցրեցին Լևոնը, Գրիգորը. Շամամը, տունը լցրեցին աղմուկով ու երջանկությամբ:

Բարձրացան, այգիներ դարձան Սանասար Ալեքսանյանի տնկած հազարավոր ծառերը՝ Հոնուտում և Գետափի տարածքում: Հոնուտցիները վայելում էին քաղցրահամ պտուղներն ու օրհնում դրանց ստեղծողին և այնպիսի առատ բերք էին ստանում, որ ստիպված մտածում էին մի մասը վաճառելու մասին: Ստիպված, որովհետև դեռ ոչ մեկն այն ժամանակներում չէր կարող որևէ փաստ բերել, թե տաուշեցին շուկայում ապրանք էր վաճառում: Նվիրում էին, պարտքով տալիս էին, փոխանակում էին հարևան շուկաներում այլևայլ ապրանքների հետ, բայց վաճառել՝ բերք: Հիմնականում անհավատ տաուշեցիներն այդ հարցում զարմանալիորեն վախենում էին աստծուց և ասում էին համոզված.

- Աստված հեռու տանի: Փորձված բան է: Որ կաթը ծախեցիր՝ կովը կցամաքի: Որ պտուղը ծախեցիր՝ կչորանա ծառը:

Բայց Սանասարը հեռու էր սնահավատությունից, և երբ հարևան երկաթուղային կայարանում բնակվող մի ծանոթ աղբբեջանցի նրան առաջարկեց աշխատել իր միջնորդ գրասենյակում և զբաղվել տնկիների կապալային առևտրով, Սանասարը համաձայնեց: Գրասենյակը լայն կապեր ուներ մրգագուրկ շրջանների հետ և շատ շուտով ծաղկում ապրեց, հատկապես՝ շնորհիվ Սանասարի եռանդուն գործունեության, որը այգիներ էր գցում այնտեղ,

որտեղ խնդրում էին և որի համար վճարում էին գրասենյակից: Գործը լավ էր, նա նույնիսկ մի տուն վարձեց կայարանում և Վարսենիկին ու երեխաներին բերեց մոտը: Բայց քանի որ ամիսներով թափառում էր շրջանից-շրջան, շատ էր հոգնում և կարոտում սնեցիներին:

- Մի շաբաթ որ ձեզ չեմ տեսնում, գժվում եմ,- ասում էր նա:

Եվ ոչ թե տխրեց, այլ ուրախացավ, երբ միջնորդ գրասենյակը փակեցին:

- Կոլխոզներ են կազմակերպվում, Վարսենիկ ջան,- բացատրում էր նա կնոջը:- Պատկերացնո՞ւմ ես, այգիները կմիացվեն իրար, մի տեր կունենան: Գիտե՞ս ինչ գործեր կարելի է անել: Էլ ամեն մեկի քմահաճույքով չեմ գնա, կտնկենք միայն այնպիսի ծառեր, որոնք արտակարգ բերք են տալիս, կտնկենք թափով, պլանավորելով, տեսակավորելով... Շենց այսօր կգնամ Հոնուտ, կասեմ որ ինձ էլ կոլխոզ ընդունեն ու կգամ ձեր ետևից:

Վերադարձավ նույն գիշեր զարմացած ու վախեցած:

- Ոչինչ չեմ հասկանում,- ասաց,- հոնուտցիները ժողով են արել ու որոշել են մեզ աքսորել գյուղից:

- Ինչի՞ համար,- ձեռքերը ծնկներին խփեց Վարսենիկը:

- Չեմ հասկանում,- կրկնեց Սանասարը:- Ախր ես ի՞նչ եմ արել, աշխատող մարդ եմ, մասնագետ մարդ եմ: Այգիներ եմ գցել: Ոչ մի վատ բան չեմ արել, Վարսենիկ ջան, իշխանության դեմ էլ չեմ խոսել, որովհետև սա իմ սրտի ուզած իշխանությունն է: Ինչի՞ են ինձ օտար համարում:

Ողջ գիշեր չքնեցին: Նայում էին երեխաներին ու լաց էին լինում:

Իսկ լուսաբացին կայարան եկավ Ասլան ախպերը: Եկավ ու բարի լույսի հետ բարի լուր բերեց:

- Գիշերը նորից ժողով արեցին,- ասաց,- ու որոշեցին չաքսորել ձեզ: Ասացին, որ սխալմունք է եղել:

Հո չուրախացա՛ն...

- Թե՛յ գցի, Վարսենիկ ջան,- իրար խառնվեց Սանասարը:- Ախր ես ասում էի չե՞, որ թյուրիմացություն կլինի: Ես իմ գիտելիքներով էնքան պետք եմ իշխանությանը: Եթե ինձ որևէ մեկը ձեռք տա, ուրեմն անձնական թշնամի է, որովհետև...

Նա չկարողացավ ավարտել իր միտքը: Ներս մտան երկու աղբբեջանցի միլիցիոներ, ներկայացրին արտոնագիր, խուզարկեցին ամբողջ տունը, բայց երևի չգտան, ինչ փնտրում էին, որովհետև իրար նայեցին զարմացած ու հիասթափված, իսկ մեկը, որ կոչումով բարձր էր մյուսից, նրան իր մայրենի լեզվով ասաց.

- Աննամուս մարդու բռնած գործ է:

Եվ, այնուամենայնիվ, ձերբակալեցին Սանասարին և սուգ ու շիվան բարձրացրած երեխաների արտասովալից աչքերի տակ տարան կալանատուն: Երբ դուրս էին տանում դռնից, Սանասարը շրջվեց մի վայրկյան, Վարսենիկին նայեց ու ասաց.

- Դու միշտ իմացիր, որ ես անմեղ եմ, կնիկ ջան, և որ սա թյուրիմացություն է: Աշխարհը հո մութ չէ: Կքննեն, կհամոզվեն, բաց կթողնեն:

Բայց աշխարհը ընդհանրապես ինչ-որ չափով մթնել էր երևի կամ մթնել էր Սանասար Ալեքսանյանի համար: Նրան այլևս բաց չթողեցին: Երեք օր հետո մի ծանոթ ադրբեջանցի եկավ Վարսենիկի մոտ.

- Փիս խաբար եմ բերել, բաջի,- ասաց նա:- Սանասար եղբորը տանում են: Ես որ հիմա այգի ունեմ, Սանասար եղբորն եմ պարտական: Բայց նրան ոչնչով օգնել չեմ կարող, թե չէ կզրկվեմ այգուց էլ, երեխաներից էլ: Իմ հոգին թեթևացնելու համար միայն մի բան կարող եմ անել: Գիշերը արի բանտի մոտ, պահակը ես եմ: Ներս կթողնեմ, կխոսես հետը: Ուրիշ բան չեմ կարող անել, բաջի...

Եվ Ասլան բեկի կրտսեր դուստրը, որ ճրագավառից հետո՝ սպանեիր, տնից դուրս չէր գա, մթին գիշերով, անձրևաջրերի լճակների մեջ գայթեղով, ընկնելով ու ելնելով, ոտքից գլուխ ցեխակոլով ու թրջված՝ հասավ բանտ:

- Էս ի՞նչ սև բախտի հասանք, Սանասար...

- Մի վախենա,- ասաց Սանասարը:- Կտեսնես, ամեն ինչ լավ կլինի: Միայն համբերել է պետք, Վարսենիկ ջան: Նրանք կհամոզվեն, որ ես անմեղ եմ:

- Բա մինչև պարզեն, ես երեխաներին ո՞նց պահեմ, Սանասար:

- Տանը ինչ կա՝ ծախիր ու պահիր երեխաներին: Էսպես հո չի մնա: Կստուգեն, բաց կթողնեն: Խառնակ ժամանակներ են, կնիկ ջան... չավատա:

- Բա հիմա մենք ի՞նչ անենք, որտե՞ղ ապրենք:

- Միայն ու միայն Հոնուտում: Ես իմ հորեղբոր տղաներին տեղեկացրել եմ, կգան ձեր ետևից: Գյուղ հասար թե չէ, դիմում տուր ու կոլխոզ ընդունվիր: Էնպես աշխատի, որ նրանք փոշմանեն իրենց արածի համար: Եթե պետք լինի ինձնից էլ հրաժարվիր, Վարսենիկ:

- Քեզնի՞ց,- ապշեց, լաց եղավ Վարսենիկը:- Ես քեզնից հրաժարվե՞մ...

- Ձևի համար,- ասաց Սանասարը:- Մեկ է, շուտով կստուգեն ու բաց կթողնեն ինձ: Ձևի համար...

- Ոչ ձևի համար, ոչ էլ առանց ձևի, ես քեզանից մինչև մահ-գերեզման չեմ հրաժարվի, Սանասար,- ասաց Վարսենիկը:- Կյանքից կհրաժարվեմ, քեզնից չեմ հրաժարվի:

- Մենք երեխաներ ունենք,- ասաց Սանասարը:

- Դու ինձ հասցեդ կուղարկես,- ասաց Վարսենիկը:- Երեխաներին էլ կվերցնեմ ու կգամ քո ետևից, որտեղ էլ որ լինես դու:

Սանասարը առարկեց.

- Մխալ ես,- ասաց նա:- Երեխաներն իրենց հողում պիտի մեծանան:

- Էն հողում, որտեղից դուրս են անում իրենց հո՞րը,- հևաց Վարսենիկը:

- Հողն ի՞նչ մեղավոր է: Մարդիկ են մեղավոր, Վարսենիկ ջան: Հողն ի՞նչ մեղավոր է: Աշխարհում ոչ մի բան թաքուն չի մնում: Ու դա էլ կպարզվի: Ես լինեմ, չլինեմ, դու կիմանաս, թե ովքեր են որոշել ինձ աքսորել, այնինչ ես հիմա էլ գիտեմ, թե ովքեր են դրանք...

- Ովքե՞ր են:

- Անունները չգիտեմ, մեղքի տակ չեմ ուզում ընկնել, բայց դու կհամոզվես, որ դրանք այն մարդիկ են, որ այգիներ չունեն: Մի երկու հոգի, որոնց ես չկարողացա սովորեցնել աշխարհի ամենասուրբ ու ամենապարզ բանը. Միրել հողը ու ծառ տնկել: Իմ թշնամիները միայն դրանք կլինեն և ուրիշ ոչ ոք: Ուրիշ ոչ ոք:

Ադրբեջանցի պահակը անհանգիստ շարժվեց անկյունում, և Սանասարը ասաց.

- Դե մոտ արի, վերջին անգամ պաչեմ քեզ ու գնա...

- Վա՛յ, ամոթ է,- ետ քաշվեց Վարսենիկը:

Ադրբեջանցի պահակը ինչ-որ տխուրու ծորուն երգ դնդնալով իբր հենց այնպես՝ պարապությունից շրջվեց դեպի պատն ու սկսեց դուրս նայել լուսամուտից, որի ետևում երկինքն սկսում էր գունատվել:

- Հասկանում է մեր լեզուն,- ավելի ետ քաշվեց Վարսենիկը:- Ես գնամ...

- Առանց պաչելու՞,- տխուր հարցրեց Սանասարը:

- Հա,- ասաց Վարսենիկը:- Որ պաչես, լաց կլինեմ, կթուլանամ: Այնինչ ես երեխա պիտի պահեմ...

Երեք հորեղբորորդի ուներ Սանասարը, որոնք եզներ ու ձիեր ունեին և սայլեր, բայց նրանցից ոչ մեկը չեկավ Վարսենիկի ու երեխաների ետևից: Տարբեր լուրեր տեղ հասան: Մեկն ասում էր, թե գյուղի նոր ղեկավարությունը չի թողնում, մյուսն էլ, թե՛ տղաներն են վախենում: Իսկ Ասլան ապերն էլ կայարանից ետ դառնալիս անձրևի տակ էր մնացել, մրսել, անկողին էր ընկել ու զառանցում էր տաքության մեջ:

- Գառներս, գառներս, մորթում ես տեսնում եմ... Ձիս թամբեք, ասում եմ... մորթում են, հասեք, փրկեք, բա դուք մարդ չե՞ք, ձեզ հետ չե՞մ...- մի պահ բացում էր աչքերը, նայում պղտորված հայացքով, հարցնում,- Վարսենիկիս չբերեցի՞ք...- ու էլի ընկղմվում տենդի մեջ:

Իսկ լուսադեմին մեռավ: Մեռնելուց առաջ միայն մի վայրկյան գիտակցություն եկավ ու նորից հարցրեց.

- Այ ձեր ցավը տանեմ, Վարսենիկին չբերեցի՞ք...

- Հա, հա, գնացել են, որ բերեն, քնի ա՛յ մարդ,- դժգոհ ու քնահարամ աղմկեցին երկար օդայի մեծ թախտին քնած նրա տղաներն ու հարսերը,- գնացել են, որ բերեն., Ասլան ապեր, դու քնի...

Եվ Ասլան ապերը հանգստացած ետ ընկավ բարձին, հառաչեց ու հանգավ:

Վարսենիկին ու երեխաներին գյուղ բերելու մեկնեց Հերիքնազը, որ ոչ ղեկավարությունից թույլտվություն խնդրեց և ոչ էլ վախեցավ: Գնաց, Վարսենիկի հետ կապկպեցին իրերը, երեխաներին սայլ նստեցրին ու բռնեցին Հոնուտի ճամփեն:

Բայց տեղ չհասան: Գետափում, Հոնուտից մի տասը կիլոմետր հեռու, որտեղ աշնանային քամուց տազնապած տարուբերվում էին Սանասար Ալեքսանյանի տնկած ծառերի մերկացած ճյուղերը, նրանց դիմավորեց Հոնուտ գյուղի բջջի ներկայացուցիչը՝ վառ կարմիր ձիու վրա նստած:

-Դուք, ասաց նա,- իրավունք չունեք Հոնուտ մտնելու: Հասարակությունը ձեզ չի ընդունում և ձեր տունն էլ բռնագրավված է:

Եվ հանկարծ Վարսենիկը ծիծաղեց, ծիծաղեց այնպես անսպասելի ու բարձրաձայն, որ նույնիսկ Հերիքնազը վախեցած նայեց հարսին, մտածելով, թե վշտից խելագարվել է խեղճը: Իսկ բջջի ներկայացուցիչը պարզապես ապշած էր և հարցրեց խոժոռված հոնքերով.

- Յանի թե էդ ինչի՞ ես ծիծաղում, արսորականի կնիկ...

Եվ Վարսենիկը, շարունակելով ծիծաղել, հարցրեց.

- Բագրատ ամի, դու այգի չունես, չէ՞...

- Չէ,- ավելի զարմացավ բջջի ներկայացուցիչը,- իբրև թե ի՞նչ ես հարցնում ...

- Դու իմաստուն ես, այ մարդ,- ինչ-որ կողմ, ետ-ետ նայելով, ձայն տվեց Վարսենիկը:- Դու իմաստուն ես, այ մարդ...

Գետափում մի լքված գոմի մեջ ապրեցին երեք ամիս, մինչև որ թույլ տվեցին գյուղ վերադառնալ ու ապրել... մեկ ուրիշ գոմում: Տունը մնում էր կալանքի տակ: Որոշվել էր գրասենյակ դարձնել այն և կահկարասին էլ հանել աճուրդի: Եվ ահա եկավ աճուրդի օրը: Գյուղի երեխաները երկար ժամանակ հիշում էին այդ զարմանալի հետաքրքիր և ուրախ ազիտ-միջոցառումը Զուռնաչի Մինասը գոմ-ակումբի առջևի տափարակին կանգնած դրել էր գուռնան, իսկ դիոչի Նիկոլն էլ հափշտակված թմբուկ էր զարկում ճիշտ ու ճիշտ ինչպես իրենց պապերը, Որ հենց նույն այս տեղից ձորերից նվագով կանչում-հավաքում էին մարտիկներին, որ գնան կռվելու պարսիկների դեմ:



Կեսօրի կողմը տափարակի վրա, ինչպես ասում են, ասեղ զցելու տեղ չկար: Կարմիր պաստառով ծածկված սեղանի ետևում նստել էին աճուրդի կազմակերպիչները: Նրանք երեք հոգի էին և երեքն էլ իրար զարմանալիորեն նման, ոգևորված ու վճռական դեմք ունեին: Կատարածու Եփրեմը, որը հեղափոխությունից հետո միակն էր, որ մնացել էր իր պաշտոնին և իր ծղրտան ձայնով անվերապահորեն կարողանում էր լռեցնել հոնուտցիներին, բարձրացրեց ձեռքը և ճչաց.

- Հոնուտի աշխատավոր ժողովուրդ, սուս մնացեք: Հիմա պետք է խուսի Բագրատ բեկը:

Բայց քանի որ հավաքվածները սկսեցին հռհռալ, անմիջապես ուղղեց իրեն.

- Այսինքն՝ էսօրվա հաշվով, ընկեր Բագրատ Թոփայանը:

Երեքի մեջտեղում նստածը, որ հենց Բագրատ Թոփայանն էր, ինք-ինք նայեց կատարածու Եփրեմին, ինչ-որ բառեր նետեց, երևի հայհոյեց, որովհետև նրա կողքին նստածները ծափ տվեցին ուրախությունից և ասաց.

- Հարգելի հասարակություն, էս օրերին, երբ միջազգային իմպերիալիզմը գլուխ է բարձրացրել մեր աշխատավոր ժողովրդի ձեռք բերած նվաճումների դեմ, մենք պետք է զգոն լինենք և բերաններս փակ, որովհետև թշնամին ամեն տեղ ականջներ ունի: Եվ միջազգային իմպերիալիզմը ոչ թե միայն դրսում է, այլև ներսում, մեր մեջ: Եվ դրա համար էլ մենք մեկ-մեկ բռնում ու պատժում ենք նրանց և նրանց ունեցվածքը տալիս ենք ժողովրդին, այսինքն՝ ձեզ, որովհետև ինչ-որ կուտակել էր Սանասար Ալեքսանյանը, ներողություն, որ տալիս եմ հայրենիքի թշնամու անունը, կուտակել էր ձեր հաշվին, ձեր արյուն-քրտինքով դատածի հաշվին: Դրանք ձեր ապրանքներն են: Էսքան բան:

Նա խիստ հայացքով նայեց հավաքվածներին և բղավեց կատարածու Եփրեմի վրա...

- Ես պրծա: Ապրանքները բերեք:

- Ծափ տվեք,- ծղրտաց կատարածու Եփրեմը:

Եվ հոնուտցիները ծափահարեցին ոգևորված՝ անհամբերությամբ սպասելով աճուրդի հանված ապրանքներին:

Առաջինը հրապարակ բերեցին նիկելապատ, զսպանակավոր մահճակալները, և Բագրատ Թոփայանը հավաքվածների զարմացական բացականչությունների արանքում հայտարարեց.

- Երկաթե թախտեր նշանակված գինն ա երեսուն մանեթ: Ո՞վ ա ավել տալիս...

- Էդ ինչ են խոսում,— ձեռքը ականջին դրած գոռաց ծերունի Մուքել ամին,- Էդ ինչ են ասում... քե մատաղ...

- Ասում են գինը երեսուն մանեթ ա, ապեր,- ի պատասխան գոռաց նրա կողքին նստած թոռը...

- Ինչ ա՞...

- Ասում են՝ զինը երեսուն մանեթ ա...

- Պայ, ո՞նց թե,- զարմացավ Մուքել ամին,- բա որ դա մերն ա, էլ ինչի են մեզ վրա ծախում:

Բացատրել հնարավոր չէր, այդ պատճառով էլ ուղղակի սաստեցին նրան, և աճուրդը շարունակվեց:

- Երեսունմեկ,— անվճռական ձայնեց ինչ-որ մեկը:

- Էդ ո՞վ էր,— բղավեց Բագրատ Թոփայանը,- էդ դու էիր, Մուշեղ:

- Հա,— խեղճ-խեղճ ասաց Մուշեղը:

Բագրատ Թոփայանը զարմացավ.

- Այ տղա, որ էդքան փող ունես, ինչի՞ չես իմ երեք մանեթը ետ տալիս: Արդեն չորս տարի ա, է...

- Կտամ, կտամ, Բագրատ բեկ... ջան...

- Այսինքն՝ ո՞նց թե կտաս, է՛,— զայրացավ Բագրատ Թոփայանը...- որ ունես, հենց հիմի տուր... Բա առանց իմ պարտքը տալու առոք-փառոք քնելու ես էդ փափուկ թախտի վրա, հա՞ ...

- Ա՛յ ախպեր, ո՞վ ա դրանց վրա քնելու,— ծնված օրն անիծելով մրմնջաց Մուշեղը...— Ասում էի էժան բան ա, կտանես կայարանումը մեկին երկու կճախեմ, համ քո փողը կտամ, համ էլ...

- Երեսունհինգ,— խիստ ձայնով հայտարարեց Բագրատ Թոփայանը...- Էդ ես եմ ասում: Իմ կողմից: Երեսունհինգ՝ մեկ... Ավել տվող չկա՞ ... երեսունհինգ՝ երկու...

Ու մեկ էլ սկսվեց: Խաղի մեջ մտած երեխաները, իրենց թվաբանական գիտելիքները ուսուցիչների, ծնողների ու հարևանների մոտ ցույց տալու համար, այստեղից ու այնտեղից զիլ ձայներով բղավեցին.

- Երեսունհինգ՝ երեք, երեսունհինգ՝ չորս, երեսունհինգ՝ հինգ:

Մի անասելի աղմուկ ու ծիծաղ բարձրացավ: Կատարածու Եփրեմը ծղրտաց, և Բագրատ Թոփայանը վերջին անգամ հայտարարեց.

- Երեսունհինգ՝ երեք, երեսունհինգ՝ երեք: Վերջ:- Գրպանից հանեց դրամը, հաշվեց, դրեց սեղանին ու ձայն տվեց իր որդիներին.— Մանո, Պատո, դրանք տուն տարեք:- Հետո նայեց հավաքվածներին, նկատեց, որ ոմանք խնդմնդում են քթի տակ ու բարձրաձայն ասաց: - Այո՛, էդպես պիտի լինի, հերիք է, հիմի մենք պիտի քնենք հայրենիքի թշնամիների փափուկ թախտի վրա: Բա ի՞նչ:

Իրար ետևից հրապարակ բերվեցին նաև պահարանը, լվացարանը, կարի մեքենան, ինքնատեղը, բարձերն ու վերմակները, օրորոցներն ու ծաղկազարդ շալերը, օձառներն ու օձանելիքները, գորգերն ու կարպետները, և նույնիսկ Վարսենիկի սև կտորի վրա գործած

սպիտակ կատունները, և պարզվեց, որ Հոնուտի չունևոր բեկերն ու ոչ բեկերը ահագին փող ունեին: Մի ժամվա մեջ բաժանեցին ինչ կար-չկար: Ամեն ինչ հարթ գնաց, մինչև որ հերթը հասավ ափսեներին ու կաթսաներին և Բագրատ Թոփալյանը մատը բռնակի անցքի մեջ մտցրած վեր բարձրացրեց կանաչ գույնի երկաթե մի աման: Նայեց, նայեց, հոտ քաշեց չգիտես ինչու և հայտարարեց.

- Խաշիլի աման: Նշանակված գինն ա հիսուն կոպեկ, ա՛ խալիս: Ով ա ավել տալիս...

Եվ հանկարծ այդ ամբողջ իրարանցմանն անտարբեր ու անհաղորդ մնացած Վարսենիկի փոքր տղան՝ Գրիգորը, զիլ ձայնով ճչաց ու լաց եղավ...

- Նանի, իմ գարշոկը... Ես իմ գարշոկն եմ ուզում, նանի:

Բոլորն իրար խառնվեցին, խոսեցին միանգամից, հետաքրքրվեցին, հարցրեցին, վիճեցին, պարզեցին և իրողությունը բացատրեցին Բագրատ Թոփալյանին: Վերջինս, այնուամենայնիվ, թերահավատությամբ և ափսոսանքով նայեց չարաբաստիկ անոթին, բայց որովհետև Գրիգորը շարունակում էր լաց լինել ձեռքերը մեկնած դեպի կարմիր սեղանի մոտ նստած մարդիկ, վճռեց միանգամից և կանաչ ամանը շարտեց երեխայի ոտքերի տակ:

- Առ, առ, վիժվածք,- գոռաց նա: - Մենք սովոր չենք, մեր երեխաները չափարի տակ էլ կարան...

Աճուրդի չհանվեց միայն գրամաֆոնը: Չէին կարողացել գինը որոշել և սպասում էին շրջանի ներկայացուցչի հարցման պատասխանին: Բայց քանի որ պատասխանն ուշացավ, վճռեցին գրամաֆոնը հենց նոր գրասենյակում էլ թողնել՝ որպես ընդհանուր սեփականություն: Եվ մի քանի օր շարունակ գյուղի երեխաները իրար հրմշտելով խոնավամ էին գրասենյակի դռան ու լուսամուտների առջև, ներսում կատարածու Եփրեմը պտտում հա պտտում էր երկաթյա սպիտակ բռնակը և նունուֆարի խոշոր ծաղկի նման բացված մի զարմանալի բանի միջից կախարդական ձայներ էին լույս աշխարհի դուրս գալիս: Հետո գուցե զսպանակը կոտրվեց, գուցե և հետաքրքրասեր կատարածու Եփրեմը որոշել էր տեսնել, թե իսկապես որտեղ են տեղավորվում նվագողները, և քանդել էր գրամաֆոնը, ոչ ոքի հայտնի չեղավ: Միայն թե մի քանի օր հետո գրամաֆոնը լռեց և հետագայում կրակոտ ու թեժ ժողովների ժամանակ պատմական որոշումներ ընդունելիս հոնուտցիները իրենց թուրքունի մոխիրն էին թափ տալիս նունուֆարի խոշոր ծաղկի նման բացված լայն խողովակի մեջ: Շատ հարմար էր:

Զարմանալի բան է կյանքը: Մարդ երբեմն այնպիսի մանր բանի վրա է ուրախանում, որ նախկինում մտքով էլ չէր անցնի: Միանգամից ամեն ինչ կորցրած Վարսենիկն այնպես ուրախացավ, երբ տեսավ, որ թիթեղյա վառարանը մոռացել, աճուրդի չեն հանել: Բերեց տեղավորեց գոմում, վառեց, երեխաներին հավաքեց շուրջը: Իսկ երեկոյան, երբ Հերիքնազը նոր թխած հաց ու պանիր բերեց երեխաների համար ու գյուղի վերջին նորությունների մասին պատմեց, Վարսենիկը հուզվեց անասելի ու լաց եղավ ուրախությունից: Որովհետև մտածում էր, թե ոչ մի սրտացավ ու կարեկից մարդ չկա ամբողջ գյուղում, թե հարազատներն ու ազգականներն անգամ միանգամից մոռացել են Սանասարին էլ, նրա լավություններն էլ, նրա գցած այգիներն էլ: Բայց բանից պարզվում է, որ այդպես չէ, որ ազնիվ մարդիկ կան, որ օրհասական պահին, երբ չարի ու բարու կռիվն է գնում մարդկանց հոգում, երբեք չես իմանա, թե ում մեջ ինչը կհաղթի: Այդպես է, այդպես ա: Այդպես է լինում, որ մեկ էլ կարծեցյալ

բարեկամդ թշնամի է դառնում, իսկ կարծեցյալ թշնամիդ՝ բարեկամ: Եվ ամենահուզիչն ու սրտաշարժն այն է, երբ հանկարծ օգնություն կամ կարեկցանք ես ստանում այնտեղից, որտեղից չէիր սպասում, այնպիսի մարդուց, որին դու, մեղա՛, մարդ էլ չէիր համարում:

Հերիքնազն ասաց, որ աճուրդի ժամանակ ինքնաեռը, կարպետներից մեկն ու սև կտորը, որի վրա կատուներ էին ասեղնագործված, գնել են Մեհրաբ Չատինյանը, Սոսի բեկի կրտսեր հարսը Մարոն և գաղթական Անուշավանը: Գնել են, որպեսզի ուրիշների ձեռքը չընկնի և հենց որ օրերը պարզվեն մի քիչ, բերելու են, որ նվիրեն Վարսենիկին:

Մեհրաբ Չատինյանը, Մարոն, գաղթական Անաշավանը... Այնինչ նրանք բարեկամների, այսինքն՝ բարի կամեցողների ոչ մի ցուցակում չկային:

Վարսենիկի համար ամենամեծ կորուստն, իհարկե, կարի մեքենան էր: Արդեն հիանալի կարում էր իր «Ջինգերի» վրա և հիմա, եթե ունենար, կարող էր կար անել մարդկանց համար ու մի կերպ պահել երեխաներին: Բայց մեքենան չկար: Առնողը տարել, կես գնով վաճառել էր կայարանում: Եվ Վարսենիկը կար էր անում մեկ սրա տանը, մեկ նրա տանը անհաջող, անորակ մեքենաներով: Եվ ապրում էին:

Սանասարից նամակ եկավ.

«Վարսենիկ ջան, ջան, ջան, ջան... ես ապրում եմ մի էնպիսի տեղ, որ ձուն ավագի մեջ թաղում ենք, եփում է»:

Ամբողջ գյուղով հավաքվեցին, որ պարզեն, թե որտեղ կլինի Սանասարը: Մեկը չգիտես ինչու Եփրեմ-Վերդու գիրքը բերեց, մյուսը՝ ինչ-որ հին-մին քարտեզներ: Կարդացին Եփրեմ-Վերդին, զննեցին քարտեզները, բայց ոչ մի հարմար տեղ չգտան: Մուքել ամին գոռոռում էր, թե ամենաշոգ տեղը Քոի ավիին է, բայց նրան ոչ ոք չէր լսում: Գաղթական Անուշավանն էլ պնդում էր, թե խոսքը երևի Մահարա անապատի մասին է, որտեղ, ինքը լսել է, անտանելի շոգ է: Եվ բոլորն էլ շատ ծիծաղեցին, երբ Լևոնը, որ արդեն տասներկու-տասներեք տարեկան տղա էր, ծրարը ձեռքին շուռ ու մուռ տալով, ասաց,

- Տաշքենդ:

- Ի՞նչ Տաշքենդ,— խառնվեցին իրար հավաքվածները:

- Նամակը Տաշքենդից է եկել: Ծրարի վրա ռուսերեն գրված է: Ուրեմն հայրիկը գտնվում է Միջին Ասիայում, Ուզբեկստանում,— ասաց

Լևոնը:

Եվ Վարսենիկը հպարտությամբ նայեց իր ավագ որդուն: Սանասարը գրում էր, որ լավ է ինքը, դարձյալ իր սիրած գործն է անում, այգիներ է տնկում ու մշակում, միայն թե շատ ավստս՝ ուրիշների համար: Գրում էր, որ բողոք է գրել Մոսկվա և համոզված է, որ եթե բողոքը տեղ հասնի, իր հարցը կլուծվի դրական կողմից:

Եվ այդպես էլ եղավ: Նրա բողոքը թեև դժվարությամբ, թեև խոչընդոտներով, երեք տարվա մեջ, բայց, այնուամենայնիվ, տեղ հասավ: Սանասար Ալեքսանյանը համարվեց անմեղ, հանիրավի դատապարտված և համապատասխան փաստաթղթերով վերադարձավ Հոնոլուս:

Զարմանալի մարդ էր: Չորս տարի բացակայել էր ընտանիքից, խելագարվում էր կարոտից, և որքան մոտեցնում էր հայրենի գյուղին, ավելի էր անհամբեր դառնում, ավելի կարոտում, բայց միևնույն է, հենց որ Գետափ հասավ, գնաց ու խրվեց իր տնկած այգիների մեջ: Մի տեղ ուրախացավ, տեսնելով, թե ինչպես են հզորացել ծառերը, մի ուրիշ տեղ հայիոյեց կոլտնտեսության այգեպաններին, կացինն ու սողոցը ձեռքն առավ ու սկսեց կտրատել չորովկները, տարվեց գործով, մնաց:

Այնինչ նրա վերադառնալու լուրն իրենից առաջ գյուղ էր հասել, իրար խառնել բոլորին: Գրասենյակը դատարկեցին: Գյուղի ղեկավարությունը Վարսենիկին խնդրում էր երեխաներին վերցնել ու տուն, այսինքն, գրասենյակ վերադառնալ: Բայց Վարսենիկը հրաժարվում էր.

- Իմ տերը կգա,- ասում էր նա,- և նա էլ կորոշի... Ու երեխաների թեր բռնած, երեխաներով շրջապատված, Վարսենիկը ոտքով ճամփա ընկավ դեպի Գետափ ամուսնուն դիմավորելու:

Բայց նրանից առաջ, իր կարմիր ձիով, իհարկե, տեղ էր հասել արդեն Բագրատ Թոփալյանը: Եվ հենց նույն բլրի վրա, որտեղից չորս տարի առաջ մտրակը ձեռքին ետ դարձրեց Վարսենիկին ու նրա զավակներին, Բագրատ Թոփալյանը սրտանց ուրախ դիմավորեց Սանասարին:

- Էդպես եղավ, ախպեր ջան,— ասաց՝ ձիուց իջնելով,— ներիր մեզ: Մեզ խաբել էին, ներիր, մոռացիր անցյալն ու հինը մի հիշիր: Արի աշխատենք իրար հետ հանուն նոր կյանքի:

Սանասար Ալեքսանյանը նեգրի պես սևացած դեմք ուներ ու մազերն էլ լրիվ սպիտակել էին նա սպիտակ հոնքերի տակից մոռյլ նայեց Բագրատ Թոփալյանին, ուզեց ասել՝ բա դա մոռանալու՞ քան է, շան որդի: Չորս տարին ո՞նց մոռանա, օտարությունը ո՞նց մոռանա, իր հառաչանքներն ու լացը ո՞նց մոռանա, երեխաների անտերությունն ու Վարսենիկի տառապանքները ո՞նց մոռանա: Ցավից մեկ-մեկ ճերմակած մազերը ո՞նց մոռանա նա չորս տարի սպասել էր այս օրվան, հազար-հազար դառն ու կծու խոսքեր էր մտածել ու կրկնել, որ շպրտի այս մարդու, այդ մարդկանց դեմքին, բայց հանկարծ մտածեց, որ դրանք փոքր մարդիկ են, ոչնչություններ են, որ դրանք նույնիսկ արժանի չեն իր մեծ ցավին ու զայրույթին: Նա հանկարծ զգաց, որ լրիվ դատարկվել է, որ ոչինչ չունի ասելու և ասաց հեռավոր, ատելությամբ.

Բա էսպե՞ս են այգիները պահում: Բա դուք մարդ ե՞ք:

Եվ Բագրատ Թոփալյանը ժպտաց խղճալի ու հանգստացած.

- Հիմա բոլոր այգիները քոնն են, Սանասար ջան: Տերը դու ես, մշակիր...

Նրանց հանդիսավոր ընդունեցին կոլտնտեսություն: Վարսենիկը բանջարանցում էր աշխատում, իսկ գյուղատնտես Սանասար Ալեքսանյանը օր ու գիշեր դուրս չէր գալիս Գետափից: Նա նորանոր այգիներ գցեց Եղնիկասարում ու Քարափի տակ, մացառներից

մաքրել տվեց, նորացրեց հոնի անտառը, Որսաձորում, որտեղ հատկապես լավ էին աճում խնձորենիները, հսկայական տարածության վրա, պլանավորված, իրարից երեք-երեք մետր հեռու՝ արքայական կոչվող խնձորի ծառեր տնկեց: Գյուղի ղեկավարները գալիս էին, նայում, զարմանում ու ասում.

- Էս այգիները քո անունով ենք կոչելու, ընկեր Սանասար: Տուն էր դառնում շաբաթը մեկ, գիշերով, քնած-քնած համբուրում, չմփչմփացնում էր մեծացող տղաներին, նայում, փառավորվում էր, ուղղում էր աղջկա վերմակը, նստում, երկար նայում նրա ոսկեծամ մազերին, մաքրվում, խաղաղվում էր, հետո իջնում էր մութ այգին ու ձայն տալիս.

- Ես պատրաստ եմ, Վարսենիկ ջան...

Ու Վարսենիկը քաշ էր տալիս փայտե տաշտակը, դուլլերով տաք ջուր էր բերում և երեխայի նման լողացնում ամուսնուն, մի թևը բռնած, տաք-տաք ջուրը փայտե թասով գլխին էր լցնում ու լսելով, թե ոնց է ախ ու վախ անելով հաճույքից փնչում Սանասարը, ծիծաղում էր երջանիկ, ամեն վիշտ ու ցավ մոռացած:

Ամեն վիշտ ու ցավ մոռացած: Այդպես էր:

Սակայն վիշտն ու ցավը չէին մոռացել նրանց և այս անգամ հայտնվեցին վերնից, կուսակցության մի իրոք ժամանակին և հրաշալի որոշման հետ: Բարդ էր երկրի վիճակը: Միանգամից, թափով ամենուրեք կառուցվում էին նորանոր հանքեր, զգվում էին հազարավոր կիլոմետրերով երկաթուղային գծեր: Պետք էր շտապ զարկ տալ ծանր արդյունաբերությանը, պետությունը չէր կարող իր ծրագրերն իրականացնել առանց հզոր տեխնիկայի և ժողովրդի ուշադրությունը բևեռեց դեպի հանքերը, ֆաբրիկաները, գործարանները, նոր վիթխարի կառույցները...

Գյուղատնտեսության բնագավառում աշխատող միլիոնավոր մարդիկ բանվորներ ու կառուցողներ դարձան: Այդպես էր պետք: Իսկ հետո բնականաբար պարզվեց, որ գյուղատնտեսությունը ետ է մնում, գյուղացիները բանվոր են դարձել և հաց արտադրողը պակասել է: Եվ վճռվեց հատուկ ուշադրություն դարձնել հացի արտադրությանը, ավելացնել ու հարստացնել հեկտարները, ստեղծել հասկային կուլտուրաների նոր, բերքատու տեսակներ, նորանոր հողատարածություններ մշակել և վերածել արտերի: Երկրին հաց էր պետք: Առանց հացի չէին լինի ոչ գործարաններ և ոչ էլ մեծ կառույցներ: Երկրին հաց էր պետք և ընդունվեց այդ հույժ կենսական, պատմական որոշումը: Բայց ո՞վ չգիտե, որ ինչքան կարևոր է որոշումը, նույնքան և առավել կարևոր է, թե ով է այդ որոշումն իրականացնողը: Դժբախտաբար թե երկրի, թե հոնուտցիների և թե՛ հատկապես Սանասար Ալեքսանյանի համար, այդ որոշումը հեռավոր Հայաստանի հեռավոր շրջանում պետք է իրականացնեք Բագրատ Թոփայանը և ճիշտ նրա նման մտածող մի մարդ, որ պատահականորեն հայտնվել է շրջկենտրոնում:

Առավոտ վաղ Բագրատ Թոփայանը գրասենյակ կանչեց Սանասար Ալեքսանյանին ու հարցրեց,

- Որոշումը կարդացի՞ր:

- Կարդացի,— ասաց Սանասարը,— իմ կարծիքով վաղուց պետք է այդ որոշումը լիներ:

Բագրատ Թոփայանը խոժոռվեց.

- Իսկ իմ կարծիքով,— շեշտեց նա մատը վեր պարզելով,— էնտեղ ինձանից ու քեզանից լավ գիտեն, թե երբ պիտի որոշում ընդունել, էնտեղ մենակ ինձ ու քեզ նման մարդիկ չեն նստած:

Կարելի էր նաև չպատասխանել, և Սանասարը լռեց:

- Ուրեմն էսպես,— ասաց Բագրատ Թոփայանը,— մինչև իրիկուն մտածում ես ու մի ցուցակ ես ներկայացնում մեզ, թե որ այգիները պետք է կտրենք:

- Կտրե՞ք,— վեր թռավ Սանասարը,- Ինչի՞ համար;

- Հաց պիտի ցանենք,— ասաց Բագրատը:

- Այգիների տեղում...

-Չէ, իմ գլխին,— ծաղրեց Թոփայանը: - Բա ասում ես, թե կարդացել ես որոշումը:

- Իսկ, ի՞նչ է, էնտեղ գրված է, թե պետք է ոչնչացնել այգիները:

- Չէ,- ոտքի կանգնեց Բագրատը,- բայց պարզ գրված է, որ ամեն մի տնտեսություն պարտավոր է էսքան ու էսքան հաց տալ պետությանը: Դե հիմա դու ասա, ես հացը որտեղի՞ց տամ, բազարից առնե՞մ:

- Բայց դա պարզից էլ պարզ է,— տաքացավ Սանասարը,- Հարկավոր է նոր հողեր մշակել ու դնել հացի տակ:

- Ինչո՞վ ենք մշակում և ո՞վ է մշակողը, ա՛յ տղա,- կանգ առավ նրա առջև Թոփայանը: - Մի տարում էդքան հաց ես ո՞նց եմ տալիս: Մշակված ու հարմար հողերը թողնեմ, մարդկանց սարե՞րը բարձրացնեմ :

- Ու դրա համար պիտի կտրե՞լ այգիները:

- Հա:

- Ընկեր Թոփայան,— որոշեց համոզել Սանասարը: -Ցորենի մի կիլոն մի կոպեկ է, խնձորինը տասը կոպեկ: Տեսե՞ք թե ինչ վնաս ենք հասցնում տնտեսությանը:

- Այ տղա, խնձորն ու տանձն ի՞նչ են, է՛: Խնձորով երկիր կպահվի՞: Սոված փորով խնձո՞ր կուտվի: Էնտեղից հաց են ուզում, է՛, հաց,- մատը կրկին վեր բարձրացրեց Թոփայանը: - Հիմի դա է մեր ընդհանուր գիծը:

- Որ էդպես է,- ասաց Սանասարը: - Ես ելույթ կունենամ ժողովում:

- Եվ կգնաս ընդհանուր գծի դեմ,- ժպտաց Թոփայլանը նա հազվադեպ էր ժպտում և ճիշտ էր անում, որովհետև հերքելով բոլոր օրինաչափությունները՝ ժպիտն ավելի չար էր դարձնում նրա դեմքը - Թե՞ դու դեմ ես մեր ընդհանուր գծին:

- Ես քո գծին եմ դեմ,— ասաց Սանասարը,- և կգնամ Տաուշ՝ բողոքելու,- ու դուռը շրխկացնելով դուրս եկավ:

Բազրատ Թոփայլանը ձեռքով սրբեց երեսի կնճիռները ու նայեց պատից կախված հեռախոսին: Նայեց, նայեց, հետո մոտեցավ ու պտտեցրեց հեռախոսի բռնակը...

Սանասար Ալեքսանյանը Տաուշից այլևս չվերադարձավ գյուղ:

Իսկ նույն երեկոյան նրա տուն մտան Բազրատ Թոփայլանն ու մի անձանոթ մարդ, որը սև մազեր ուներ, բայց գրեթե թափանցիկ աչքեր: Բազրատ Թոփայլանը կանգնեց դռան մոտ, իսկ անձանոթ մարդը սկսեց խուզարկել տունը՝ Վարսենիկին քաղաքավարությամբ խնդրելով նավթի լամպը պահել մեկ այս, մեկ մյուս անկյունում: Հետո նույն քաղաքավարությամբ էլ հրաժեշտ տվեց ու դուրս եկավ տնից: Եվ Վարսենիկը, որքան էլ ջանաց անտարբերությամբ հարցնել, բայց ձայնը դավաճանաբար դողաց.

- Բազրատ բեկ, ոնց որ ուզում ես նորից տանել հային, հա՞՞:

- Տե՛նց ա երևում,— աչքերը գետնին գցած, ասաց Թոփայլանը:

- Դե ինձ էլ տարեք, էլի, երեխեքին էլ տարեք, էլի,- պոռթկաց տարաբախտ կինը: - Ես մենակ ո՞նց պիտի սրանց պահեմ:

- Որ պետք լինի, կտանենք,- ասաց Թոփայլանը:

Սանասար Ալեքսանյանին ուղիղ մեկ ամիս պահեցին Տաուշում: Հարցաքննում էին, համախոհներ էին փնտրում: Ասում էին, թե նա ինչ-որ ժողովի է մասնակցել, բայց թե ինչ ժողովի, ոչ ոք չգիտեր, միայն շշուկներ կային, թե այդ ժողովում նպատակ են ունեցել մի նոր հեղափոխություն անել:

Ու մի օր էլ Վարսենիկին կանչեցին Տաուշ, մտցրեցին մի մեծ սենյակ, որը բերնեբերան լիքն էր: Վարսենիկը շուրջը նայեց, բայց ոչ մի ծանոթ ու կարեկից դեմք չտեսավ: Բոլորն էլ հոգնած ու զազազած էին:

- Սա՞ է,- հարցրեց մեկը:

- Հա,- լավեց մի ձայն:

Ձայնը ծանոթ էր: Վարսենիկը շրջվեց դեպի ձայնի կողմը ու տեսավ

Բազրատ Թոփայլանին: Թոփայլանն էլ նրան նայեց ու անմիջապես թաքնվեց ինչ-որ մեկի թիկունքում:



- Լսիր, այ աղջի,— հարցրեց նույն մարդը:— Որ քո ամուսինն էն ժողովից եկավ... էն, էլի՛, դու և ես լավ գիտենք թե որ... որ էն ժողովից տուն եկավ, քեզ ի՞նչ ասաց:

Բայց Վարսենիկն արդեն գիտեր, որ ճշմարիտ խոսքը, արցունքն ու աղաչանքը որևէ արժեք չունեն նման մարդկանց աչքին, դրա համար էլ պատասխանեց հանգիստ ու արժանապատվությամբ, չթաքցրած հեզնանքով,

- Թե էդ ի՞նչ ժողովի մասին է խոսքը, կամ թե իմ ամուսինը եղել է էդ ժողովին, թե չէ, ես չգիտեմ: Ա՛յ, հիմի դուք որ ես ժողովից տուն գնաք, ձեր կանանց պատմելու՞ եք, թե ինչ ժողով էր և ինչի մասին էիք խոսում... պատմելու՞ եք, թե ոնց եք ինձ ստիպել երեխաներին անտեր թողնել ու ոտքով տասը վերստ ճանապարհ կտրել ձեր սուտ խոսքերը լսելու համար:

Մարդիկ երկար էին ժողով արել: Քաղցած էին, հոգնած էին և գազազած, որ ինչքան էլ տանջվում են, էլի ոչ մեկը չի ընդունում, որ ինքը հայրենիքի թշնամի է: Եվ ժողովի նախագահը թափ տվեց ձեռքը:

- Ամեն բան պարզ է, ընկերներ,— բղավեց նա: - Դուրս կորցրեք այս ժողովրդի թշնամու կնկան...

Եվ Վարսենիկը վերադարձավ Հոնուտ:

Ու էլ ոչինչ չիմացավ: Չիմացավ նույնիսկ, թե ուր տարան իր Սանասարին, նորից այնտե՞ղ, որտեղ ձուն եփվում է ավազի մեջ, թե այնտեղ, որտեղ արյունը սառչում է երակներում:

Ու նորից մենակ մնաց Վարսենիկը՝ երեք երեխաների հետ: Գիշերները կար էր անում, իսկ ցերեկները աշխատում կռտնտեսությունում: Լավ էր, որ գոնե կար կարի նոր մեքենան: Սանասարը նամակ էր գրել Թիֆլիս, անտառային դպրոցը միասին ավարտած մի վրացու, խնդրել էր «Զինգեր» կարի մեքենա ճարել: Ու մի ամիս հետո նամակ ստացավ: Ընկերը գրում էր, թե արդեն գնել է մեքենան: Սանասարն անմիջապես Թիֆլիս գնաց, և վրացի ընկերը կարի մեքենան մեկնեց Սանասարին: - Կտանես քույրիկիս,— ասաց նա:

- Բա փողը...

- Իմ նվերն է,— ասաց վրացի ընկերը,— էլ չխոսենք:

Եվ Սանասարը չխոսեց, գրկեց ընկերոջը, համբուրեց սրտանց, եղբոր նման:

Դե ի՞նչ խոսես, երբ լացդ է գալիս, որ աշխարհում դեռ նման մարդիկ կան:

Այնպես որ մեքենան կար և գիշերները թխկթխկում հա թխկթխկում էր Վարսենիկի «Զինգերը»: Փող ունեցող քիչ կար, մեկը ձու էր բերում, մեկը՝ լորի, մեկը՝ պանիր ու մածուն: Ապրում էին: Ուտելիքից առանձնապես չէին խեղճանում երեխաները: Խեղճանում էին անտերությունից և այն բանի համար, որ իրենք նման չեն գյուղի մյուս երեխաներին, հավասար չեն նրանց: Դա ընդգծվում էր ամենուրեք, ամեն ինչում:

Այսինքն, դե էլ ինչ երեխաներ էին նրանք: Մեծ տղաներ էին: Լևոնը տասնչորս տարեկան էր, Գրիգորը՝ տասներկու, իսկ Շամամի տարիքում մայրը նշանված էր արդեն:

Երբ Լևոնն ու Գրիգորը միասին էին լինում, նրանց չէին մոտենում, շատ ուժեղ ու հպարտ տղաներ էին, և քանի որ գրեթե ընկերներ չունեին, իրար հետ էին ընկերություն անում: Իսկ ով չգիտե, որ երբ եղբայրներն ընկերներ են նաև, նրանց հետ կամ պետք է բարեկամություն անել, կամ հեռու մնալ: Բարեկամություն չէին ուզում անել և հեռու էլ չէին ուզում մնալ: Դրա համար էլ հետևում էին, դարանում էին, բռնում էին առանձին-առանձին և ամբողջ խմբով, մի քանիսը՝ մեկի դեմ...

Մի օր Լևոնը հոր սևուկ, պայծառ աչքերն արցունքով լցրած հարցրեց Վարսենիկին:

- Մայրիկ, հայրիկը թշնամի է:

- Ո՞վ է ասում, - ցնցվեց Վարսենիկը: - Դա թշնամու խոսք է, բալես:

- Բա ինչու ինձ կոմսումով չեն ընդունում:

- Երևի լավ չես սովորում, էլի, - կար անելն արագացրեց Վարսենիկը:

- Ես մեր դասարանի ամենալավ սովորողն եմ, - հպարտ-հպարտ ասաց Լևոնը... Բայց էլի չեն ընդունում:

- Ո՞վ, - հարցրեց Վարսենիկը:

- Մարկոսը, կոմսումովի քարտուղարը: Ասում է քո պապի հայրը տերտեր է եղել:

- Մարկոսը: Թեանի՞:

- Հա:

- Այ ոչ ու փուչ լինի նա: Բա իր պապի հերն ո՞վ է եղել, նույն տերտերը չի եղել: Ախր դու և նա նույն Մեսրոպ պապի թոռներն եք:

- Չգիտեմ, - ասաց Լևոնը:

Հոր կարոտից հետո ամենամեծ կակիծը Լևոնի համար այն էր, որ նրան կոմերիտություն չընդունեցին և հետո, երբ ֆինները հարձակվեցին մեր երկրի վրա, նրան չտարան բանակ: Ժողովրդի թշնամու որդին իրավունք չունեի պաշտպանելու իր հայրենիքը: Ամեն ինչի հետ կարող էր հաշտվել Լևոն Ալեքսանյանը, բայց ոչ այդ ձևակերպման: Նա երկու օր ու գիշեր նստեց և մի նամակ գրեց պաշտպանության ժողկոմին՝ պատմելով ամեն ինչ, և խնդրելով ռազմաճակատ ուղարկել իրեն: Եվ մի ամիս էլ չանցած, նրան կանչեցին Տաուշ գինկոմիսարիատ:

Զինկոմը ծեր, մի թևանի մարդ էր: Նա երկար նայում էր իր առջև նստած պատանուն, հավանաբար սաստիկ զարմացած, թե նա ինչպես է համարձակվել նամակ գրել անձամբ

ժողովում: Հետո երկար իր սեղանին դրված կարմիր գույնի թղթին էր նայում և երբ խոսեց՝ աշխատում էր ճիշտ և ճիշտ գրության մտքերը հայտնել:

-Ուրեմն էսպես,- սկսեց նա:-Քո նամակին պատասխան է եկել: Ուրեմն էսպես, դու խորհրդային երիտասարդ ես և ինչպես մեր հայրենիքի բոլոր խորհրդային երիտասարդները, իրավունք ունես պաշտպանելու քո երկիրը և բանակ գնալու: Դրա համար ոչ մի միտք չունեք անհանգստացնելու մեծ մարդկանց: Կարող էիր ուղղակի ինձ մոտ գալ,- ձայնը ցածրացրեց նա՝ ինքն էլ իրենից ամաչելով,— կամ էլ կարդալ Ստալինյան սահմանադրության 32 և 33 հոդվածները, որտեղ խոսվում է Կարմիր բանակի մասին: Ուրեմն՝ էսպես. ներկայումս հաշվի չի առնվում, թե տվյալ երիտասարդը անցյալում ինչ է եղել և ինչ ընտանիքից է: Բոլորն էլ իրավունք ունեն բանակ գնալու:

- Ես է՛լ,— տեղից երջանկացած վեր թռավ Լևոն Ալեքսանյանը: — Ես է՛լ...

- Վա՛յ, բա էս բոլորն ում համար էի խոսում,— ծիծաղեց զինկոմը:

Հաջորդ օրը Վարսենիկը անմխիթար լաց լինելով մի հին, ճմռթված սև ճամպրուկի մեջ հավաքում էր այն ամենը, ինչ որդին տանելու էր, իսկ Լևոնը՝ իր եղբայր Գրիգորի հետ զինկոմի որոշումը ձեռքին, կանգնել էր գրասենյակի առջև և անցնող-դարձողին փայլուն թուղթը ցույց տալով, ասում էր հեզնանքով,

- Թշնամին մենք ենք, հա՞: Այ, տեսեք, որ ինձ բանակ են տանում: Տեսեք, որ հատուկ կանչել են, որ գնամ պաշտպանեմ մեր մեծ հայրենիքը: Թշնամին մենք ենք, հա...

Իսկ Գրիգորը հրացայտ աչքերով մոտեցել էր տափարակի պոնկին և կոնկրետ հասցեներով էր բղավում,

- Մարկոս, սուտ Մարկոս, եզան աչքերով ու ուղեղով Մարկոս, դուրս արի: Արշակ, որտե՞ղ ես դդում գլուխդ պահել, Նապո, Ճապո-նապո, լազլազի ձագ Նապո, դե հիմի մեյդան արի, է՛, դե դուրս եկեք, է, տեսնենք ում մերը լաց կլինի... էդ մենք էինք թշնամի, հա՞, մեզ Կարմիր.բանակ են կանչել...

- Գործ չունես, Գրիգոր ջան,— համոզում էր Լևոնը:— Զգույշ քեզ մենակ կբռնեցնեն, ախր դրանք աննամուս լակոտներ են՝ գործ չունես, ախպեր ջան...

- Թող բռնեցնեն,— արհամարհանքով թքելով ասում էր Գրիգորը...դրանցից էլ վախեցող չկա, կարևորն էն է, որ մենք արդեն թշնամիներ չենք, ախպեր ջան, որ քեզ բանակ են տանում: Իսկ որ քեզ տանում են, ինձ էլ կտանեն, չէ՞ ...

- Լավ կլինեք, որ սովորեիր,- հանկարծ իրոք մտահոգված ասաց Լևոնը:—Ես որ էստեղ չեմ, դու էլ մի մնա, գնա Երևան, տեխնիկում ընդունվի, սովորի, ցավդ տանեմ, սովորի, մեծ մարդ դառ, ոնց որ մեր հերն էր ուզում...

- Թող քո ասածը լինի, ախպեր ջան,— ինչպես միշտ՝ հորը հիշելով, աչքերը լցրեց Գրիգորը:— Հանկարծ չմտածես, թե վախենում եմ, գիտե՞ս: Ես դրանցից այ էսքան էլ չեմ վախենում: Բայց որ դու ասում ես կգնամ: Վա՛յ, ինչքան ուրախ եմ, որ դու բանակ ես գնում, իմ ախպեր...

Իսկ երեկոյան, կալի ծղոտի դեզի մոտ, տաք–տաք շնջալով Լևոնի ականջին, բոլորովին ուրիշ բան էր ասում Շողերը, ուլիկի նման պստիկ ու կրակոտ, գյուղի բոլոր տղաներին խելքահան անող Շողերը:

- Հիմար, հիմար, հիմար տղա, ո՞ր ես գնում: Փոխանակ ուրախանաս, որ քեզ չեն տանում, ջահել-ջիվան գլուխդ ինքդ ես տանում դնես կրակի տա՞կ: Ինչի՞ համար: Բա ի՞նձ ոնց ես թողնում: Ես ո՞նց ապրեմ առանց քեզ:

- Էդ ինչեր ես ասում, Շողեր,— աղջկա տաք խոսքերից ու շնչառությունից հարբած, շնջում էր Լևոնը,- էսօր քեզ ի՞նչ է պատահել: Հազիվ համոզեցի, որ գաս կալը, հիմա էս ինչե՞ր ես ասում:

- Բա որ գնում ես, ի՞նչ անեմ,- լաց եղավ Շողերը,- էլ ում համար, ինչի՞ համար նազ ու տուզ անեմ: Ես քեզ սիրում եմ, Լևոն... Ես քեզ սիրում եմ, Լևոն ջան,— ու մեկ էլ հանկարծ ամուր գրկեց տղային, ձգվեց, գտավ շրթունքները ու սկսեց համբուրել խելահեղ, ասես տենդի մեջ, շրթունքները, աչքերը, հոնքերը, այտերը, բաց, ուժեղ կուրծքը, ու նորից աչքերը, այտերը, շրթունքները...

- Շողեր, Շողեր ջան...

- Ջան, ջան, ջան,- շնջում էր Շողերը:- Ես քոնն եմ, քոնը ու քեզնից բացի աշխարհում չեմ սիրի ոչ ոքի: Ես քոնն եմ, քոնը մինչև կյանքիս վերջը: Ուզո՞ւմ ես հիմա քո կինը դառնամ, ուզում ես...

- Գժվե՞լ ես, ի՞նչ է,— ետ քաշվեց, հևաց Լևոնը:

- Հա, հա, գժվել եմ, գժվել եմ քեզ համար, իմ սիրեկան, իմ միակ...

- Ուրեմն սիրո՞ւմ ես ինձ, իսկականի՞ց, ուրեմն կսպասես՞ ինձ:

- Հարյուր տարի, հազար տարի, մինչև մահ ու գերեզման, Լևոն ջան: Ուզո՞ւմ ես գամ ձեր տանն ապրեմ: Վարսենիկ հարսի հետ սպասենք քեզ: Ուզո՞ւմ ես:

- Հա,- ասաց Լևոնը:

- Նանիդ կասե՞ս, կասե՞ս նանիդ:

- Չէ,- ասաց Լևոնը: - Ամաչում եմ, Շողեր ջան, կգնամ, նամակով կգրեմ...

- Ուրեմն ամաչում ես ասել, որ ինձ սիրում ես, հա՞, իսկ ես չեմ ամաչում, ուզո՞ւմ ես աշխարհով մեկ հայտարարեմ, որ սիրում եմ քեզ, ուզո՞ւմ ես...

- Չէ, չէ,- երջանիկ ծիծաղեց Լևոնը,- հանկարծ մեր գյուղի քեզ սիրող տղաները կլսեն, այ աղջի...

- Լսում են, լսեն, բոլորի գլուխն էլ հողեմ: Ոչ մեկը քո ճկույթն էլ չարժի: Թող հենց լսեն,— ասաց Շողերը ու հանկարծ պոկվեց տղայի դրկից, դուրս թռավ ծղոտի դեզի ստվերից, կանգնեց լուսնի շողերի տակ իբրև համակ սեր ու կիրք ու ձայնեց որքան ուժ ուներ:- Հե-հե՛յ,

հոնուտցիներ, բոլորդ էլ իմացեք, որ ես սիրում եմ Լևոնին, հե-հե՛յ սիրում եմ, սիրում եմ, սիրում եմ...

Տղան անսպասելիությունից մի պահ մնաց արձանացած, հետո վեր թռավ տեղից, նետվեց դեպի այդ խենթ աղջիկն ու բռնեց նրան, բայց քանի որ Շողերն անընդհատ պոկվում էր նրա ձեռքից ու շարունակում բղավել, գրկեց ու որովհետև որևէ այլ ելք չունեի, շրթունքներով փակեց աղջկա այրվող, փոքրիկ բերանը:

Իսկ հաջորդ օրը Վարսենիկն ու Գրիգորը մինչև Տաուշ ճանապարհ դրեցին Լևոնին, ու երբ արդեն պետք է շարժվեր բեռնատար ավտոմեքենան, որի մեջ մի քանի ուրիշ տղաներ էլ կային ոգևորված, երջանիկ դեմքերով, Վարսենիկը գրկեց որդուն ու ասաց հանգիստ ձայնով, առանց արտասուքի, որովհետև լաց էր եղել ամբողջ գիշեր և վճռել էր չոր աչքերով ճանապարհել իր գավակին:

- Լևոն ջան, իմ տղա ու ախպեր ջան, ես մի դժբախտ ու տանջված կին եմ: Եվ աշխարհի մեջ ոչ մի բան չունեմ, բացի իմ գավակներից: Ու կարծես թե գրված է իմ ճակատին, որ իմ սրտից հա պիտի պոկեն ու տանեն: Սկզբից քո հերը գնաց, հիմի էլ դու ես գնում: Գնա, բան չունեմ ասելու, գնա, բայց խղճա ինձ ու պահիր քեզ ինձ համար: Մեղք եմ:

Իսկ մի տարի հետո Գրիգորին ճանապարհեց Երևան՝ Հայկական մանկավարժական տեխնիկումում սովորելու:

Եվ դարձյալ մի տարի հետո Շամամին ճանապարհեց Երևան: Մրսել, հիվանդացել էր ոսկեծամ աղջիկը: Տաուշում բժիշկն ասել էր, թե ավելի լավ կլինի մայրաքաղաք տանել, որովհետև ջուր է հավաքվել կողքում, իսկ այստեղ դրանից հասկացող չկա:

Եվ Հոնուտում մենակ մնաց Վարսենիկը:

Այսինքն, դեռ չէր էլ հասցրել մենակ մնալ, երբ մի առավոտ ներս մտավ Շողերը՝ ձեռքով թիկունքին մի ծրար պահած:

- Բարի լույս, Վարսենիկ հարս:

- Բարին արևիդ, աղջիկ ջան,— ողջունեց Վարսենիկը:

- Վարսենիկ հարս,— ասաց Շողերը- Լևոնը քեզ բան չի՞ ասել, նամակ չի գրե՞լ:

- Ասել է, ասել,- ժպտաց Վարսենիկը:- Բարով-խերով արժանանաք իրար:

Աղջիկը թունդ կարմրեց ու ժպտաց.

- Վարսենիկ հարս,- ասաց նա:- Ի՞նչ կլինի թողնես ձեր տուն գամ, իրար հետ սպասենք Լևոնին: Խոսք եմ տվել:

- Իսկ հերդ ու մերդ ի՞նչ կասեն այ բալա:

- Եթե դու հա ասես, հերս ու մերս ի՞նչ պիտի ասեն, ով կարող է քո խոսքը գետնին թողնել, Վարսենիկ հարս: Ախր ես խոսք եմ ավել, ուզում եմ սպասել Լևոնին:

- Եթե խոսք ես տվել, ուրեմն պիտի սպասես,— ասաց Վարսենիկը ակամա խստությամբ, որովհետև միայն այդ խենթունկ աղջկան չէր ասում, բոլոր սպասողներին էր ասում, աշխարհին էր ասում և իրեն էր ասում:— Ուրեմն պիտի համբերես ու սպասես որտեղ էլ լինես, ձեր տանը, մեր տանը, թե մի ուրիշ տեղ:

Աղջկա խաժ աչքերն իսկույն արցունքով լցվեցին:

- Վախենում եմ, Վարսենիկ հարս, վախենում եմ: Շատ են նեղում: Օր ու արև չեն տալիս: Իմ հերն ու մերն էլ, մի քանի տղա կա՝ նրանք էլ: Վախենում եմ՝ չդիմանամ: Իսկ որ քեզ հետ լինեմ, կդիմանամ, ու ոչ մեկն ինձ չի ասի, թե աչքիդ վերև ունք կա: Համ էլ, Վարսենիկ հարս, Լևոնը որ իմանա ինձ տեր չես կանգնել, ով գիտի, կարող է թե նեղանա, ճիշտ չեմ ասու՞մ:

Վարսենիկն ինքն էլ զարմացավ, որ ծիծաղում է սրտանց՝ սիրով նայելով այդ թիզ ու կես խորամանկ սատանային:

- Դե միանգամից ասա, որ երկու ոտքս մի մաշիկի մեջ ես դնում, էլի,- շարունակելով ծիծաղել,- ասաց նա: - Համաձայն եմ, համաձայն ու կխոսեմ ծնողներիդ հետ, էնպես արա, ոնց որ քո սիրտն է ուզում: Մանավանդ որ,— ավելացրեց Վարսենիկը,— մանավանդ որ քո ոտքը ծիծաղ բերեց մեր տուն, աղջիկ ջան... Ես վաղուց չէի ծիծաղել... Մեղա աստծո... Եվ քանի որ դու ուրախացրիր ինձ, արի ես էլ քեզ ուրախացնեմ, բալա,— նա ծոցից մի նկար հանեց, մեկնեց աղջկան,- Լևոնիս նկարն է, երեկ եմ ստացել, դռշին էլ մի մեղալ «Խիզախության համար» ...Մեռնեմ իրա խիզախ ջանին:

- Ես էլ եմ ստացել,— ուրախ ծիծաղեց աղջիկը ձեռքի ծրարը առաջ պարզելով: - Ես էլ բերել էի, որ քեզ ուրախացնեմ, Վարսենիկ հարս...

- Ուրախության մեջ ապրես,— հանկարծահաս խանդի զգացումն անմիջապես վանելով, սրտանց մաղթեց Վարսենիկը: - Ու սրանից հետո նանի ասա ինձ, աղջիկ ջան, որովհետև էլ ինձ նանի կանչող չկա: Կարոտել եմ:

Ու նրանք արդեն միասին էին սպասում: Շողերը Լևոնին, Վարսենիկը՝ Մանասարին, Լևոնին, Գրիգորին, Շամամին: Հարյուր անգամ Վարսենիկը գրասենյակ գնաց ու խնդրեց թույլ տան, որ Երևան մեկնի որդուն ու աղջկան տեսնելու: Չթողեցին: Աշխատող չկա, ասում էին, իսկ աշխատանքը շատ, անհատնում: Երկրին ծխախոտ էր պետք: Ինչի՞ նման էր, որ հազար հոգս ու ցավի տեր երկիրը ծխողների համար ոսկով էր ծխախոտ գնում: Հարկավոր էր սեփական ծխախոտ աճեցնել և որոշում էր եկել, որ որտեղ հնարավոր է ծխախոտ ցանեն: Հոնուտում հնարավոր էր: Եվ կլիմայական պայմաններն էին բարենպաստ և նախկին այգիների տակ գտնվող հողն էր հոգնել հացից և դեկավարներն էին պատրաստակամ: Վերացրեցին հացը, ծխախոտի սածիլներ տնկեցին: Հենց առաջին տարում հիանալի բերք ստացվեց: Բայց ո՞վ չգիտի, որ բերքն իրեն-իրեն չի ստացվում և ծխախոտի մշակությունից ավելի դառն ու դժվարին գործ չկա: Ամբողջ օրը կռացած աշխատելուց նվում, կոտրատվում էր կանանց մեջքը, իսկ երբ կեսօրին, որևէ սուտ ստվերում, պատահաբար փրկված որևէ վայրի տանձի ծառի տակ ջահել հարսները ծխախոտի թույնից սևացած ձեռքերով ուզում էին կրծքով

կերակրել շոգից նվաղած նորածիններին, մանկիկներն իրենց փոքրիկ լեզուներով զզվանքով ետ էին հրում մայրական ստինքներն ու ճչում սրտապատառ:

Վարսենիկն էլ էր ծխախոտի վրա աշխատում; Եվ չէր զարմանամ, որովհետև սովոր էր, որ միշտ, անպայման իրեն պետք է ուղարկեն այն աշխատանքին, որն ամենաձանձր է: Եվ թող շատ չերևակայի իրեն, որովհետև առանց այդ էլ մեծ լավություն են անում, որ նրան թույլ են տալիս աշխատել կոլտնտեսությունում: Եվ Վարսենիկն այնպես էր աշխատում, ասես ամեն անգամ Գողգոթա էր բարձրանում և ուսին տանում էր իր խաչը՝ լուռ, համբերությամբ և անտրտունջ: Եվ որքան ծանր էր լինում աշխատանքը, այնքան թեթև էր զգում հոգով, որովհետև մտածում էր, թե շատ անխիղճ բան կլինի, եթե ինքը հանգիստ ապրի, երբ ամուսինն ու զավակները օտարության, նեղության մեջ են: Եվ մտածում էր, որ եթե ինքը շատ տանջվի, տառապի ու համբերի, աստված մի օր բավարար կհամարի իր պատիժը և ետ կքաշի իր անեղ սուրբը, որ չգիտես ինչու բարձրացրել է Սանասարի և իրենց խեղճ զավակների վրա:

Բայց աստված երևի ինքն էլ չգիտեր իր արածը, որովհետև ամեն ինչ խառնել էր իրար և իրար էր խառնել նաև մարդկանց լացն ու ծիծաղը:

Սկսվել էր Հայրենական մեծ պատերազմը: Սուգ էր ամբողջ երկրում: Սուգ էր Հոնուտում: Տուն չկար, որտեղից ողբ ու լացի ձայն չբարձրանար; Եվ բոլորի հետ ողբում էր նաև Վարսենիկը: Սանասարը չկա, Լևոնը, ուրեմն, կմնա բանակում: Բանակ կուղարկեն նաև Գրիգորին: Շամամը դեռ հիվանդանոցում է: Դե էլ ո՞նց չսգաս ու ամեն բանակ մեկնողի հարազատների հետ վիշտդ նորոգելով լաց չլինես անսփոփ ու անմխիթար: Եվ համատարած այդ վշտի մեջ, համատարած այդ սևի մեջ, արեգակի պայծառ շողի նման, բախտի մի նոր, զարմանալի քմահաճույքով, մեկ էլ հանկարծ մի նամակ եկավ Վարսենիկին: Լևոնը չէր գրել, չէ , և ոչ էլ Գրիգորը: Նրանցից շուտ-շուտ էր նամակ գալիս, նամակ էր գրել Վարսենիկի ձախորդ, տարաբախտ ու կորած ամուսինը՝ Սանասար Ալեքսանյանը:

Դա այնքան անսպասելի էր, որ Վարսենիկն ավելի շատ լաց եղավ, քան ուրախացավ: Որովհետև որքան ճիշտ էր, որ նա այդ ողջ ժամանակամիջոցում ֆանատիկորեն համոզում էր իրեն, թե ողջ է ամուսինն ու սպասում էր նրան, նույնքան էլ ճիշտ էր, որ մտքում հարյուր անդամ սզացել էր նրա կորուստը ու նույնիսկ պատկերացրել, թե ինչպես է մեռնում ամուսինը՝ օտարության մեջ, արցունքն աչքին, երեխաների կարոտը սրտում: Բայց նամակն այնքան հավաստի էր, նույնիսկ հոտով այնքան ծանոթ ու հարազատ, որ ոչ մի կասկած չէր թողնում իսկության մասին: Ուրեմն ճակատագիրը մի անգամ էլ էր կամեցել, որ հրաշք լինի, որ անէությունից հայտնվի մարդն ու մի անգամ էլ փոթորկվի, ցնծա Վարսենիկի տառապած հոգին:

Տեսրակի թղթի մի ամբողջ էջ բռնած քաղցր ու կարոտալի բարևներից հետո, Սանասարը գրում էր, թե հաշվի առնելով այն, որ ինքը Սիբիրում ցրտադիմացկուն խնձորի ու տանձի նոր տեսակներ է ստացել և իր բրիգադով հազար հեկտարի վրա զցել նոր այգիներ, և նմանապես հաշվի առնելով, որ ամբողջ այդ ժամանակամիջոցում կարգ ու կանոնի ոչ մի խախտում չի արել, դեկավարությունը դրականորեն է լուծել նրա խնդրանքը և թույլ է տվել իր նման մի քանի արժանավորների հետ մեկնել բանակ գերմանական զավթիչների դեմ կռվելու:

Սանասար Ալեքսանյանը գրում էր նաև, որ ինքը հիմա գտնվում է ռուսական մի փոքրիկ քաղաքում: (Քաղաքի անունը ջնջված էր): Ու համարյա թե կովի մեջ են: Սպասում են, որ համալրվի իրենց գունդը, որ գնան ռազմաճակատ: Եվ որ ինքը բոլորովին էլ չի վախենում (միթե այլևս որևէ բան կարող էր երկյուղ պատճառել նրան) և իր սրտի հատոր ու հոգու կտոր Վարսենիկին էլ նույն խորհուրդն է տալիս՝ չվախենալ ու սպասել, որովհետև բախտն իրեն այնպիսի-այնպիսի տեղերից է փրկել, դուրս բերել (ներս տանելու մասին մոռացել էր), որ կափսոսա ու թույլ չի տա այլևս, որ իր գլխին որևէ նոր փորձանք գա: Որովհետև ինքը հիմա մորից ասես նոր է ծնվել ու նոր պիտի ապրի իր Վարսենիկի հետ, իր Լևոնի, Գրիգորի, Շամամի հետ, նոր պիտի իսկական տիրություն անի նրանց և իսկական մարդ դառնա իր տանջված Վարսենիկի համար: Ու գրում էր նաև, որ սիրտը ծտի թևով ուզում է հենց հիմա թռչել, գալ հասնել հայրենիք, հայրենի օջախը, բայց գիտի, որ Հոնուտ տանող ամենակարճ ճանապարհը Բեռլինի վրայով է: Կհաղթեն անիծյալ Հիտլերին՝ աշխարհին ու մարդկանց տառապանք ու ցավ բերողին, ու նոր տուն կգան: Հանգիստ սրտով: Ու էդ ժամանակ ինքը արդեն ոնց որ պետք է իր հաշիվները կմաքրի Հիտլերի հոնուտցի ծնունդ Բագրատ Թոփալյանի հետ: «Բագրատ Թոփալյան» բառերը չգիտես ինչու ջնջված էին, բայց ինչպես երևում է՝ գրաքննիչը սրտանց չէր ջնջել, որովհետև գծի տակից պարզ կարդացվում էին: Եվ հարցնում էր, թե այգիներից որևէ բան մնացե՞լ է ու անմիջապես էլ մխիթարում էր, թե ոչինչ, ինչ էլ լինի, կգա ինքը ու այնպիսի այգիներ կգցի Հոնուտում, որոնց նմանը աշխարհը դեռ չի տեսել:

Վարսենիկը հանուն այդ անլուր ուրախության, մեղք գործեց, մորթեց իր միակ կաթնատու ոչխարը: Մի մասը Երևան ուղարկեց Գրիգորին ու Շամամին, մեծ մասն էլ կտրատեց, ճաշ եփեց մի հսկայական կաթսայի մեջ ու գյուղի սոված, երկու ամսում չոփ դարձած երեխաներին հավաքեց կաթսայի շուրջը: Ասել էր, որ երեխաներն իրենց գդալով ու ափսեով գան, ու հիմա տեսնելով, թե այգ մատնաչափ երեխաներն ինչպես են փոքրիկ ձեռքերով դժվարությամբ բռնած իրեն պարզել մեծ-մեծ ափսեները: Ճաշ էր լցնում ու լաց էր լինում.

- Կերեք, ձեզ մատաղ, կերեք, - ասում էի նա, լցնում էր ու լաց էր լինում:

Եթե աստված գոյություն ունենար, նա այդ կաթնատու ոչխարը անկասկած կհամարեր ամենամեծ մատաղը, ամենամեծ զոհը, որ երբևէ մատուցվել է իր գոհասեղանին, սովալլուկ երեխաների երջանիկ ճիչ-աղաղակները տավիղների քնքուշ նվագի նման կշոյեին նրա ականջը, կփափկացնեին սիրտը, կմեղմացնեին զայրույթը ոչ միայն Վարսենիկի չունեցած, այլև ողջ մարդկության ունեցած ու չունեցած մեղքերի նկատմամբ:

Բայց աստված երևի չկար:

Եվ թափվում էր հարյուր-հազարավոր անմեղ մարդկանց արյունը և հիմնահատակ կործանվում էին նրանց բարձրացրած քաղաքներն ու գյուղերը և ընդհանրապես կատարվում էին այնպիսի անմիտ, անհեթեթ, անխիղճ դեպքեր ու դժբախտություններ, որ թվում էր, թե որևէ տրամաբանությունից զուրկ են, եթե դժբախտությունը երբևէ կարող է տրամաբանություն ունենալ զոհերի աչքում:



Վարսենիկը երանության և երջանկության մեջ նոր էր հասցրել նամակներով տեղեկացնել իր զավակներին, որ նրանց հայրը ողջ է, առողջ է և բանակում է գտնվում, երբ փոստատարը մի նոր նամակ բերեց նրան:

Տանը Վարսենիկն ու Շողերն էին, և Վարսենիկը վեր թռավ ուրախությունից.

- Ումի՞ց է,- հարցրեց անհամբեր:- Սանասարի՞ց է, Լևոնի՞ց է, Գրիգորի՞ց է, Շամամի՞ց է...

- Համբերի կարդամ, նանի ջան,- ծիծաղեց Շողերը,— համբերի:- Հետո բացականչեց զարմացած.- Տաշքենդից է:

- Որտեղի՞ց...

- Տաշքենդից,- կրկնեց աղջիկը:

- Պահ,- բացականչեց Վարսենիկը,— այ քեզ մատաղ, Սանասարս էնտեղ էր ապրում, կարո՞ղ ա մեր հայն էնտեղ տուն-տեղ, կնիկ- մնիկ է ունեցել ու հիմի իրա երեխան է գրողը... Ով էլ լինի, քանիսն էլ լինեն, կբերեմ-կպահեմ, աստված վկա...

- Հենց երեխաներ են գրում,- մեկ թղթին, մեկ Վարսենիկին նայելով, անհանգստացած ասաց Շողերը:- Այսինքն՝ երեխաների անունից դասատուն է գրում:- Նա մի քանի տող էլ կարդաց մտքում, հետո ասես օձից խայթվածի պես վեր թռավ տեղից, մի կողմ նետեց նամակն ու դուրս փախավ հեծկլտալով ու աղաղակելով:- Չեմ կարդա, չեմ կարդա, չեմ ուզում, չեմ ուզում...

Վարսենիկը վերցրեց նամակը, կրծքին սեղմեց, որովհետև հանկարծ սուր, անասելի ցավեց սիրտը և միանգամից ծանրացած, թուլացած ոտքերը քարշ տալով դուրս եկավ տնից ռուսերեն իմացող գտնելու:

Գրում էր Տաշքենդի N144 մանկատան դաստիարակչուհի Նատալյա Պավլովնա Պոլիշչուկը:

«Թանկագին մայր Վարսենիկ: Ձեզ գրում են մանկատան երեխաները և քաղաքավարության համար չէ, որ ձեզ մայր են կոչում: Այն, ինչ նրանց համար արեց ձեր ամուսինը՝ Սանասար Վարդանի Ալեքսանյանը, միայն սիրատուն հայրը կարող էր անել: Մեր մանկատունը գտնվում էր Բորիսովո քաղաքում: Երբ գերմանացիները սկսեցին ումբակոծել այն, վճռվեց եվակուացնել մանկատունը: Առավոտյան պետք է գնացք նստեինք, բայց անիծյալ ֆաշիստները գիշերը ռումբ նետեցին մեր շենքի վրա: Շենքը սկսեց այրվել, այնինչ երեխաները քնած էին: Սկսվեց մի աննկարագրելի խուճապ և իրարանցում, մանուկները լաց էին լինում և խանգարում իրար: Ես լրիվ կորցրել էի գլուխս, չգիտեի որին հասնել, ինչ անել: Եվ հանկարծ հրաշքի նման հայտնվեցին մեր փրկարարները, երեք կարմիրբանակայիններ, որոնցից մեկն էլ ձեր ամուսին Ալեքսանյանն էր: Նրանք պարեկություն էին անում փողոցում և հրդեհը տեսնելով՝ օգնության էին հասել: Ինչպես նկարագրեմ ձեզ, թե գերմարդկային ինչ ջանքերի գնով նրանց հաջողվեց այրվող շենքից դուրս բերել վաթսուհինգ սարսափից խելակորույս երեխաների: Վերջին երեխային դուրս բերելու ժամանակ, դժբախտաբար, հանկարծ փլվեց առաստաղը և ձեր ամուսինն ու մեր սան Վոլոդյա Մոխրովը մնացին այրվող գերանների տակ: Երբ նրանց դուրս հանեցինք փլատակների միջից, տեսանք, որ Սանասար Ալեքսանյանն ընկնելիս անգամ իր

մարմնով պահպանել էր երեխային: Վոլոդյան ողջ էր, իսկ ձեր թանկագին ամուսինն ու մեր փրկարարը չկար այլևս:

Ես գիտեմ, անհնար է ամոքել ձեր սրտի ցավը, սփոփել ձեր ահռելի վիշտը, սակայն, եթե ինչ-որ չափով կարելի է մխիթարել ձեզ, թող մխիթարեն վաթսունհինգ երեխաների և նրանց ծեր դաստիարակչուհու երախտագիտության զգացումն ու անկեղծ արցունքները, որ մենք թափեցինք նրա գերեզմանի վրա: Մենք երբեք չենք մոռանա հեռավոր Հայաստանի Հնուտ գյուղի բնակիչ Սանասար Վարդանի Ալեքսանյանին, որը մեզ համար հարազատ դարձրեց և Հայաստանը, և Հնուտը, և ճիշտ ապրելու և անձնագոհության օրինակ դարձավ մեր երկրի ապագա վաթսունհինգ քաղաքացիների համար: Իսկ Վոլոդյա Մոխրովի խնդրանքով, որի հայրը հայտնի չէ և որին փրկելով զոհվեց ձեր ամուսինը, այո, հենց Վոլոդյայի խնդրանքով, մենք նրա մանկատան գործի մեջ ավելացրեցինք՝ «Վլադիմիր Սանասարի Մոխրով»: Եվ գործի տակ ստորագրեցին բոլորը:

Խնդրում ենք Ձեզ մխիթարվել հոգով և հպարտանալ, որ այդպիսի մեծահոգի ու քաջ ամուսին եք ունեցել: Անպարտելի է այն ժողովուրդը, որ նման զավակներ է ծնում:

Մահ գերմանական զավթիչներին»:

Հետո արդեն, երբ ուշադիր համեմատեցին Սանասարի առաջին և վերջին Տաշքենդից եկած նամակները, պարզվեց, որ այդ դժբախտ ու ահավոր դեպքը կատարվել է հենց այն զիշեր, որի առավոտյան Սանասարն իր նամակն էր գրել իր սրտի հատոր Վարսենիկին, 1941 թվականի օգոստոսի 24-ին:

## ՀՈՒՇԱՐՁԱՆ

Քարտաշ Սուրենը փորեց վերջին թիվը՝ «1», մատով սրբեց, թափեց տաշվածքի մեջ մնացած փոշին, կռացավ, վերցրեց քարի ստվերի տակ դրված կուլան և կլկլոցով խմեց սառը ջուրը: Հետո ձեռքի ափի երեսով սրբեց բեղերին մնացած կաթիլները ու նորից ձեռքն առավ մուրճը: Երբ նա աշխատում էր, քաղց չէր զգում և այդպես էլ քաղցած կմնար, եթե որևէ մեկը չհիշեցներ: Իսկ հիշեցնողներ միշտ էլ լինում էին, հատկապես կինը՝ Ադունիկը:

- Սուրեն՝, - ձայնեց նա՝ հայտնվելով բակում և անմիջապես իր շուրջը հավաքելով այստեղից ու այնտեղից հևիհև դուրս պրծած փշաքաղված հավերին ու աքլորներին: Ճաշդ եղտեղ բերե՛ մ, թե տուն ես գալիս: - Ու անմիջապես էլ հարձակվեց քաղցած թևավորների վրա: - Այ սասկեք դուք, սասկեք, նոր չկերա՞ք, ա՛յ աղվեսի բաժին դառնաք դուք, որ իմ սիրտը հովանա, պրծնեմ ձեզանից:

- Բեր էստեղ, — ասաց Սուրենը:

Ադունիկը ճապոնական սկուտեղի վրա ճաշ ու հաց բերեց, պոմիդոր ու պանիր, ու ինքն էլ նստեց ամուսնու առջև, սպասողաբար նայեց նրան:

- Մի բաժակ արաղն էլ չէր խանգարի, — բեղի տակ փնթփնթաց Սուրենը:

Աղունիկը ծիծաղեց, գրպանից հանեց օղու փոքրիկ շիշն ու բաժակը, լցրեց, դրեց Սուրենի առաջ:

- Այ, կնիկ,- ժպտաց քարտաշը,- ալկոհոլիկի նման արաղը գրպանումդ ես պահում:

- Ուզեցի ուրախացնել քեզ,- ասաց Աղունիկը:

- Ուրախացրիր,— ասաց Սուրենը:

Նա մեծ հաճույքով խմեց օղին, կտրած պոմիդորից հոտ քաշեց ու սկսեց ուտել ճաշը: Լավ ճաշ էր՝ մսով ու կարտոֆիլով, և ինչ-որ հին, ծանոթ ու սրտաշարժ բան էր հիշեցնում: Սուրենը մի գդալ էլ կերավ, հոտ քաշեց հանկարծ հիշեց ու ասաց.

- Չնեղանաս, Աղունիկ, մի քիչ նման է էն ճաշին, որի մասին քեզ պատմել եմ հարյուր անգամ: Նման է, բայց մի քիչ: Վարսենիկ աքոր եփած ճաշն ուրիշ էր, հաստատ ուրիշ էր...

- Դե քեզ համար մի Վարսենիկ աքիր, մի աշխարհ,— մի քիչ նեղացավ Աղունիկը ու լռեց:

- Հը՞, ինչի՞ քիթդ կախեցիր,- հաց ու պանրին անցնելով, հարցրեց Սուրենը:

- Դե պատերազմ է եղել, սով, դու էլ անհեր, քաղցած տղա, կերել ես ու պահել մտքումդ: Էն ժամանակ ինչ էլ ուտեիր, համով կթվար, էլի... Էն ժամանակ անյուղ ու անկարտոշկա փիփերթն էլ է համով եղել...

Սուրենը հոնքերը խոժոռեց ու վեր կացավ տեղից:

- Աման-չամանը հավաքիր ու գնա: Ես աշխատում եմ:

- Հետո, որ ճիշտն ասենք՝ մեր ձեռքն ու՛ր, Վարսենիկ աքոր ձեռքն ու՛ր, նա ամբողջ գյուղին է կերակրել,- անմիջապես նահանջեց Աղունիկը: - Ասում են Շամամը հիվանդանոցից ուղարկված նամակներում անընդհատ էր մասին է գրել: Գրել է, «Ախ, մայրիկ ջան, մի անգամ էլ քո եփած ճաշն ուտեի ու հետո ինչ ուզում էր, թող լիներ»:

- Ճիշտ է,- ասաց Սուրենը,- ես կարդացել եմ:

Նա նստեց նորից, մի սիգարետ վառեց, ծխեց՝ խոր ներս քաշելով ծուխը, մտազբաղ ու սևեռուն նայեց քարին, որի վրա սովերները պարզ ընդգծել էին «Սանասար Ալեքսանյան» բառերը, հետո վեր կացավ՝ վերցրեց քանոնն ու սուր դանակը, չափեց-չափչփեց, երկու գիծ քաշեց ու վերևից ու ներքևից և արանքում լայն, արամեական տառերով գրեց. «Շամամ - 1927 - 1941»:

## ՇԱՄԱՄ

Շամամը պառկած էր Երևանի 3-րդ հիվանդանոցի երրորդ հարկի N 32 հիվանդասենյակում, որտեղ նրանից բացի երեք հոգի էլ կային: Ավելի ճիշտ՝ արդեն երկուսն էին մնացել, երրորդի մահճակալը դատարկ էր: Այդտեղ մի քանի օր Պայծառ անունով մի կին էր պառկած՝ նոր Բայազետի շրջանի Սարուխան գյուղից: Բժիշկներին խնդրեց-աղաչեց՝ կամ իրեն տեղափոխել պալատից, կամ էլ Շամամին:

- Ես օպերացիա եղած, հիվանդ կնիկ եմ,- ասում էր,— էլ չեմ դիմանա: Էս աղջիկն էնքան կծիծաղեցնի, որ կպատռի փոքրս:

Ստիպված հենց Պայծառին էլ տեղափոխեցին, որովհետև սենյակի մյուս հիվանդները ոչ մի կերպ չէին ուզում Շամամից բաժանվել:

- Նրա ծիծաղը դեղ է մեզ համար,— ասում էին:

Իսկ աղջիկն այդ դեղից շատ ուներ: Դեռ մանկությունից: Այնքան էր ծիծաղում ու ծիծաղեցնում մարդկանց, որ անունը կչկչան էին դրել: Որտեղ էլ լիներ, նրա պարզ, զրնգուն ծիծաղից կարելի էր իմանալ տեղը: Ամեն ինչի մեջ ծիծաղ էր փնտրում ու տեսնում, ամեն շարժումի ու երևույթի մեջ որսում ծիծաղելին: Ով էլ անցներ փողոցով, նա կարող էր ճիշտ և ճիշտ նույն շարժումներով հետևել նրան: Մարդիկ նայում էին նրան և ուշաթափվում ծիծաղից: Նա կարողանում էր մի թեթև շարժումով, դեմքի մի գրեթե աննկատելի խաղով այնպես ընդօրինակել բոլորին ծանոթ մեկին, որ անհնար էր առանց ծիծաղի նայել նրան: Բժիշկներն անգամ հաճախ էին մտնում նրա հիվանդասենյակը:

- Աղջիկ ջան, մատաղ, մոժն<sup>ո</sup> իմ տնագն էլ անես,— խնդրում էր Ղարաբաղից եկած բժշկուհի Արևիկ Յուլակովան:

- Նեվզմոժն, բժշկուհի ջան,— ճիշտ նույն ձայնով պատասխանում էր Շամամը,- տերը թույլ չի տալիս, մատաղ:

Եվ բժիշկները հռչակով դուրս էին թափվում սենյակից:

Դեռ լրիվ երեք տարեկան էլ չկար, որ ծիծաղեցրեց ծնողներին: Ամեն անգամ տուն մտնելիս Սանասարը կոնֆետի փոքրիկ, գույնզգույն կլոր գնդիկներ էր նվիրում աղջկան, գնդիկներ, որ «մի կոպեկանոց» անունն ունեին, որովհետև իսկապես վաճառվում էին հատը մեկ կոպեկով: Մի օր էլ Վարսենիկը տեսնում է, որ աղջիկը եկել է բակից՝ բռի մեջ սեղմած ոչխարի չոր կտտորներ:

- Էդ ինչ<sup>ո</sup> է, այ աղջի - ձեռքերն իրար է խփում Վարսենիկը:

- Մի կոպեկանոցներ են,— լրջորեն պատասխանում է Շամամը:- Հավաքել եմ Գրիգորի համար:

- Բա դո՞ւ ինչի չես ուտում, դու...

- Ես էս գույնի մի կոպեկանոցներ չեմ սիրում,— լրջորեն ասում է Շամամը, հետո կչկչում է միանգամից ու դուրս փախչում:

Իսկ մի քանի տարի հետո, երբ Սանասարն արդեն չկար, և ընտանիքը Հոնուտի գոմում էր ապրում, մի ուրիշ օյին հանեց: Վարսենիկը գոմի մի անկյանում քսան-քսանիինգ ձու էր հավաքել և մի հավի թուխս դրել դրանց վրա: Երեկոյան աշխատանքից հետո տուն եկավ, տեսավ որ թուխսը շրջում է բակում: Բռնեց, բերեց դրեց ձվերի վրա, բայց թուխսը նորից

փախավ: Մնաց զարմացած Վարսենիկը, ի՞նչ կարող էր պատահած լինել, թուխսն ախր նստած էր արդեն: Եվ գաղտնիքը բացեց Շամամը.

- Հիմար հավ է,— ասաց նա ծիծաղելով,— ես որ պողը լվացի, նանի ջան, ասացի՝ հավի ոտքերն էլ լվանամ, որ տունը չցեխտոխ: Բռնեցի, մտցրեցի թաշտի մեջ ու մի լավ լողացրի: Հո մի դալմադալ չգցեց, ոնց որ թե մորթում էի, թողեց փախավ:

- Սառեցրել ես թխականին, այ սատկես դու, բա թուխս նստած հավին կթրջե՞ն,— ակամա ծիծաղեց Վարսենիկը:

- Պահ-պահ-պահ, մի դրա նագուտուզին նայիր,- հեզնեց Շամամն ու մեկ էլ ճիշտ նույն հավի նման սկսեց կռթկոթացնել,- ես էլ ասում եմ ինչ էր ասում:

Դե ո՞նց չծիծաղեր Վարսենիկը, թեև արյուն էր կաթում սրտից:

Երբեք և ոչնչից չէր ընկճվում և չէր սիրում, երբ շրջապատում որևէ մեկը խեղճանում կամ ընկճվում էր: Եթե չէր կարողանում մխիթարել մարդկանց, ծիծաղեցնում էր: Ծիծաղը նրա գեներն էր և վահանը միաժամանակ, որով, հարձակվում և պաշտպանվում էր, որով կռվում էր և իր դաժան ճակատագրի դեմ, և ուրիշների համար:

Երբ Երևանում բնակվող նրա քեռի Պետրոսն ու նրա կինը Անուշ հարսը հիվանդանոցում տեղավորեցին Շամամին, աղջկա վիճակը շատ ծանր էր, զառանցում էր, այրվում էր տաքության մեջ, այս ու այն կողմ էր նետում վերմակը՝ ոսկեգույն մազերը շաղ տված բարձի վրա ու Կոմիտաս էր երգում.

- էրվում եմ, վառվում, կարմիր քարը տաշած ա...

Հիվանդասենյակի կանայք և բժիշկները, որ արդեն հասցրել էին սիրել այդ կենսախինդ, համով-հոտով աղջկան, լաց էին լինում՝ առանց թաքցնելու արցունքները, լաց էին լինում անզորությունից և նրա համար, որ այդքան անարդար է աշխարհը: Եվ ամեն մեկն իր լեզվով աշխատում էր հանգստացնել նրան, թեթևացնել ցավերը.

- Ի՞նչ կուզես, արևիդ մեռնեմ...

- Որտեղդ կցավի, յավրումս, լուսնյակի նման աղջիկ...

- Ցավդ տանեմ, ասա, ի՞նչ ես ուզում...

Ու մեկ էլ հանկարծ Շամամը բացեց այրվող կոպերը, ժպտաց իր չքնաղ խաժ աչքերով և ասաց.

- Սառույց:

- Ի՞նչ, ի՞նչ:

- Սառույց,- կրկնեց աղջիկը:

- Ամառվա էս շոգին սառույց ո՞ր տեղից,- չիմանալով ինչ անել, ասաց բուժքույրը:

Եվ Շամամն ասաց.

- Իմ հերը Սիբիրում է, որ նամակ գրեք՝ կուղարկի:

Այդ հարցում նա նման չէր իր եղբայրներին: Նրանք ամաչում էին իրենց վիճակից, անձանոթների մոտ թաքցնում էին, խուսափում էին այդ թեմայի շուրջ խոսել, իսկ Շամամը՝ հակառակը: Երբ նրան չէին հիշեցնում, ինքն էր խոսում այդ մասին՝ տեղին թե անտեղի:

Աշխարհագրության դաս էր, և ուսուցչուհին հարցրեց.

- Ուրեմն, ամփոփենք, ովքե՞ր են ապրում ծայր հյուսիսում , ասացեք, երեխաներ.

- Չուկչաները,— ձայնեց մեկը:

- Ապրես, ուրի՞շ:

- Նենեցները:

- Ապրես, ուրի՞շ:

- Ժողովրդի թշնամիները,— լրջորեն ասաց Շամամը,— օրինակի համար իմ հերը:

Եվ հոգեբանական մի զարմանալի առեղծված էր ստացվում. Լևոնին ու Գրիգորին ճնշում, հալածում էին այդ փաստի համար, իսկ Շամամին կարեկցում ու պաշտպանում էին: Նույն տեր Մարկոս պապի մյուս թոռը, որ քարտուղարն էր, Շամամին նույնիսկ առաջարկեց դիմում տալ կոմերիտմիության շարքերն ընդունվելու, բայց աղջիկը թափահարեց ոսկեծամ մագերը:

- Չի լինի, ասաց նա: -Ես մեծ ախպերներ ունեմ: Առաջ նրանց, հետո ինձ...

Եվ հարցը փակվեց:

Հիվանդանոցի երրորդ հարկի բժշկական անձնակազմը ամեն ինչ անում էր Շամամի հիվանդությունը բուժելու համար: Ոչ մի դեղամիջոց չէին խնայում, իսկ ուշադրության մասին խոսել անգամ չարժեր, որովհետև իրենք էին խնդրում աղջկա ուշադրությունը: Հատկապես ջահել բժիշկներից մեկը, որին բոլոր հիվանդները Արտո էին կանչում և նա մազաչափ իսկ չէր վիրավորվում դրանից: Արտո է, թող լինի Արտո, ոչինչ չի ավելանա, եթե նրանք իրեն կոչեն Արտավազդ Բարսեղովիչ: Արտոն ավելի լավ է, ավելի մտերիմ է: Եվ ահա այդ Արտոն գրեթե չէր հեռանում Շամամի մահճակալի մոտից, անընդհատ որևէ առիթ էր փնտրում N 32 հիվանդասենյակը մտնելու, Շամամի խաժ աչքերին և ոսկե վարսերին նայելու համար: Գիտեր, որ Շամամն իր տնագն էլ է անում, բայց դրանից անգամ չէր վիրավորվում: Իսկ նրա տնագն, անելը մի առանձին բարդ բան չէր, որովհետև Երևանի Կոնդ թաղամասում ծնվելով, Արտոն իր բառապաշարում ամենից շատ օգտագործում էր «արա և տո» բառերը:

Մեկ-մեկ ծաղիկներ էր բերում, հատկապես թունդ կարմիր, թավշե կոկոնով վարդեր և որպեսզի Շամամը չիմանա, քույրերից մեկի միջոցով ուղարկում էր նրան: Բայց վարդերը

հիվանդի գլխավերևում, ջրով լի ապակե անոթի մեջ տեղավորելու ժամանակ, բուժքույրը հիացմունքով ժպտալով ասում էր.

Ամա՛ն, ուրիշ սիրտ ունի մեր բժիշկ Արտոն...

Եվ դրանից հետո այնքան էլ դժվար չէր լինում կռահելը, թե ով է վարդերը բերել:

Այդ թեման ամբողջ օրը քննարկվում էր հիվանդասենյակում:

- Շատ ջիգյարով մարդ է,— ասում էին:

- Միրտը սեր է ընկել, սեր, գիտե՞ս ինչ բան է սերը...

- Աղջի Շամամ, ոնց որ թե բժիշկ Արտոն սիրում է քեզ, ինչ ես մտածում...

Շամամը շուրջն էր նայում պայծառ, չարաճճի հայացքով, հետո ծանր ու կեղծ հառաչում էր՝ խումար դարձնելով աչքերը և ասում էր բժշկուհի Արևիկ Յուլակովնայի ձայնով.

- Նեվզմոժնի պյան ա, մատաղ, մեր խոզարած Պատոյին խոսք եմ տվալ...

Եվ ծիծաղի պոռթկումից ցնցվում էր հիվանդասենյակը...

Երբեմն էլ իր հիվանդությունն էր ծաղրում.

- Էս իմ հիվանդությունը ի՞նչ հաջողության էր,— ասում էր,— որ սա չլիներ, ամբողջ կյանքս Հոնուտում էի անցկացնելու, չիմանալով, թե ինչ անմահական բան է տաք կակաոյի մեջ թաթախած սպիտակ բուլկին: Չէ՛, բախտս լավ բերեց: Մրանից ավելի համով բան աշխարհում չկա... Եթե չհաշվենք իմ մոր՝ Վարսենիկի եփած ճաշերը,— ավելացնում էր հանկարծ անասելի տխրելով ու շրջվում էր պատի կողմը:

Նա անպայման կփրկվեր, եթե նույն ձևով հիվանդանոցում մնար գոնե երեք ամիս: Սեփական կենսասիրությունը, լավատեսությունը, հիանալի սնունդը, նոր դեղամիջոցներն ու ամենակարևորը մարդկանց հոգատարությունն ու ուշադրությունը, անպայման կփրկեին այդ պայծառ աղջկան: Նույն հիվանդությամբ քանի-քանիսն էին բուժվել, բայց նա բախտ չուներ:

Եվ նրա դժբախտությունը պատերազմն էր:

Միանգամից ամեն ինչ տակնուվրա եղավ: Ծանր ու ճնշիչ լռություն իջավ հիվանդասենյակներին, սնունդն անմիջապես կրճատվեց, դեղամիջոցները խիստ հաշվառման ենթարկվեցին և ասպարեզում մնացին միայն գլխացավի հաբերը, բժիշկների ու բժշկուհիների մեծ մասը անվերապահորեն գորակոչվեցին, հիվանդանոցի պատերից հավաքվեցին բոլոր պլակատներն ու լոզունգները: Մնաց միայն մի լոզունգ՝ «Ամեն ինչ ռազմաճակատի համար»:

Ռազմաճակատ մեկնելուց առաջ իր հիվանդներին այցի եկավ բժիշկ Արտոն: Նա զինվորական համազգեստով էր ու լեյտենանտի տարբերանշաններով և միանգամից այնպես էր փոխվել, որ սկզբում ոչ ոք չճանաչեց նրան: Եկավ, հերթով այցելեց իր բոլոր հիվանդներին,

քննեց վերջին անգամ, խորհուրդներ տվեց, դեղատոմսեր գրեց, հետո մոտեցավ ու նստեց Շամամի մահճակալին: Ու որ նստեց Շամամի մահճակալին, մյուս հիվանդները, ինչոր գործեր հիշելով, տնքսնքալով դուրս եկան սենյակից:

- Ոնց ես, ոսկեծամ աղջիկ,- ժպտաց Արտոն:

- Լավ եմ,— ասաց Շամամը:

- Քեզ համար թուֆ եմ բերել, մեր այգուց,- ասաց Արտոն,- արի իրար հետ ուտենք: Մեկ էլ ով գիտե երբ եմ ես թուֆ ուտելու:

Մի քանի հաս թուֆ վերցրեցին, կերան՝ պոչերից բռնելով: Շամամը ծիծաղեց.

- Առաջին անգամ տեսա, որ թուֆը պոչ ունի,— ասաց,— մեր գյուղում թուֆը մանր է լինում, մենք բռերով էինք ուտում:

- Արի հիմա էլ բռերով ուտենք,- աշխույժով առաջարկեց տղան:

- Չէ, չի լինի,- ետ քաշվեց աղջիկը: - Ամեն ինչ իր ժամանակն ունի, բժիշկ:

Բժիշկ Արտոն փաղաքշանքով նայեց նրան, ուզեց ինչ-որ բան ասել, մտածեց երկար-երկար ու ասաց.

- Ամենակարևորն այն է, որ չմրսես, հասկանում ես, մինչև լրիվ չլավանաս, դուրս չգաս այստեղից, քեզ լավ պահիր, ոսկեծամ աղջիկ:

- Լավ,- ասաց Շամամը ու հանկարծ ծիծաղեց:

- Ինչո՞ւ ես ծիծաղում, Շամամ:

- Որովհետև առաջին անգամ է, որ խոսելիս ոչ «արա» ասացիր ու ոչ էլ «տո», բժիշկ Արտոն:

Ծիծաղեց նաև Արտոն:

- Էհ,- ասաց,- դրանք թողնելու եմ այստեղ, Երևանում, էնտեղ «արա» ու «տո» հասկացող չկա, ոսկեծամ աղջիկ, ռուսերեն պետք է խոսենք:— Ձեռքը մեկնեց, կամացուկ, եղբոր նման շոյեց աղջկա վարսերն ու դուրս եկավ:

Իսկ մի ամիս էլ չանցած, հիվանդանոցը փակեցին: Ռուսաստանից վագոններով վիրավորներ էին գալիս, պետք էր տեղավորել, բուժել նրանց, և Երևանի բոլոր հիվանդանոցները և շատ դպրոցներ մի օրում դարձան զինվորական հոսպիտալներ: Հիվանդներից ով տեր ուներ, տարան... ով չուներ՝ ուղղակի դուրս գրեցին: Հրաման էր: Այլ ելք չկար: Շամամի ետևից էլ Պետրոս քեռին ու Անուշ հարսն եկան, ոտքով կամաց-կամաց տարան իրենց տուն Գնունի փողոցի վրա:

- Բա ձեր տանը տեղ կա որ, գուցե թե գյուղ ուղարկեիր, քեռի,- ասաց Շամամը:



Անուշ հարսը լաց եղավ:

– Տանն էլ ո՞վ է մնացել, այ բալա, տղերքին տարան բանակ: Էլի քեզանով ենք մխիթարվելու:

– Էնպես եմ կարծում, որ ձեզ երկար չեմ խանգարելու, Անուշ հարս, — ասաց Շամամը:

Պետրոս քեռին հասկացավ:

՝ – Շաշ-շաշ մի խոսի, — զայրացավ նա: – Ես քեզ հենց մեր տանն էլ պսակելու եմ, ոնց որ Թևանի աղջկան բերեցի ու պսակեցի: Հիմի երեք երեխա ունի ու տոմսավաճառ է աշխատում տրամվայի վրա: Նա քեզնից փիս հիվանդ էր:

– Տոմսավաճառ չեմ ուզում, — ծիծաղեց Շամամը, — ես բժշկուհի եմ որոշել դառնալ, Պետրոս քեռի:

– Կդառնաս, բա ի՞նչ, քեզ մատաղ, — հաստատեց Անուշ հարսը: Դանդաղ քայլելով անցան Կաուչուկի գործարանի բնակելի շենքի մոտով:

– Պետրոս քեռի, — հարցրեց Շամամը, — էս ո՞նց է, որ իմ ախպեր Գրիգորը չկա: Հիվանդանոցում ամեն օր կողքիս էր, բայց արդեն մի շաբաթ չի երևում:

Անուշ հարսը փղձկաց ու շփոթահար հազաց անմիջապես, որպեսզի աղջիկը ոչինչ չնկատի:

– Երևի խառն է գլուխն, էլի, — կնոջը խեթ-խեթ նայելով, ասաց Պետրոսը, — Դե պատերազմ է, կարծես թե եղ ջահելներին էլ են հավաքելու, աղջիկ ջան:

– Իմ Վարսենիկ մերն էլ չի դիմանա, քեռի, — լաց եղավ Շամամը: – Իմ Վարսենիկ մերն էլ չի ապրի:

Բայց սխալվում էր Շամամը: Նրա Վարսենիկ մայրը դիմացավ ու ապրեց:

Չապրեց Շամամը: Ինչպես և խոստացել էր, նա երկար նեղություն չտվեց իր Պետրոս քեռուն ու Անուշ հարսին և ընդհանրապես որևէ մեկի նեղություն չտվեց: Թե գիշերվա որ ժամին հանգավ այդ պայծառ, այդ կչկչան աղջիկը, ոչ-ոք չիմացավ նույնիսկ, որովհետև հանգել էր անձայն, անտրտունջ ու լուռ, ինչպես մոմը:

Հեռախոսով ինչ-որ կերպ կապվեցին Տաուշի հետ, խնդրեցին ինչ-որ կերպ տեղեկացնել հոնուտցի Վարսենիկին, որ հիվանդանոցում գտնվող նրա աղջիկը հիմա քեռու տանն է ու մորն է ուզում: Հետո նստեցին, հաշվեցին, թե պատերազմական այդ ծանր ու դժվարին ժամանակներում Վարսենիկը ե՞րբ տեղ կհասնի ու որոշեցին թաղել ոսկեծամ աղջկան: Ամառ էր, շոգ, պահել չէր լինի: Ու թաղեցին մի քանի ազգականներով, առանց աղմուկի ու նվազի, Թոխմախ լճի մոտ գտնվող գերեզմանատանը, ու կանայք բարձրաձայն լաց եղան շեկ հողից բարձրացած փոքրիկ շիրմի վրա, չքնաղ ու անբախտ Շամամի համար, իրենց բոլոր կորցրածների համար և Վարսենիկի սև ճակատագրի համար:

Եվ ճիշտ արեցին, որ թաղեցին: Վարսենիկը չորս օր հետո միայն հասավ մայրաքաղաք: Նա ոչ մեքենա էր գտել ու ոչ էլ նույնիսկ ձի և Հոնուտից մինչև Երևան տանող ամբողջ

ճանապարհին անցել էր ոտքով՝ Մրդուզ սարի փեշերով, որտեղ մանուկ հասակում ուլիկի պես քարից քար էր թռչում Շամամը, օղբ զնգզնգացնելով իր կարկաչուն ծիծաղով: Հետո քայլել էր Սևանա լճի կողքով, Հրազդանի ու Սուխոյ Ֆանտանի մոտով, Մհուբ գյուղի միջով ու Քանաքեռով մտել քաղաք, որպեսզի իմանա, որ արդեն երեք օր է, ինչ թաղել են իր աղջկան և որ իր Գրիգոր որդին էլ գտնվում է Երևանի բանտում:

## ՀՈՒՇԱՐՁԱՆ

Երևանից լուսանկարիչ էր եկել, Սուրենին ուղիղ երկու օր կտրեց

աշխատանքից: Հիացած պտտվում էր հոնուտցի զոհված զինվորների

հուշարձանի շուրջը, նկարում հազար ու մի անկյունից, տարբեր լուսավորության տակ, Սուրենի հետ և առանց Սուրենի: Այնքան նկարեց, որ քարտաշը չդիմացավ:

- Ա՛յ ախպեր, որ էդքան նկարում ես,- հարցրեց,- չես հավատում, թե մի բան դուրս կգա՞ :

Լուսանկարիչը ծիծաղեց,

- Ես պրոֆեսիոնալ եմ, թերթում եմ աշխատում,- ասաց նա,- Մեկ անգամ նկարելն էլ ինձ բավական է:

- Բա ինչի ես էդքան չիսկչիսկացնում:

- Որպեսզի տարբեր թերթերում ու հանդեսներում տպեմ,- ասաց լուսանկարիչը,- որպեսզի միության բոլոր կենտրոնական թերթերին ուղարկեմ և արտասահման:

- Եվ քո կարծիքով հոնուտցի զինվոր տղան կհետաքրքրի նրանց,- հարցրեց քարտաշ Սուրենը՝ հաճելիորեն շոյված:

- Բոլորին,- ասաց լուսանկարիչը,- բոլորին, ով այլևս պատերազմ չի ուզում: - Երևում է, որ թերթում ես աշխատում,- չգիտես ինչու խայթեց Սուրենը,— հենց վերնագրերի նման էլ խոսում ես:

- Երևում է, որ սա էլ քո առաջին գործն է,— ետ չմնաց լուսանկարիչը,- դեռ անկեղծ ես ու անփորձ, և դրանից է, որ ստացվել է:

Սուրենը ծիծաղեց զարմացած, որովհետև դա իրոք նրա առաջին գործն էր: Առաջին մեծ գործը: Եվ ինքը կյանքում սովորական, դե գուցե ոչ այնքան սովորական, բայց քարտաշ էլ կմնար, եթե չբարկանար և հոնուտցու կովարար արյունը չխաղար երակներում:

...Նրան հունից հանեցին և քանդակագործ դարձրեցին մայրաքաղաքից հրավիրված, ինչպես այս լուսանկարիչն է ասում, պրոֆեսիոնալ քանդակագործները: Երեք հոգու առանձին-առանձին հրավիրեցին, և երեքն էլ, ասես խոսքները մեկ արած, առաջինը մի հարց էին տալիս միայն.

- Մեջն ինչքա՞ն փող կա:

Չէին հարցնում, թե ինչ են քանդակելու, նախագիծ կա թե չէ, որտեղ են տեղադրելու, պատվանդանն ով պիտի անի: Ոչ մի հարց, միայն.

- Մեջն ինչքա՞ն փող կա:

Եվ դա շատ վիրավորական էր: Գոնե ուրիշ տեսակ հարցնեին, հետո հարցնեին, սպասեին տեսնեին, թե մարդիկ ինչ են առաջարկում: Ի վերջո հո անվճար չէի՞ն անելու: Եթե հատուկ մարդ են հրավիրում Երևանից և այն էլ՝ պրոֆեսիոնալի, վճարի հարցն, իհարկե, վաղօրոք վճռված կլինեի: Բայց նրանք չէ, բարև ու.

Մեջն ինչքան փող կա:

Եվ նախագահ Ցոլակը դառնացած ասաց.

- Ահագին էլ փող է հավաքվել, բայց ձեռքս չի գնամ, որ տամ դրանց: Հենց սկզբից ու միայն փողի մասին խոսողի արած գո՞րծն ինչ պիտի լինի՝ անհասցե, անհամ մի բան:

Ու մեկ էլ ոչ այս կողմ, ոչ այն կողմ, դարձավ Սուրենին, որն ինչ-որ տեղեկանքի համար գրասենյակ էր մտել:

- Բա մենք թասիբ չունե՞նք, - ասաց, - իբր թե որ ուզենաս էդ արձանը դու չես սարքի՞:

- Ե՞ս, - ետ-ետ նայելով, ապշած հարցրեց քարտաշ Սուրենը:

- Դու, դու: Ի՞նչ պակաս քանդակագործ ես: Հորդ անունով սարքած աղբյուրի նմանը կա՞ : Մարդիկ, ավելի շատ գալիս են ոչ թե ջուր խմելու, այլ որ քանդակներով հիանան:

- Հա, բայց աղբյուրն ուր, հսկա հուշարձանն ուր ...

- Ձեռքդ նույնը չի՞ – ասաց նախագահ, Ցոլակը: - Իսկ որ ամենակարևորն է դու գիտես, թե ինչ ես, անելու և ում համար անելու: Էդ արձանը քանդակելու ժամանակ դու համ հորդ հիշելու, համ հորեղբորդ, համ իմ եղբորը, համ, Վարսենիկ աքոր Սանասարին ու Լևոնին, համ քո հարևան Նիկոլի տղա Շամիրին ու մնացած բոլորին, բոլորին: Բոլոր զոհված հոնուսցի տղերքին: Իսկ էդ քանդակագործն ու՞մ է հիշելու, ի՞նչ իմանամ...

Քարտաշ Սուրենի արյունը եռաց երակներում, եկավ լցվեց, ողողեց դեմքը:

- Ասում ես փորձե՞մ, Ցոլակ:

- Ասում եմ՝ սկսիր, — կտրեց Ցոլակը: — Ու նրանց հերն էլ անիծած, փողն ինչի՞ օտար մարդ տանի:

Քարտաշ Սուրենը վիրավորվեց սրտանց:

- Եթե փողի մասին խոսք է լինելու, ես գնամ: Ես իմ հոր արձանը փողով չեմ քանդակելու: .

- Այ տղա, բա փո՞ղն ինչ պետք է անենք, ետ տամ մարդկա՞նց:

- Չէ,— ասաց Սուրենը,— ինչի՞ ես ետ տալիս: Էդ փողով էլ մանկամտուրի շենք սարքի: Էլի մարդկանց համար է: Կնանիք մինչև հիմա երեխաներին մեջքներին կապած են գործի գնում, հին օրերի նման: Ամոթ էլ է, էլի:

- Սուրեն,— հիացմունքից բռունցքով նրա մեջքին խփելով գոռաց Յուլակը,— այ տղա, դու իսկական պետական գործիչ ես...

...Այդ ամենը ընդամենը մի քանի վայրկյանում անցավ քարտաշ Սուրենի մտքով, մինչ լուսանկարիչը արևից կկոցած աչքերով քննախույզ նրան էր նայում:

- Ինչ է,— դիմացինի շփոթվելը տեսնելով, ծիծաղեց նա: - Ճի՞շտ կռահեցի: Դա քո առաջին գործը չէ՞:

- Առաջինն է, ախպեր, դու ճիշտ ես,— ասաց քարտաշ Սուրենը:

Լուսանկարչին ճանապարհ դնելուց հետո, Սուրենն ականա բարձր տրամադրությամբ տուն դարձավ: Էլ սենյակ չմտավ, միանգամից գնաց իր աշխատանքային անկյունը, երկու օր չէր մոտեցել, կարոտել էր, ոնց որ հարազատին: Քարի վրայից քաշեց, ցած բերեց բրեզենտը, մի անգամ էլ կարդաց ինչ գրել էր: Նորից համոզվեց, որ ոչ մի տառասխալ չկա, և նոր գծեր քաշեց ու գրեց գծերի արանքում: «Գրիգոր – 1924-1941»

Եվ ձեռքն առավ մուրճն ու բրիչը:

ԳՐԻԳՈՐ

Մայրաքաղաքը ցնցեց Գրիգորին: Ճիշտ է, նա սրանից-նրանից շատ էր լսել ասֆալտի, տրամվայի, կրկեսի, քյաբաբի ու լիմոնադի մասին, բայց այն, ինչ տեսավ ամեն պատմածից ու նկարագրածից վեր էր: Մի քանի օր նա զարմանքից բերանը բաց շրջում էր քաղաքում, վախվիլելով տրամվայ էր նստում ու Պլանի գլխից ցնցվելով գնում մինչև Կաուչուկի երրորդ մաս, տարօրինակ հագնված հոծ բազմության հետ ելնում ու իջնում Աբովյան փողոցով, երկար կանգ առնում խանութների ցուցափեղկերի առաջ, հմայված նայում խաղալիքներին, արտասովոր հագնված դեղին դեմքերով ու կարմիր շրթունքներով մանեկեններին և բազմատեսակ ու բազմապիսի թխվածքներին և շոկոլադներին, որոնց տեսքից գլուխ էր պտտվում:

Բայց ամենամեծ տպավորությունը նրա վրա, իհարկե, շուկան թողեց, որտեղ ինչ ասես կար և ինչ ասես վաճառում էին: Ի՛նչ գույնզգույն արձաններ կային, ծակ մեջքով աքաղաղներ ու կատուններ, ի՛նչ սիրուն ոսկրապոչ դանակներ, գունավոր սանրեր ու հայելիներ, կարմիր շաքարաքլորներ ու շաքար-նագաններ: Մանրիկ երեխաները թաց կուլաները ձեռքին բռնած վիստում էին բազմության մեջ ու բարակ, զրնգուն ձայներով կանչում.

– Ջուր տամ, ջուր...

Ու երգում էին միաժամանակ,

- Երևանի սառը ջուրը, նոր եմ բերել ախպուրակից...

Ու կանչում էին նորից.

- Մառը ջո՛ւր...

Հանդարտ ու արժանապատվությամբ, արհամարհանքով նայելով սառը ջուր վաճառող մանուկներին, առևտուր անող մարդկանց մի խմբից մյուսին էր անցնում Մենիկ աղան: Եթե նա երբևէ աղա էր եղել նույնիսկ, ապա նրա ողջ հարստությունից երևի մնացել էր այդ զարմանահրաշ, տարօրինակ թեյամանը, որը նա կրում էր մեջքին՝ բաղի երկար վզի նման թեյատար խողովակն ու կտուցի նման բերանը ուսից կախ: Իսկ գոտկատեղում, փորի վրա, հատուկ անցքերի մեջ տեղադրված էին բաժակներն՝ իրենց բաժակակալներով:

- Քաղցր չայ տամ, չա՛յ,- երբեմն-երբեմն ծուլորեն ձայնում էր Մենիկ աղան: Նրան դրամ էին մեկնում, իսկ ինքն էլ մեկնում էր բաժակը, ապա թեքվում էր մարմնով այնքան վարժ, այնքան վարպետորեն, որ բաղի կտուցից թեյն ուղիղ շիթով պարզված բաժակի մեջ էր թափվում:

Դա այնքան հետաքրքիր էր, որ նույնիսկ Գրիգորը ունեցած դրամները մտքում հաշվելով, մի բաժակ խմեց, արտակարգ թեյ էր տաք, համով ու քաղցր:

Հետո կանգ առավ մի ուրիշ տարօրինակ մարդու և նրա տարօրինակ սարքի մոտ, որը չորս ոտքի վրա կանգնած լուսանկարչական ապարատի նման էր, բայց ոչ թե նկարում էր, այլ նկարներ էր ցույց տալիս: Մարդիկ վճարում էին, աչքերը հպում ապարատի անցքերին, իսկ սարքի տերը մի քանի նկարներ փոխելով, բարձրաձայն բացատրություններ էր տալիս.

- Առաջինը Լոնդոնն է, Անգլիայի մայրաքաղաքը: Երկրորդը Նյու-Յորքը, հարյուր քսան հարկանի երկնաքերը: Աղքատները՝ Միոնի պատերի տակ: Հարյուր տարեկան պարսիկ համբալը: Հունաստանի մարալ աղջիկները...

Օգոստոս էր, շոգ, վառում էր արևը, բայց Գրիգորը չէր կարողանում դուրս գալ շուկայից: Մառը ջուր ծախողների բազմաձայն աղաղակները, իրենց ապրանքները փառաբանող մարդկանց «էստի համեցեք»-ները, մրգերի շռայլ գունագեղությանը, կանաչիների ու համեմունքների սուր բույրը, շալերի ու կերպասների փայլը հարբեցրել էին տղային, իսկ քյաբաբի կանչող, գայթակղեցնող հոտից պտտվում էր գլուխը: Որքան էլ փորձեց փախչել՝ չհաջողվեց: Հոտից ակամա հմայված գնաց-գնաց ու հայտնվեց քյաբաբխանայում: Պարթևահասակ մի տղա շիկացած ածուխների վրա ճարակորեն շուռ ու մուռ էր տալիս քյաբաբի շշերը, բարձրացնում, նայում հիացած, նորից դնում կրակին, հետո վերցնում էր շիշը ու հենց մատներով քաշելով, ցած իջեցնում քյաբաբը, լցնում լավաշով ծածկված ափսեի մեջ, վրան կտրտած սոխ ու համեմունք էր ավելացնում ու մեկնում գնորդին:

Գրիգորը տանջվեց, տապակվեց քյաբաբի նման, հարյուր անգամ մտքում հաշվեց դրամները ու մի բաժին քյաբաբ կերավ: Քյաբաբը հալվեց բերանում, տեղ չհասավ, և Գրիգորը ցանկությամբ ու ափսոսանքով նայեց կրակի վրա թշշացող շշերին: Երևի երկար նայեց, որովհետև գրեթե նրան հասակակից մի աղա, որ նոր էր տեղավորվել կողքի աթոռին ու իր պատվերին էր սպասում, հարցրեց.

- Հը, չկշտացա՞ր, ախպեր...

Գրիգորը նրան նայեց ու ժպտաց:

Ի՞նչ կլիներ, եթե չնայեր ու չժպտար: Ի՞նչ կլիներ, եթե քիչ առաջ հեռացած լիներ կամ ընդհանրապես ոտք չղներ այդ անիծյալ քյաբաբխանան: Ի՞նչ կլիներ:

Եթե նա այդ վայրկյանին թողներ ու հեռանար, ով գիտե, գուցե և բոլորովին ուրիշ կերպ դասավորվեր նրա ապագան, գուցե և նա չընկներ այն ցավերի մեջ, որոնք դժոխք դարձրեցին նրա կյանքը տեխնիկումում և ի վերջո հասցրեցին կործանման: Բայց դե ով է մինչև հիմա կարողացել խուսափել իր ճակատագրից, որ դրանից խուսափեր Սանասար Ալեքսանյանի կրտսեր որդի Գրիգորը: Դրա համար էլ նա տղային նայեց ժպտաց ու ասաց.

- Յանի սրանից կշտանալ կլինի՞ :

- Յա՛՛, - զարմացավ տղան ու միանգամից ձայն տվեց քյաբաբ սարքողին, - Պարզև, երեք շիշ էլ դիր:

- Խի՞՞, - զարմացավ Գրիգորը:

- Որ կշտանաս, - ասաց տղան: - Ես ուզում եմ, որ դու էսօր կշտանաս քյաբաբից: Ինչքան սիրտդ տա կեր: Փողը ես եմ տալիս:

- Թե մարջ ես գալու, կտարվես, - ուրախ ծիծաղեց Գրիգորը, - ես որ ինձ եմ նայում, մի քսան հաստ կուտեմ:

- Կամաց-կամաց կեր, - ասաց տղան: - Պիվա չես ուզում:

- Էդ ինչ ա, լիմոնա՞ դ, - հարցրեց Գրիգորը:

- Լիմոնադի պես բան է, - զարմացած նրան նայեց տղան, - քյաբաբի հետ լավ է:

Գրիգորը չէր ուզում, բայց ամաչում էր մերժել, դրա համար էլ գլխով արեց.

- Դե որ ասում ես՝ կլիմեմ: Տղան գնաց ու երկու մեծ գավաթ փրփրապատ գարեջուր բերեց:

- Որտեղացի՞ ես, մեր տղա, - հարցրեց:

- Տաուշեցի, - ասաց Գրիգորը: - Հոնուտ գյուղից եմ: Լսած կա՞ս:

- Չէ: - ասաց տղան: - Իսկ անունդ ինչ է:

- Գրիգոր:

- Իմ անունն էլ Կարո է: Ծանոթացանք:

Քյաբաբը բերեցին: Գրիգորը մեծ ախորժակով մի բաժին էլ կերավ և տեսնելով, թե ինչ հաճույքով է Կարոն խմում գարեջուրը, սկզբից փչելով և փրփուրը գետնին թափելով, ինքն էլ

փչեց, փրփուրը գետնին թափեց ու խմեց մի կում: Խմեց, զարմացած նայեց Կարոյին, իրեն ստիպելով մի կերպ կուլ տվեց դառնահամ հեղուկն ու նողկանքը հազիվ զսպելով, ասաց.

-Թյու, բա սա խմելու բան ա՞ :

Կարոն ծիծաղեց սրտանց:

- Սկզբում բոլորին էլ դուր չի գալիս, բայց անմահական բան է: Ու նկատելով Գրիգորի թերահավատ ժպիտն, ավելացրեց:- Ուրեմն էդքան մարդիկ հիմա՞ ր են, որ խմում են:

Գրիգորը գերադասեց լռել և ուտել նաև երրորդ բաժինը: Եվ ինքն էլ զարմացավ, զգալով, որ կշտացել է: Ուղեղը, պարզվել էր և բերանում շատ անուշ համ կար:

- Հը, էլ չե՞ս ուզում,- հարցրեց Կարոն:

- Չէ, Կարո ջան, կշտացել եմ,- ժպտաց Գրիգորը

- Բա ասում էիր քսան հատ կուտե՛մ,- հեզնեց Կարոն:- Բա հիմա քաղաքում ի՞նչ ես անում, այ տղա:

- Եկել եմ տեխնիկում ընդունվեմ:

- Ո՞ր տեխնիկումը:

- Մանկավարժական:

- Համարի ընդունված,- ծիծաղեց Կարոն,- այ թե բախտ ունես, Գրիգոր տղա: Բոլոր դասատուները ընկեր տղերք են:

- Հա-հա , - չհավատաց Գրիգորը:

- Էլ ի՞նչ հա-հա, ես էլ նույն մանկավարժականի երրորդ կուրսում եմ քարշ գալիս:

- Բա ինչի ես քարշ գալիս,— հարցրեց Գրիգորը:

- Դե որովհետև չեմ ուզում սովորել, բայց նրանք, մեկ է՝ կուրսից կուրս են տեղափոխում, որովհետև ամաչում են խոստովանել, որ ինձ սովորեցնել չկարողացան:

- Բա ինչի՞ չես ուզում սովորել:

- Չահիլա չունեմ,- ասաց Կարոն:- Իսկ քեզ կօգնեմ, գործերդ հանձնե՞լ ես:

- Հա:

- Կօգնեմ:

- Այսինքն՝ էդ ո՞նց ես օգնելու,- էլ չըիմացավ Գրիգորը:- Որ իմ գլխի մեջ չլինի, իմ տեղը դո՞ւ պիտի քննություն տաս, սովորես:

- Ա՛յ տղա, ասում եմ մոտիկ մարդիկ են, ինչ թվանշան ուզենք կդնեն:

- Պահ, եղպես ո՞նց կլինի,- ետ քաշվեց Գրիգորը:- Ուզում չեմ:

- Ինչի՞:

- Չեմ ուզում,— հաստատ ասաց Գրիգորը:

- Դե լավ, չես ուզում, մի ուզի— համաձայնեց Կարոն:— Բայց որ նեղն ընկնես, ինձ ասա, ես ամբողջ օրը ֆոֆոում եմ տեխնիկումի մոտ:

- Լավ,— ասաց Գրիգորը:

Բայց նրան օգնություն կանչելու հարկ չեղավ: Գրիգորը քննությունները փայլուն հանձնեց: Նույնիսկ զարմանում էր, այնպիսի հարցեր էին տալիս, որ մեկ-մեկ ամաչում էր պատասխանել: Առաջին դասարանցու հարցեր էին: Միայն, երբեմն բարբառի վրա էին ծիծաղում, բայց նա անմիջապես ուղղում էր: Այդպես եղավ նաև Կարոյի հետ: Վերջին քննությունը տալուց հետո ուրախ-ուրախ դուրս եկավ քննասենյակից և դեմ-դիմաց բախվեց Կարոյին:

- Կարո՞:

- Գրիգո՞ր: Հը, ո՞նց ես, մեր տղա, ի՞նչ թվանշաններ ես ստացել:

- Լոխ տվի գերազանց,- հպարտ-հպարտ ասաց Գրիգորը:

- Ի՞նչ-ի՞նչ: Ինչի՞ էիր լող տալիս:

- Լող չե, լոխ,-կարմրեց Գրիգորը,- այսինքն՝ բոլորն, էլի...

Կարոն սրտանց ծիծաղեց:

- Ու եղպես՝ լող տալով էլ ընդունվեցի՞ր:

- Հա:

- Բա մաղարիչը,- ասաց Կարոն:- Ինձ չես տանում քյաբաբ ուտելու:

- Հենց որ առաջին թոշակն ստացա, կտանեմ, Կարո ջան,- անկեղծ ասաց Գրիգորը- Հիմա քիչ փող ունեմ, քույրս էլ պատկած է հիվանդանոցում, ուզում եմ մի քիչ միրգ առնեմ տանեմ:

- Ուրեմն՝ մաղարիչը ես եմ անում,- վճռեց Կարոն:- Գնում ենք, քյաբաբ ենք ուտում, միրգ ենք առնում ու տանում ենք քրոջդ: Եղա՞վ:

Գրիգորը քիչ մնաց լաց լինեք:

- Կարո ջան, բա ես քո լավության տակից ո՞նց պիտի դուրս գամ:



- Ամոթ է, ամոթ,- նախատեց Կարոն...

Գրիգոր Ալեքսանյանը կյանքում ոչ մի տեղ այնքան երջանիկ չէր եղել, որքան տեխնիկումում: Մեծ մասն իր նման տարբեր շրջաններից եկած ազնիվ, միամիտ տղաներ էին, օգնում էին իրար ինչով կարողանում էին, կիսում էին գյուղից ուղարկված հացը: Տեխնիկումում այնքան լավ էր, որ քեռի Պետրոսին մի օր ասաց, թե ուզում է հանրակացարանում ապրել:

- Ինչի, այ բալա, մեր տանը քեզ նեղացնող կա,- վիրավորվեց Պետրոսը:

- Չէ, քեռի ջան - ասաց Գրիգորը- բայց հանրակացարանում տղերքով ենք, իրար հետ սովորում ենք, իրար օգնում ենք:

- Դու գիտես,- ասաց քեռին,- մի խոսք կա, ասում է՝ էձն էձի համար լավ է, քան թե մի սուրու ոչխարը: Ոնց որ քեզ հարմար է, տղա ջան:

Եվ Գրիգորը հանրակացարան տեղափոխվեց:

Նրա համար սովորելը խաղ ու պար էր, գրադարան գրվեց, սկսեց կարդալ...

Գյուղում, երբ կարդաց-վերջացրեց դպրոցի գրադարանի վերջին գիրքը համոզված էր, թե աշխարհում այլևս ուրիշ գիրք չկա: Իսկ երբ տեխնիկումի գրադարանը տեսավ, ամաչեց ու սկսեց կարդալ՝ ագահաբար, անկանոն, իրար ետևից: Ամեն ինչով հետաքրքրվում էր, ընդունվեց բասկետբոլի խմբակ և շատ-շուտով տեխնիկումի հավաքականի մեջ ընդգրկեցին: Սկսեց շախմատ խաղալ...

Տեխնիկումում նա իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում՝ անհոգ ու թեթև: Նա գիտեր, թե ինչու է երջանիկ, բայց չէր ուզում անգամ իրեն հիշեցնել ու խոստովանել: Վախենում էր, թե աչքով կտա ինքն իրեն: Ամբողջ գաղտնիքն այն էր, որ այստեղ ոչ ոք չգիտեր և ոչ ոք նրան չէր ասում, թե նա ժողովրդի թշնամու զավակ է: Ինքը չէր գրել կենսագրության մեջ: Ավելի շուտ գրել էր, որ մահացել է հայրը: Եվ ուրիշ ոչինչ: Առաջին օրերին վախվիսելով էր նայում շուրջը, սարսափում էր այն մտքից, թե համագյուղացու կհանդիպի: Բայց, բարեբախտաբար, ոչ ոք չկար: Եվ նա հետզհետե, ապա իսպառ մոռացավ իր ցավը, իր անհանգստությունը: Ու առաջին անգամ կյանքում սկսեց ապրել հանգիստ, անհոգ, բոլորի նման, մարդու նման:

Մինչև որ մի օր հանդիպեց Մանուշարին:

Հիվանդանոցից էր գալիս: Եկավ հասավ Աբովյան փողոց, իջավ «Մոսկվա» կինոթատրոնի մոտով և ինչպես ամեն անգամ կանգ առավ լուսանկարիչ Խանոյանի ցուցափեղկի առջև: Զարմանալի նկարներ կային՝ Փափազյանն էր՝ Օթելլոյի հագուստով, Հրաչյա Ներսիսյանը, Ավետ Ավետիսյանը, Վաղարշ Վաղարշյանը, Հասմիկը, որոնց Գրիգորն արդեն տեսել էր Մունդուկյանի անվան թատրոնում: Իսկ վերջերս էլ Ավետիք Բասիակյանի նկարն էին փակցրել: Վարպետը ժպտում էր տխուր ու բարի: Գրիգորը տեսել էր, որ ցուցափեղկի մոտով անցնելիս Բասիակյանն էլ է հաճախ կանգ առնում՝ ձեռնափայտին հենված, նայում իր նկարին և ժպտում ճիշտ այդպես տխուր ու բարի: Կանգնել, հմայված նկարներին էր նայում Գրիգորը, երբ մեկ էլ մի ձայն լսեց.

- Պահ, դու՞ էստեղ ինչ ես անում, օձի ճուս:

Գրիգորի մտքերն այնքան հեռու էին գյուղից, որ նա հազիվ հիշեց ու ճանաչեց Բագրատ Թոփալյանի որդուն: Մանավանդ, որ Մանուչարը կոստյումով էր և լայնեզր գլխարկով, որն ասես ավելի էր ընդգծում նրա նեղ, տափակ գլուխը: Գրիգորը գյուղում էլ երբեք խոսքի տակ չէր մնում, իսկ հիմա, երբ հեռու էին Հոնուտից և բասկետբոլի պարապմունքներից հետո մկանները թեթև-թեթև խաղում էին պիջակի թևքերի մեջ, պոռթկաց,

- Տո, օձն էլ ես դու, աղվեսն էլ ես դու, էջն էլ ես դու... էդ էլ քո բարեն է՞ր, անասուն:

Մանուչարը ապշած ետ-ետ գնաց և գրեթե մի րոպե անցավ, մինչև ուշքի եկավ:

- Էդ, էդ, էդ ո՞վ է քո լեզուն էստեղ բացել, այ տղա,- կմկմաց նա,- հիմի ո՞նց ես, որ շուռ գամ ու էս բոլոր մարդկանց հայտնեմ, որ դու ժողովրդի թշնամու տղա ես: Ասենք էստեղ ինչի՞ եմ ասում, լսել եմ որ տեխնիկում ես ընդունվել, կգամ հենց էնտեղ էլ կխոսենք: Սպասիր, սպասիր, ես քեզ կգտնեմ...- ասաց ու արագ-արագ ցած իջավ Աբովյանով:

Եվ Գրիգորի կյանքը թունավորվեց: Ոչ կարողանում էր դաս լսել ու ոչ էլ կարդալ: Դռան ամեն մի թակոցի հետ ցնցվում էր: Երբ դասարանից որևէ մեկը, որևէ հարցով ձայնում էր նրան, սիրտը խփում էր անկանոն ու տհաճ: Ամեն օր, ամեն ժամ սպասում էր, թե հիմա ուր որ է դիրեկտորի մոտ կկանչեն: Ու այնտեղ կսկսվի... Ինչո՞ւ ես թաքցրել, ինչո՞ւ չես գրել, ինչո՞ւ ես խուսափել... դե եկ ու պատասխանի: Պահ եղավ, որ մտածեց գլուխն առնել ու փախչել տեխնիկումից էլ, քաղաքից էլ... Բայց ո՞ւր գնա, ինչո՞վ... Եվ հետո ո՞նց անտեր թողնի Շամամին... Եվ հետո Վարսենիկ նա՞նն ինչ կանի... Եվ հետո Լևոնը չի՞ ասի, թե բա դու տղամա՞րդ ես, քեզ է՞դ է սովորեցրել մեր հեր Սանասարը...

Ծանր ու հուսահատ մտքերի մեջ տեխնիկումի շենքի առջև մոլոր շրշում էր Գրիգորը, երբ տեսավ Կարոյին և ուրախացավ սրտանց, որովհետև հենց նրան էլ փնտրում էր:

- Հը, մեր տղա, քյաբաբի հավես ունե՞ս,- ծիծաղեց Կարոն, հետո նայեց Գրիգորի տխուր աչքերին և ավելացրեց անմիջապես,-բան է պատահե՞լ:

Ու Գրիգորը հավվեց, բացվեց, պատմեց ամեն ինչ և հոր մասին, և գյուղի մասին, և Բագրատ Թոփալյանի մասին, և նրա որդու մասին, և իր անցկացրած անքուն գիշերների մասին:

Կարոն մտածեց.

- Գուցե թե խոսել է հենց էնպես, դատարկ-մատարկ:

- Չէ,- ասաց Գրիգորը: - Դու նրանց ցեղը չգիտես:

- Ինձ ցույց կտա՞ս նրան,- գործնական հարցրեց Կարոն:

- Մխր չգիտեմ որտեղ է լինում,- ասաց Գրիգորը,- եթե չեմ սխալվում համալսարանում է սովորում: - Տխուր նայեց Կարոյի փոքրիկ մարմնին ու ամաչելով ավելացրեց,- Համ էլ դու նրան ի՞նչ պիտի անես, քեզանից բոյով է:

Կարոն ծիծաղեց:

- Որ հարցը բոյի մեջ լիներ, էս սյունը ամենաուժեղը պետք է լիներ- ասաց նա՝ ձեռքի ավել խփելով կողքի էլեկտրասայանը: - Ուրեմն ասում էս՝ կգա՞:

- Որ տեղս գտնի՝ անպայման կգա, էս հո գիտեմ,- համոզված ասաց Գրիգորը:

Նա Կարոյի հետ խոսելիս անգամ փողոցին էր նայում, սպասելով, թե ուր որ է պիտի հայտնվի Մանուչարը, և երբ տեսավ նրան փողոցի անկյունում, մի պահ նույնիսկ չհավատաց աչքերին, նորից նայեց զարմացած ու վախեցած և արագորեն սյան ետևն անցավ:

- Ինչ պատահեց, այ տղա,— հարցրեց Կարոն:

- Ինքն է, ինքն է, Մանուչարն է, տեխնիկում է գալիս, ի՞նչ անեմ...

- Էն սև կոստյումովն է՞,- հարցրեց Կարոն: Դու հանգիստ մնա, արա, էս հիմա դրա սևը կբերեմ:

- Գործ չունես, գործ չունես,- խնդրեց Գրիգորը,- ինձ տեխնիկումից հեռացնել կտա:

Կարոն՝ մտածում էր: Նույնիսկ ճակատին կնճիռ հայտնվեց.

- Դու վազի մտի էն այգին: Ես հիմա կգամ,- ասաց նա ու արագ ընդառաջ գնաց Մանուչարին

Դեռ այգու ծառերին էլ չհասած, Գրիգորը տեսավ, որ Կարոն մոտեցել է Մանուչարին ու խաղաղ գրուցում է նրա հետ: Հետո զարմացած տեսավ, որ նրանք երկուսն էլ ծիծաղելով դեպի այգին են գալիս, ճիշտ այնտեղ, որտեղ Գրիգորն էր թաքնվել ծառի ետևում: Այդ ամբողջ գործողությունից ոչինչ չհասկացած, Գրիգորն արդեն ուզում էր շփոթահար և ընկճված դուրս գալ ծառի ետևից, երբ Մանուչարի ձայնը լսեց.

- Բա կոշիկնե՞րը որտեղ են:

- Արի, արի, էստեղ են,- հանգստացրեց Կարոն, և մինչ Գրիգորն ապշած մտածում էր, թե ինչ կոշիկների մասին է խոսքը, տեսավ, որ Մանուչարը փոված է գետնին, իսկ լայնեզր գլխարկն էլ գլորվում է խոտերի վրայով:

- Վայ,- գետնից մի կերպ բարձրանալով, զարմացած բացականչեց Մանուչարը:

- Դու ճիշտ էս,- հանգիստ ասաց Կարոն: - Պիտի զարմանայիր, որ էդքան շուտ վեր կացար: Ուրեմն՝ լավ չխփեցի:

Ու նորից հարվածեց, հետն էլ ցատկելով տեղից, աջ բռունցքով, կզակին:

Մանուչարը լուռ տապալվեց գետին ու մնաց անշարժ:

- Մեռավ, Կարո ջան, էդ ի՞նչ արեցիր,- վախեցավ Գրիգորը:

- Ես իմ խփելը գիտեմ,- հանգիստ ասաց Կարոն,- մինչև տասը հաշվեմ, ուշքի կգա:

Մանուշարը բացեց աչքերը, Կարոյին նայեց ապշած, հետո տնքալով շրջեց գլուխը տեսավ Գրիգորին ու հասկացավ ամեն ինչ:

- Ցիլոտ քեզ պե՞տք է,- ասես կարեկցանքով հարցրեց Կարոն - Գնա վերցրու ու բեր Էստեղ:

Գրիգորին թվում էր, թե հիմա Մանուշարը կվերցնի գլխարկն ու կփախչի: Բայց սխալվեց: Հազիվ իրեն պահելով երկար ոտքերի վրա, Մանուշարն, ասես հիպնոսի ազդեցության տակ, քթի արյունը մաքրելով մոտեցավ գլխարկին, կռացավ տնքալով ու մի ձեռքով բռնած քիթը, վերցրեցր գլխարկն ու ետ եկավ:

- Ապրես,- ասաց Կարոն:- Խելոք տղա ես: Դե հիմի նայիր էս իմ ընկերոջն ու ասա, թե ում տղան է: Լավ նայիր,- ավելացրեց նա ձեռքի աջ մատները բռունցք դարձնելով:- Ուրեմն՝ կրկնում եմ: Ու՞մ տղան է...

- Մանասարի,- Կարոյի բռունցքին սարսափահար նայելով, ուռած շրթունքներով կակազեց Մանուշարը:

- Ավելի լրիվ:

- Ալեքսանյան Մանասարի,- խոնարհ կրկնեց Մանուշարը:

- Ո՞վ է Մանասար Ալեքսանյանը, ուրիշ ի՞նչ կարող ես նրա մասին ասել:

- Ոչ մի բան:

Կարոն մոտեցավ նրան:

- Պետք չի, պետք չի,- դեպի նա նետվեց Գրիգորը:

Կարոն Մանուշարի գլխից նորից հանեց գլխարկը, նետեց ցած և սկսեց տրորել աջ ոտքով:

- Ուրեմն, էսպես որոշեցինք,- ասաց նա:- Ես քեզ էս ցիլոյիդ նման կտրորեմ, եթե դու մեկ էլ իմ ընկերոջ մազին դիպչես կամ անունը տաս: Եվ որտեղ որ հանդիպես՝ խոր գլուխ ես տալու, հասկացա՞ր ... Ասա հասկացա, բթամիտ:

- Հասկացա,- առանց գլուխը բարձրացնելու, ասաց Մանուշարը:

- Դե որ հասկացար, մի անգամ փորձիր, տեսնենք կարո՞ղ ես:

Մանուշարը խոր գլուխ տվեց:

Նողկալի էր:

Իսկ դրանից երկու ժամ անց, Պարզևի քյաբաբխանայում Գրիգորը գրկել էր Կարոյի ուսն ու հազիվ շարժելով օղուց ծանրացած լեզուն, հարցնում էր.

- Ուրեմն ասում ես, էլ չի՞ գա, Կարո ջան...

- Մտքովդ թող չանցնի, ախպերս,-ասում էր Կարոն:

Գրիգորը նվիրված աչքերով նայում էր իր պահապան հրեշտակին:

- Քեզ մինչև կյանքիս վերջը պարտք եմ,- ասում էր նա:-Չկարծես թե հարբած եմ:Սրտիցս եմ ասում:Տեսնու՞մ ես, ես ոչ մի բան չունեմ: Մենակ մի կյանք ունեմ: Ու եթե պետք լինի, կյանքս կտամ քեզ համար: Հավատում ե՞ս: Չէ,ասա, հավատում ե՞ս:

- Հավատում եմ , բա ո՞նց,-ծիծաղում էր Կարոն:

-Չես հավատում,-համառում էր Գրիգորը:-Չես հավատում, բայց օրը կգա՝ կհավատաս :

Եվ երկուսն էլ չէին պատկերացնում,թե որքան մոտիկ է այդ օրը:

- Կարո ջան,- Հանկարծ հարբածի անկեղծությամբ հարցրեց առանց այդ էլ անկեղծ ու անմիջական Գրիգորը:-Մի բան որ հարցնեմ, հո չե՞ս նեղանա:

- Չէ,- ասաց Կարոն:

- Դու գող ե՞ս,Կարո ջան,-հարցրեց Գրիգորը:

- Ինչի՞ց որոշեցիր,-զարմացավ ու ծիծաղեց Կարոն:

- Ախր միշտ փող ունես:

-Բա գողը միշտ փող կունենա՞, իմ ախպեր,-ծիծաղից խեղդվելով,ասաց Կարոն...-Գողը մի օր փող է ունենում, մի ամիս սոված շան նման ման գալիս:- Նա ընկերոջը պարզեց ծակծկոտված ու կոշտուկապատ մատները: -Բա սրանք գողի ձեռքեր ե՞ն, տես, տես, բա սրանք գողի քնքուշ ձեռքեր են: Քո բոլոր գյուղացին,օրինակ, հենց մատներս տեսավ, հավատաց ու ետևիցս խելոք-խելոք այգի եկավ որովհետև ասացի, թե էժան կոշիկներ ունեմ ծախելու...

- Էդ ո՞վ է ծածկվել,-զարմացավ Գրիգորը:

- Ես,-ասաց Կարոն,-ես եմ ծակծկում: Կոշկակար եմ: Որ իմ կարած կոշիկները տեսնես, ախ կքաշես: Հորիցս է ինձ մնացել էդ ոսկի արհեստը: Է՞հ, գիտե՞ս ինչ հեր ունեի : Գիտե՞ս ոնց էր պահում մեզ...

- Բա հիմա՞ ...- ակամա կարեկցանքով լցվեց Գրիգորը:

- Գաղութում է ,-տխրած ասաց Կարոն,-նույն իր ոսկի արհեստի համար: Չորս տարի տվեցին:

- Կոշիկ կարելու համար:

- Ուրեմն՝ կոշիկ կարել չի՞ կարելի:

- Ինչո՞ւ չի կարելի, գնա արտելում կարի ինչքան սիրտդ ուզում է :

- Բա ինչու՞ նա էլ արտելում չէր կարում:

Կարո՞ն արհամարհանքով թթեց:

- Բա իսկական վարպետը արտելում կոշիկ կկարի՞, -ասաց նա,- Էնտեղ որակին չեն նայում, Էնտեղ ասում են՝ հուպ տուր, պլան տուր, շատ տուր, շուտ տուր, թքիր,կպցրու ու հանձնի: Ու կոպեկներ էր տալիս: Իսկ որ հորս կարած կոշիկները տեսնեիր, կասեիր մատ չի կպել: Բա, ախպերս... իսկ հասկացող մարդիկ էնքան փող էին տալիս, որ ամիսն երկու գույգ կարելով, կարելի էր տուն պահել: Հիմա հասկացա՞ր տարբերությունը:

- Էդ հասկացա,- ասաց Գրիգորը,- բայց դրա համար ո՞նց են բռնում, ի՞նչ են ասում:

- Ասում են, որ իրավունք չունես: Որ դա արգելված մասնագիտություն է: Խանգարում է արտելների աշխատանքին: Ասում են՝ էդ որտեղի՞ց ես կաշին ու պաղոշը ճարել, երբ մեր խանութներում կաշի ու պաղոշ չի վաճառվում:

- Բա ո՞րտեղից էիք ճարում,- իր հերթին հարցրեց Գրիգորը:

- Գողերից, քաղաքացի քննիչ,- ծիծաղեց Կարոն:-Սովորական գողերից, որոնք գործարանից կաշին փորին փաթաթած դուրս են բերում: Կամ էլ նրանցից, ովքեր տանը կաշվի գաղտնի ցեխ ունեն:

Գրիգորի հարբածությունն անցավ:

- Ու հիմա դու էլ ես կարո՞ւմ, Կարո ջան...

- Հա,- ասաց Կարոն:

- Բա չե՞ս վախենում:

- Վախենում եմ,- խոստովանեց Կարոն,- վախենում եմ, բայց չգիտեմ ինչ անեմ, որ պահեմ մորս ու երեք քույրերիս, հորս հաց ուղարկեմ գաղութ ու ինքս էլ մեկ-մեկ քյաբաբ ուտեմ ընկերներիս հետ: Ու հետո,- ավելացրեց նա, ծակծկված մատներին նայելով,- շատ եմ սիրում կոշիկ կարել: Որ կարում եմ, վատ բաների մասին չեմ մտածում, հանգստանամ է սիրտս: Չէի ուզում ասեմ, բայց հենց հիմա քրոջդ համար եմ մի գույգ կարում: Էն օրը, որ հիվանդանոցում էինք, վատ բան չմտածես, սովորություն է, նախ ոտքերին նայեցի ու տեսա, որ հագին կարգին կոշիկ չունի քույրիկդ:

- Ես քո ցավը տանեմ, Կարո,- նորից հարբեց Գրիգորը: - Ինչ մարդ ես դու...

- Քիչ առաջ ասում էիր՝ գող ես, հիմա էլ թե՛ ինչ մարդ ես դու,-ծիծաղեց Կարոն: - Ի՞նչ մարդ եմ, աշխատող մարդ եմ, բայց ստիպված գիշերները թաքուն գործ անել, գողի նման: Ու ցերեկներն էլ քնում դասերի ժամանակ: Ի՞նչ անեմ: Սովորել չեմ սիրում, թողնեին՝ գիշեր-ցերեկ կոշիկ կկարեի...

- Հիմի անընդհատ քո մասին եմ մտածելու,— հառաչեց Գրիգորը,- որ հանկարծ չբռնվես: Ջգույշ մնա, Կարո ջան...

- Էհ,- ասաց Կարոն,- թե ինձ համար վախենում եմ, գետինը մտնեմ: Մերոնք ոտքի տակ կընկնեն... Երեք աղջիկ են... ու արդեն պառավել է մերս, լաց է լինում ամբողջ օրը: Նրանց մասին եմ մտածում, ու դրա համար էլ կես գնով եմ ծախում կոշիկներս:

- Ինչո՞ւ:

- Վախից, ախպեր ջան, վախից: Ինձ ճանաչում էն, հանդիպելիս թաղայինը առաջինը ծակծկված մատներիս է նայում ու օրորում գլուխը: Բայց ձեռքին փաստ չունի, թե չէ վաղուց էր ուղարկել հորս մոտ, ինչպես խոստանամ է ամեն անգամ շան որդին:

- Բա ո՞նց ես անում:

- Ջուլգին հինգ ռուբլի մի տղայի եմ տալիս, որ տանի շուկա իմ հին ծանոթ առևտրականին տա և տասնհինգ ռուբլի էլ էդ առևտրականին եմ տալիս, որ ծախի:

- Պահ,- ակամա բացականչեց Գրիգորը,— բա էդքան փողն ափսոս չի :

- Բա ափսոս չի՞ :- հառաչեց Կարոն,- գիտես ինչ գործեր են... Այ, էգուց քեզ կբերեն քրոջդ կոշիկները, կտեսնես... Մեկ-մեկ նույնիսկ ափսոս գալիս է, որ ծախում եմ... Որտեղ տեսնում ճանաչում եմ: Որ հագնողը կարգին կին է լինում, ուրախանում եմ, գնում եմ ետևից: Նայում ու ուրախանում եմ, իսկ որ մունդառի մեկն է լինում, քիչ է մնում հանեմ ոտքերից:

- Մի նայելով էդ ո՞նց ես իմանում, լավն է, թե մունդառ,- ծիծաղեց Գրիգորը:

- Քայլվածքից երևում է,- ժպտաց Կարոն:

- Կարո,- ասաց Գրիգորը,- ուզում ես կոշիկներդ ես տանեմ տամ ծանոթիդ:

Կարոն թափով բարձրացավ սեղանից:

- Մեկ էլ էդ մասին չխոսես,- ասաց նա խստորեն, արդեն փողոցում:- Լսո՞ւմ ես: Դու էդ բաների հետ գործ չունես, հասկացա՞ր: Որ քեզ փող պետք լինի, ինձ ասա, կտամ ինչքան պետք է: Իսկ դու մաքուր ես ու ինչքան կարող ես մաքուր ապրի: Մի մեծ ընտանիքի հույս էլ դու ես: Իսկ ես հնար չունեմ: Ես էսպես էլ պիտի գնամ...

Գրիգորն այնքան հուզված էր թե իր առաջարկից, թե Կարոյի մերժումից, որ չդիմացավ և գլուղացու միամտությամբ ու անմիջականությամբ ասաց,

- Ջարմանք բան է. բա ինձ էլ ասում էին, թե զգույշ մնա, քաղաքի տղերքը...– ու կծեց լեզուն՝

- Ժուլիկներ են, հա՞,- ծիծաղեց Կարոն:- Ժուլիկներ ամեն տեղ էլ կան, ախպեր ջան: Ու քաղաքում էլ շատ կան: Բայց ես ժուլիկ չեմ, չէ,- ասաց նա ու հանկարծ՝ ավելացրեց չթաքցրած հպարտությամբ: - Մենք, ախպեր ջան, բնիկ երևանցիներ ենք, . հին երևանցիներ:

Պապերի յոթը պորտով... Իսկ դա մի բան արժե... Հիմի գնա: Ես էլ գնամ աշխատեմ մի քիչ, ձեռքերս քոր են գալիս:

Ու գնաց կորավ շուկայից դուրս տանող մի ծուռումուռ փողոցի մթության մեջ այդ գարմանալի աղան, հին երևանցիների այդ արժանավոր ժառանգը:

Իսկ կյանքը շարունակվեց իր հունով: Ինչպես համոզված ասում էր Կարոն, Մանուչարի հետքն էլ չերևաց տեխնիկումում: Ընդհակառակը, Գրիգորն ինքը պատահաբար հանդիպեց նրան Կոմայգում, բայց, Մանուչարն այնպես արագորեն անհետացավ, որ Գրիգորին թվաց, թե աչքին է երևացել: Անցավ ձմեռը, Գրիգորը, ինչպես Կարոն, էր անչար ծաղրելով ասում, լող տալով, գերազանց հանձնեց կիսամյակի քննությունները: Հետո գարուն եկավ, ծաղկեցին Աբովյան փողոցի ծառերը: Գյուղից ու Լևոնից, նամակներ էր. ստանում, Շամամը արդեն կարծես թե լավ էր զգում հիվանդանոցում, մի խոսքով՝ լավ էր ամեն ինչ: Արդեն ավարտական քննությունների շրջանն էր մոտենում, երբ Կարոն մի քանի օր չերևաց տեխնիկումում: Գրիգորն անհանգստացավ, հո հանկարծ չի բռնվել: Աստված հեռու տանի, ի՞նչ կլինի նրա մոր ու քույրերի վիճակը: Անհանգստացավ, անհանգստացավ Գրիգորը ու չդիմացավ այլևս, գնաց, ծուռ ու մուռ փողոցում սրան-նրան հարցնելով գտավ Կարոյնց տունը: Եվ տեսավ, որ ընկերը պառկած այրվում է տաքության մեջ: Կարոն շատ ուրախացավ, ժպտաց աչքերով.

- Գիտեի, որ ինձ կգտնես,- ասաց:

- Ես ի՞նչ է պատահել, ախպեր ջան,- հուզվեց Գրիգորը:- Ի՞նչ անեմ քեզ համար:

- Դատարկ բան է,- ասաց Կարոն,- մրսել եմ մի քիչ, կանցնի:

Աղմուկով հայտնվեցին նրա քույրերը, որոնք այնքան նման էին իրար, որ եթե առանձին-առանձին մտնեին, Գրիգորը կկարծեր, թե նույն աղջիկն է ներս ու դուրս անում: Եկան, բարևեցին համարձակ, կատակեցին եղբոր հետ,, սիրելով ծաղրեցին իրար ու երբ դուրս գնացին, Գրիգորը նոր միայն նկատեց, որ մի հիանալի սեղան է գցված:

- Տեսա՞ր ինչ քույրիկներ ունեմ,- հպարտ-հպարտ հարցրեց Կարոն:

- Ոնց որ ֆոկլուսնիկի տակառի միջից դուրս եկած լինեն,- շփոթվածությունը թաքցնելու համար ծիծաղեց Գրիգորը,— Էդքան. էլ իրար նման ու սիրուն....

- Բա՛՜ – ժպտաց, Կարոն,— դե դու նստիր ու հաց կեր:

Գրիգորը հրաժարվեց:

- Կեր, ախպեր ջան, կեր...Որ դու ուտես, ես կնայեմ քեզ... ախորժակս կբացվի, կլավանամ...

Նստեցին, զրուցեցին երկար, և խոսքից-խոսք, հարցից հարց, Գրիգորին պարզ դարձավ, որ Կարոն նեղության մեջ է: Տղան, որ տանում է կոշիկները, ինքն էր գործ սկսել ու հրաժարվել էր այսուհետև միջնորդի դեր կատարել: Իսկ հորն էլ, չգիտես ինչու, ահագին փող է պետք եկել գաղութում, մեկի միջոցով իմաց է տվել, որ մի կերպ ճարեն, ուղարկեն: Եվ Գրիգորը թեթև սրտով, առանց ձևականության, պատրաստակամ ասաց.



- Թե կոշիկներ ունես, տուր, ես կտանեմ...

Կարոն թափահարեց գլուխը:

Չե՛, - ասաց,- քեզ չեմ ասել, որ դու գործ չունես:

Գրիգորը սրտանց վիրավորվեց:

- Բա էլ ընկերությունը որ օրվա համար է - ասաց,- ուրեմն ես մենակ քյաբաբ ուտող եմ: Բա ամոթ չէ՞:

- Դու էդ գործը չես կարողանա անել, Գրիգոր,- համառում էր Կարոն,- կբռնվես, դա ամեն մարդու բան չի:

- Ինչի՞, է, ես մի երեխու չափ էլ չկա՞մ: Պիտի տանեմ շուկա ու տամ մի մարգու, էդ չի:

- Բա որ բռնվես:

- Ինչի՞ պիտի բռնվեմ, է...

- Որ բռնվեցիր...

- Բռնվեցի, կասեմ չգիտեմ, թե էս տոպրակի միջինն ինչ է, մի մարդ խնդրեց, թե տար տուր էսինչին, ես էլ բերեցի... էդ մարդուն էլ չեմ ճանաչում, պրծա՞նք.- ինքն էլ իր հնարամտությունից հիացած, ծիծաղեց Գրիգորը:

- Էհ,- ձեռքը սրտնեղած թափ տվեց Կարոն ու ետ ընկավ մահճակալին:

Բայց, ի վերջո, Գրիգորը համոզեց: Եվ Կարոն էլ համոզվեց, որովհետև երևի իրոք այլ ելք չուներ: Գրիգորը վերցրեց կոշիկների փաթեթը, որ Կարոն հանեց բարձի տակից, հետն էլ տխրած ասելով «Դե տես, թե վախից որտեղ եմ պահում» և քայլեց դեպի շուկա, մտքի մեջ կրկնելով առանց այն էլ պարզ հասցեն. «Կտորեղենի խանութների շարքի վերջը՝ Հնակարկատ Մացոյի բուդկան: Կարոն է ուղարկել»: Այդքանը:

Նա այնքան հպարտ էր և ուրախ՝ Կարոյի դիմադրությունը կոտրելու և ինչ-որ չափով նրան երախտահատույց լինելու գիտակցությամբ, որ երկյուղ բուրբուղի չէր զգում: Բուրբուղին: Հանգիստ մտավ շուկա, ակամա մի քիչ կանգ առավ՝ գույնզգույն կատունների ու աքաղաղների առջև. տեսավ, թե Սենիկ աղան ինչպես է մի ամբողջ հանդիսավոր արարողությամբ քաղցր թեյ բաժանում իր արտասովոր թեյնիկից, ուղեց ինքն էլ խմել, բայց հիշեց, որ գործ ունի և փաթեթը թևի տակ ամուր սեղմած անցավ կտորեղենի խանութների առջևով: Ահա և հնակարկատ Մացոյի տաղավարը: Երկար բեղերով մարդ է, մանրիկ մեխերը ատամների տակ սեղմած ինչ որ կոշիկի ներքան է մեխում օձի նման տափակ գլուխը վեր բարձրացրած երկաթի վրա: Մոտեցավ, կանգնեց, նայեց շուրջը: Ամեն ինչ ծանոթ էր, շատ սովորական ու առօրյա... Շուկան էր և շուկայի աղմուկը:

- Երևանի սառը ջուրը, նոր եմ բերել ախպուրակից...- հնչեց ուղղիղ նրա ականջի տակ:

Կուշտ կերել էր Կարոյենց տանը և ծարավ էր: Հիմա փաթեթը կհանձնեմ ու մի կուշտ ջուր կխամեմ, մտածեց նա, մի անգամ էլ ես փողով ջուր խամեմ, ինչ կլինի, եղածը մի կռպակ չի՞ :

Ավելի մոտեցավ Մացոյին ու գրեթե ականջին ասաց.

- Բերել եմ: Կարոն է ուղարկել:

Մացոն հոնքերի տակից նայեց Գրիգորին, շարունակելով մեխել ներքանը, հետո շուրջը նայեց և հավանաբար ոչ մի կասկածելի բան չնկատեց, որովհետև բարձրացավ աթոռակից, մեխերը բերանից հանեց, դրեց դազգահի վրա, մտավ ինչ-որ անկյուն ու ձայն տվեց:

- Բեր:

Գրիգորը ներս մտավ, թևի տակից հանեց ու Մացոյին մեկնեց փաթեթը: Մացոն բացեց թերթը, կոշիկներին նայեց, նորից Գրիգորին, և հանկարծ նրա աչքերը սարսափից լայնացան:

- Էս ինչ ա, այ լակոտ,- գոռաց նա,- բա ասում ես լավա՞ չ ա... վերցրու ու ռադ եղիր, ես քո իմացած մարդը չեմ:

Գրիգորը վերցրեց բաց փաթեթն ու ապշած նրան էր նայում, բայց դեռ բոլորովին վախեցած չէր, ուղղակի մտածում էր, որ թյուրիմացություն է, կամ Մացոն չի վստահում իրեն, կամ էլ ինքը սխալ հասցեով է եկել: Բայց քանի որ Մացոն կամ այն մարդը, որին ինքը Մացոյի տեղն էր դրել, շարունակում էր գոռոռալ՝ նայելով Գրիգորի կողքով, Գրիգորն ինքն էլ ետ նայեց ու միանգամից թուլացան ոտքերը: Նրա թիկունքում իրենց հաղթ մարմիններով փակելով լույսը, կանգնած էին երկու մարդ:

- Դե, դե, դերասանություն մի արա, Մացո, վերցրու,- քմծիծաղ տվեց նրանցից մեկը:

- Ե՞ս,- գոռաց Մացոն,- ի՞նչը վերցնեմ: Թե ես էս տղին առաջին անգամ չեմ տեսնում, գետինը մտնեմ,- անկեղծ զայրացած ասաց նա:- Ինձ հարցրեց լավա՞ չ ուզո՞ւմ ես, ես էլ ասացի՝ բեր: Էդքան բան...

-Դու քո խոսքերին հավատացի՞ր,-քմծիծաղ տվեց մյուսը, բայց չզիտես ինչու, ակնհայտ շփոթված էր:

- Վայ, դուք հո շա՞ն չեք,— նրա շփոթված լինելն անմիջապես որսալով, ավելի բարձր գոռաց Մացոն,— անմեղ մարդկանց բռնելու էս էլ նոր ձև էք հնարե՞լ: Դուք կոշիկները երեխայի թևի տակ էք դնում ուղարկում ու ետևից գալիս, որ բռնեք: Ինչի, ես հարի՞՞ք եմ, խոտակե՞ր եմ

- Դե, դե, ձենդ կտրիր – բարկացավ առաջինը,— ձենդ կտրիր ասում եմ...

- Տո ինչի պիտի ձենս կտրեմ,— բոլորովին նպատակ չունենալով ձայնը ցածրացնել, բղավում էր Մացոն,- ձենս կտրեմ, որ շատ անե՞ք: Դուք իմ ձեռքին կոշիկ էք բռնել, ես դրան փող եմ տվե՞լ, դե ասեք, է՛... Թող ամբողջ ժողովուրդն՝ էլ տեսնի, թե ոն էք անմեղ մարդու վրա շատ զգում...

-Մեղավորը դու ես, դո՛ւ,- առաջինի հասցեին նետեց երկրորդը,- ասեցի մի քիչ հետո մտնենք, որ փողն արդեն տված լինի: Դե հիմի արի ու հաստատի...

-Երկու հատ որ վզին հասցնեմ, կհաստատի,- խոստացավ առաջինը:— Փակիր ավազակաբույնդ,- հանկարծ հաստատ ոչ իր խոսքերով, վերամբարձ գոռաց նա Մացոյի վրա:— Գնացինք:

Բայց Մացոն արդեն լսել էր նրա վերջին խոսքերը և գոռում էր հենց այնպես, հանգստացած:

-Ո՛ւմ վզին հասցնես, ինչի՞, մեր միլիցիայում էլ են մարդ ծեծու՞մ: Հլա մի փորձի, անտե՞ր ենք, ինչ է, օրե՞նք չկա, դատախազ չկա:

- Վայ էն օրենքի հերն եմ անիծել, որ քեզ նման սպեկուլյանտին պիտի պաշտպանի,- սրտանց ասաց երկրորդը:—Վերջացրու, գնացինք:Շարժվիր, այ տղա,- հրեց նա Գրիգորին:

- Ե՛ս,- զարմացավ Գրիգորը:

Նրան դեռ հոգու խորքում ինչ-որ տեղ թվում էր, թե սա թյուրիմացություն է: Թե սրանք չգիտես ինչու Մացոյի վրա են բարկացած և դրա համար են գոռոգոռում: Կգոռոգոռան, կհանգստանան ու ամեն մեկը կգնա իր գործին: Նույնիսկ հիշեց, որ ինքն ուզում էր սառը ջուր խմել, դրա համար էլ ցնցվեց, երբ մարդկանցից մեկը հրեց նրան:

- Ե՛ս,- հարցրեց Գրիգորը:

- Չե՛ք ետեկինդ,- ծաղրեց մյուս մարդը:

Մացոն կախովի կողպեքով փակեց բուդկայի դուռը, բայց շատ հանգիստ էր կամ իրեն հանգիստ էր ձևացնում:

- Որ ինձ հարցնող լինի, ասեք հիմի գալիմ եմ –դիտավորյալ բարձր ասաց նա

հարևան խանութի աշխատողին ու ասես մարտահրավերով նայեց սպասող մարդկանց:

Բայց նրանք չպատասխանեցին:

Միլիցիայի բաժանմունքի շենքը հեռու չէր, և Գրիգորը նույնիսկ չնկատեց էլ թե երբ հասան: Երկրորդ մարդը Գրիգորի թևը բռնած նրան ինչ-որ մի սենյակ մտցրեց, որտեղ ընդամենը մի սեղան կար և երկու աթոռ: Մեկին ինքը նստեց, Գրիգորին էլ կարգադրեց փաթեթը սեղանին դնել ու նստել մյուս աթոռին, ասաց, որ իրեն անվանում են լեյտենանտ Մարկոսյան և անցավ հարցաքննության:

- Անուն-ազգանուն:

- Գրիգոր Ալեքսանյան:

- Հորդ անունը:

- Սանասար– ականա շուկով ասաց Գրիգորը:
- Ո՞րտեղ ես սովորում կամ աշխատում:
- Մանկավարժական տեխնիկումում: Առաջին կուրսում եմ:
- Բա գետինը չե՞ս մտնում, ուսանող տղա ես ու... Ձեռքերդ սեղանին դիր,— հանկարծ ձայնը բարձրացրեց նա: -Շուտ տուր ձեռքերդ: -Նա ուշադիր նայեց Գրիգորի մատներին: -Ուսանող տղա ես ու կոշիկի առևտրով ես զբաղվում: Ո՞վ է քեզ ես կոշիկները տվել:
- Գրիգորը գիտեր, որ եթե մեռնի էլ, Կարոյի անունը չպետք է տա:
- Շուկայի մոտ... մի մարդ կանգնեցրեց... խնդրեց որ...
- Հեքիաթներ ես պատմում,- քմծիծաղ տվեց լեյտենանտ Մարկոսյանը: - Հիմա ճիշտն ասա:
- Ճիշտն եմ ասում:
- Էդ մարդուն առաջի՞ն անգամ էիր տեսնում:
- Հա:
- Հիմա որ տեսնես՝ կճանաչե՞ս:
- Չէ:
- Բա ինչի էիր անձանոթ մարդուց ծանրոց վերցնում:
- Մեծ մարդ էր, խնդրեց...
- Ի՞նչ խնդրեց:
- Ասաց... էս փաթեթը վերցրու, կտորեղենի շարքն անցիր ու...
- Ու... ո՞ւմ տուր:
- Կոշիկ կարկատողին:
- Մացոյի՞ն:
- Անունը չասաց:
- Լեյտենանտ Մարկոսյանը բարձրացավ տեղից, մոտեցավ պատուհանին դուրս նայեց, հետո շրջվեց դեպի Գրիգորը:
- Որտեղացի ես, Գրիգոր Սանասարի Ալեքսանյան:

- Տառաշարի:
- Ո՞ր գյուղից:
- Հոնուտ:
- Էլի մեկ գոհ , - ինքն իրեն ասաց Մարկոսյանը:
- Սունդուկյանն է գրել,- ակամա դուրս թռավ Գրիգորի բերանից:
- Սա Սունդուկյանը չի գրել,- մռայլ ասաց Մարկոսյանը:- Մա Մացոն է գրել, Խդոն է գրել, Էն շան որդին է գրել, որը քեզ տվել է կոշիկները և որի անունը դու ինձ պետք է ասես հիմա, բոլոր էդ ստոր սրիկաներն են գրել, որպեսզի կործանեն քեզ նման միամիտ, անմեղ լակոտներին: Ուրիշի ձեռքերով կրակի միջից կաշտան են հանում ավազակները...
- Գրիգորը հիշեց Կարոյի ծակոտված ձեռքերը և ատամներն ավելի սեղմեց:
- Ո՞վ է տվել քեզ այդ կոշիկները, Գրիգոր...
- Ուրեմն՝ մի մարդ էր, տարիքով...
- Դե լավ,- ընդհատեց նրան լեյտենանտ Մարկոսյանը,— ջահել տղա ես, երևի առաջին անգամ ես միլիցիայի բաժնում (դա, իհարկե, մենք կճշտենք), դրա համար էլ ուզում եմ բացատրել քեզ: Տես ինչ է ստացվում: Մի մարդ, մի կոշկակար, որը պետությունից գողացած կաշվով կոշիկ է կարում և վաճառում մի գնով, որն իմ մի ամսվա աշխատավարձն է, քո շնորհիվ, որովհետև նրա անունը տալ չես ուզում, մնում է ազատության մեջ: Մի ընդհատիր: Լսիր: Մյուս ավազակը, որը վերցնում է այդ կոշիկներն ու վաճառում թանկ գնով և ոչ մի կոպեկ չծախսելով, հազարներ դիզում, քո շնորհիվ, որովհետև դու նրա անունն էլ չես ուզում տալ, դարձյալ մնում է ազատության մեջ: Տակն ով է մնում: Դու՝ Գրիգոր Սանասարի Ալեքսանյան: Միայն դու: Ուրիշների կատարած հանցանքի համար պետք է պատժվես դու: Կոշկակարը քեզ ինչքա՞ն փող տվեց...
- Էդ մա՞րդը,- հարցրեց Գրիգորը,- ոչ մի կոպեկ:
- Հեքիաթներ ես պատմում, Գրիգոր: - Երևի դա նրա սիրած արտահայտությունն էր, որովհետև կրկնեց:— Հեքիաթներ ես պատմում: Ո՞վ ունես գյուղում...
- Իմ նանն է,— ասաց Գրիգորն ու լաց եղավ:
- Ինչու հանկարծ լաց եղար:
- Ախր որ իմանա ինձ բռնել եք՝ կգժվի:
- Է՛լ ով ունես:
- Մեծ ախպերս բանակում է, քույրիկիս էլ էստեղ, հիվանդանոցում:

- Հա՞յրդ որտեղ է:

- Չկա: Մահացել է:

- Էլի մեկ գոհ,- կրկնեց լեյտենանտ Մարկոսյանը և նստեց սեղանի մոտ:— Բա դու քո մորը չե՞ս խղճում, քո հիվանդ քրոջը չե՞ս խղճում, քո եղբորը չե՞ս խղճում, որի անունը գցում ես դու, քո ջահել կյանքը չե՞ս խնայում: Ախր քեզ բանտարկելու ենք, Գրիգոր, դու ոչ առաջինն ես, ոչ էլ վերջինը: Բանտարկելու ենք, և դու արատավորվելու ես հուր-հավիտյան: Ինչի՞ համար: Ո՞ւմ համար: Բա դու չե՞ս ուզում նորից արև-աշխարհ դուրս գալ, գնալ քո դասերին...

- Ուզում եմ,— նորից լաց եղավ Գրիգորը:

- Ուրեմն, եթե ուզում ես, լսիր, թե ինչ պետք է անես ու ասես: Լսո՞ւմ ես:

- Հա:

- Ուրեմն՝ նախ պետք է ասես, թե ով է քեզ կոշիկները տվել: Երկրորդ՝ պիտի ասես, թե ում էիր հանձնելու և ինչքան փող էիր ստանալու: Երրորդ՝ թե կոշիկները տվողին և թե այդ սրիկա Մացոյին պիտի բերենք այս սենյակը և դու նրանց երեսին պիտի կրկնես նույն խոսքերը: Պա՞րզ է: Այ, միայն այդ ժամանակ ես կարող եմ միջնորդել ղեկավարության առաջ, խնդրել, որ ներեն քեզ, որովհետև հանցանք ես գործում առաջին անգամ, սովորող ես, հիվանդանոցում քույր ունես, գյուղում մենակ մնացած թշվառ մայր ունես և այլն և այլն... Հասկացա՞ր:

- Հա:

- Ուրեմն, տալիս եմ առաջին հարցը՝ ո՞վ է տվել քեզ այդ կոշիկները, Գրիգոր...

Գրիգորը լուռ էր:

- Չես ուզում ասել: Վախենում ես այդ կոշկակարից: Քեզ ասել է թե անունս տաս, կսպանեն: Հը՞: Ասա, խոսիր, փրկիր քեզ, այ տղա: Իմ փոխարեն մեկ ուրիշն այդքան երկար չէր խոսի քեզ հետ: Օգտվիր նրանից, որ ես բարի եմ, որ ես էլ քո տարիքի մի լակոտ ունեմ ու խղճում եմ քեզ, Խոսիր:

Գրիգորը չխոսեց:

- Դե լավ,- ասաց լեյտենանտ Մարկոսյանը:—Գիշերը կմնաս մեր խցում, կխելոքանաս... :

Իսկ մտքում ասաց.

- Կպատմես, տղա ջան, կպատմես: Մենակ քեզ նմանները չեն խոստովանել: Երբ որ փաստերը առաջդ դնեմ, կբացվես: Ասենք թե դու քո լավը չես հասկանում, կամ վախեցած ես, բա ե՞ս ինչի համար եմ: Մի քիչ շատ պիտի չարչարվեմ, այդքան բան: Դասընկերներիդ հետ կխոսեմ, ազգականներիդ կգտնեմ, քրոջդ հետ կգրուցեմ: Հազար ու մի ձև կա:

Եվ հենց քեզ համար կգտնեմ, կբռնեմ էն մարդուն, որը քեզ այս վիճակի մեջ է գցել: Կբռնեմ: Կամ գուցե վաղն ինքդ պատմես: Գիշերը որ չոր նստարանին քնես՝ կփափկես:

Եվ Գրիգորին իջեցրին ներքնահարկ:

Վերջին պահին Մարկոսյանը հարցրեց,

- Մեկը կա, որին տեղեկացնենք՝ հաց բերի քեզ համար:

Մագ էր մնացել, որ Կարոյի հասցեն տա, բայց այնպես սարսափեց այդ մտքից, որ նույնիսկ քեռի Պետրոսի հասցեն չտվեց: Ոչինչ, չի սատկի, շատ է սոված մնացել:

- Չէ՛- ասաց Գրիգորը:

Խուց կոչվածը երկարուկ մի սենյակ էր՝ պատերի տակ դրված չոր նստարաններով: Ոչ ոք չկար: Գրիգորը պատկեց թախտերից մեկին, գլուխը ձեռքերի մեջ առավ ու մի կուշտ լաց եղավ իր անբախտ կյանքի վրա: Լաց էր լինում ու համոզում ինքն իրեն, որ երբեք-երբեք Կարոյի անունը չի տա: Թող ծեծեն, թող բանտարկեն, թող գնդակահարեն, չի տա:

Երեկոյան ինչ-որ հարբած տղաների բերեցին, գոռգոռում էին, հայհոյում իրար ու չգիտես ում հասցեին, բայց Գրիգորին ձեռք չտվեցին, փովեցին ու քնեցին խոնփոցով՝ չոր տախտակների վրա: Իսկ ավելի ուշ, թե երբ, արդեն չիմացավ Գրիգորը, բացվեց խցի փոքրիկ պատուհանը և երկար, թավ բեղերով միլիցիոները մատով կանչեց նրան.

- Գրիգորը դո՞ւ ես:

- Հա, - ուրախացավ Գրիգորը:

- Քույրդ քեզ հաց է բերել: Ա՛ռ:

Բացել էր բերանը, որ ասի, թե չի կարող պատահել, բայց միլիցիոներն արագ փակեց դռնակը: Գրիգորն անմիջապես հասկացավ, որ եկողը Կարոյի քույրերից մեկն է եղել: Ուրեմն՝ Կարոն գիտի: Իսկ եթե գիտի, ուրեմն մի բան կանի, անտեր չի թողնի իրեն... Կարո՞ն... նա ուրախացած ու թեթևացած սրտով բացեց կապոցը, համենայն դեպս թիկունքով շրջվելով դեպի հարբածները, շտապ-շտապ կերավ խաշած ձվերն ու թարխունը, հավի բուղն ու մսի փոքրիկ կտորները, որոնք, հավանաբար, ջրալի ճաշի միջից էին հանված և երբ կշտացավ, ապագան այլևս այնպես սև ու տխուր չէր թվում նրան որքան քիչ առաջ: Եթե Կարոն գիտի, ... իսկ որ գիտի, այլևս ոչ մի կասկած չկա, ուրեմն նա մի բան կանի: Կապոցի տակ հայտնաբերելով նաև «Շախմատ» ծխախոտի տուփը: Գրիգորը զարմացավ ծխախոտ ինչո՞ւ է ուղարկել, չգիտի, որ չի ծխում: Հետո հանկարծ արկածային գրքերը հիշեց, պատառիկներ՝ ինչ որ պիեսներից ու մտածեց, որ ծխախոտը ինչ-որ բան նշանակում է: Նա բացեց տուփը, մեկ-մեկ ստուգեց գլանակները և տեսավ, որ մի գլանակի պարկուճի մեջ ծխախոտի փոխարեն ինչ-որ բարակ թուղթ է դրված: Երկյուղով պատուհանիկին նայելով, դողդողացող ձեռքերով հանեց թուղթը ու կարդաց. «Անունս չտաս, իմ ախպեր»: Ստորագրություն չկար: Եվ պետք էլ չէր: Գրիգորը ամեն ինչ հասկացավ ու ինչպես գրքերում էր կարդացել՝ ծամեց ու կուտվեց ծխախոտի բարակ թերթիկը: Կուլ տվեց ու ասաց մտքում. - «Չվախենաս, Կարո ջան»: Հետո մտածեց, թե հաջողություն է, որ կիրակի է վաղը, դասեր չկան, դասատուները չեն իմանա, իսկ հանրակացարանի տղաներն էլ կմտածեն, թե քեռու տանն է մնացել: Իսկ վաղը

հո մի բան կլինի, քանի որ ամեն ինչ Կարոյին հայտնի է: Եվ ինքն էլ չզգաց, թե ինչպես քնեց միանգամից՝ թախտի չոր տախտակներին պատկած:

Արթնացավ հարբածների աղմուկ-աղաղակից: Նրանք վիճում էին միմյանց հետ, անցած օրվա հաշիվները մաքրում, մեղադրում իրար, զարմացած շոշափում չգիտես երբ և որտեղ ստացած վերքերը, տնքում ցավից ու նորից հարձակվում իրար վրա: Իսկ Գրիգորը կծկվել էր մի անկյունում ու զարմացած մտածում էր, թե այդ ինչպե՞ս է, որ միլիցիոները ներս չի մտնում, չի սաստում նրանց: Եվ ասես ի պատասխան նրա մտքի, բացվեց պատուհանիկի դուռը և երկար ու թավ բեղերով միլիցիոները գլուխը ներս մտցրեց.

- Ձեններդ կտրեք,- ասաց նա գրեթե շշուկով և քանի որ չգոռաց, այդ շշուկը անմիջապես լռեցրեց բոլորին:- Ձեններդ կտրեք,- ասաց նա,- պատերազմ է սկսվել:

- Ինչ պատերազմ, ի՞նչ ես խոսում,- ուշքի գալով գոռոցոցին հարբածները:

- Գերմանիան պատերազմ է սկսել,- տխրած ասաց միլիցիոները,- ռադիոն հենց նոր հայտարարեց: Պատերազմ է, տղե՛րք:

... Երկու օր ոչ ոք չհետաքրքրվեց Գրիգորով և մի պահ նրան նույնիսկ թվաց, թե իրեն մոռացել են: Բայց երրորդ օրը եկան նրա ետևից ու տարան մի ուրիշ սենյակ, որտեղ նստած էր նրան բռնողներից մյուսը, նա, որ ասում էր. «Երկու հատ որ վզին հասցնեմ, կհաստատի»:

- Քո գործը ինձ մոտ է, – ասաց նա՝ նայելով սեղանին դրված թղթապանակին: – Ես կապիտան Ադամյանն եմ: Մարկոսյանը չեմ,-ավելացրեց նա,- երկար-բարակ խոսելու հավես չունեմ: Մի անգամ հարցնելու եմ ու վերջ: Ո՞վ է քեզ տվել էդ կոշիկները ու ասել, որ տանես տաս Մացոյին:

- Չգիտեմ,- ասաց Գրիգորը:

Նա, իհարկե, լավ գիտեր այդ: Բայց չգիտեր, բոլորովին չգիտեր, որ իր հարցը արդեն վճռված է և վճռվել է երեկ, ուշ գիշերին, այդ կապիտան Ադամյանի և շրջանի դատախազի օգնական և ժամանակավոր պաշտոնակատար Անմեղիկյանի միջև տեղի ունեցած զրույցի ժամանակ:

... Ադամյանը թղթապանակը փնջալով նետեց դատախազի օգնականի սեղանին ու ասաց.

- Էլ հալ չկա: Էդ Մարկոսյանն էլ ինչքան կիսատ-պռատ գործ կար, զցեց ինձ վրա ու հայդե՛ Կարմիր բանակ: Ես հերոս եմ, կամավոր եմ գնում...

- Հերոս է, բա ինչ է,- ասաց Անմեղիկյանը՝ բացելով թղթապանակն ու անքնությունից ուռած աչքերը հառելով հատ ու կենտ թղթերին: - Սա էն կոշիկների գործն է՞:

- Հա: Երեք օր է պահում ենք էդ լակոտին, չի բացվում: Ասեք, ի՞նչ անեմ:

- Կորցրու թող գնա,- ասաց Անմեղիկյանը:- Պատերազմ է, խառնվել է ամեն ինչ, միտք ունի՞ երկու գույգ կոշիկի համար այդ տղային բանտարկելը:

- Լուրջ եք ասո՞ւմ,- զարմացավ կապիտանը:



- Վաղը, մյուս օրը նրան էլ բանակ կտանեն,- իր մտքերի հետ՝ ասաց Անմեղիկյանը:
  - Բա կոշիկնե՞րը:
  - Կոշիկները պետականացրու:
  - Բա ի՞նչ ասեմ, ո՞րտեղից եմ գտել, հորս տնի՞ց: Վկաներ կան, արձանագրություն ենք կազմել, ձեռքին բռնել ենք, հիմա ի՞նչ անենք:
  - Վկանե՞րդ ովքեր են:
  - Դե... մեկը Մացոն է, մնացածն էլ...
  - Մացոն ո՞րն է, էն սպեկուլյա՞նտը:
  - Ինչ անեմ... Մարկոսյանի պատճառով չկարողացանք ձեռքին բռնել: Կպել էր թե շուտ արա, հա շուտ արա... ներս մտնենք...
  - Ու հիմա Մացոյին թողած, այդ տղայի՞ն էք բռնում:
  - Բա ի՞նչ անենք,- վրդովվեց կապիտանը,- բա ինչի՞ չի ասում, թե ումից է կոշիկներն առել: Ինչ անում ենք, չի ասում էդ շան ծիծ կերածը:
- Դատախազի օգնական Անմեղիկյանն ամբողջ օրը ոչինչ չէր կերել, անասելի ցավում էր ստամոքսը, նվում էր: Նա ուղղակի բռունցքով սեղմեց ստամոքսն ու հարցրեց.
- Հիմա ի՞նչ ես ուզում ինձանից, Ադամյան:
  - Սանկցիա տվեք: Առավոտը երեք օրը լրանում է, ավել չեմ կարող պահել:
  - Եվ ի՞նչ ես գրելու սանկցիայի մեջ:
  - Դուք տվեք, ես ինչ որ պետք է՝ կգրեմ:
  - Այ աղա, սանկցիայի մեջ հողվածը չի՞ գրվելու,- գայրացավ Անմեղիկյանն ու ավելի սեղմեց ստամոքսը:
  - Մի բան կգրենք, էլի:
  - Օրինակ ի՞նչ:
  - Օրինակ՝ օժանդակող:
  - Ինչի՞ օժանդակող կամ ո՞ւմ օժանդակող:
  - Գաղտնի արհեստով զբաղվողի կամ էլ սպեկուլյացիայի:
  - Եղա՞վ: Գաղտնի արհեստով զբաղվողը կա՞:

- Չէ:

- Բա ո՞ւմ է օժանդակել:

- Չնեղանաք, բայց հետաքրքիր մարդ եք, ընկեր Անմեղիկյան, բա ի՞նչ անեմ, կոշիկները տամ իրեն, ասեմ՝ գնա՛: Էգուց դու ընդհանուր ժողովում ի՞նչ կասես, կամ քե՞զ ինչ կասես, որ իմանան, թե եղպիսի կարգադրություն ես արել ինձ: Չե՞ն ասի, թե պատերազմի վախից կորցրել են գլուխները, թուլացրել են զգոնությունը և աչքաթող են արել սոցիալիստական օրենսդրության այն հիմնական կետը, որ ոչ մի հանցանք անպատիժ չպետք է մնա...

Դատախազի օգնական Անմեղիկյանը բարձրացրեց գլուխն ու, կարծես նոր էր տեսնում, զարմացած նայեց կապիտան Ադամյանին: Մա հենց այդպես էլ կասի, մտածեց նա դառնությամբ, ոչ երեխա ունի, ոչ ամոթ ունի ու ոչ էլ խիղճ: Առանց ձայն խնդրելու նույնիսկ վեր կկենա ու կասի: Մարկոսյանի նման տղաները գնում են, իսկ սա մնում է և ես պետք է սրա՛ հետ աշխատեմ: Անցյալ օրը, երբ միտինգ էր՝ պատերազմի առթիվ, ելույթ ունեցավ շրջանի դատախազ Կիրակոսյանը: Նա այնքան գեղեցիկ խոսեց, որ ծափահարեց ամբողջ դահլիճը, այնպես ոգևորեց միտինգի մասնակիցներին, որ նույնիսկ ինքը՝ Անմեղիկյանը, բեմ բարձրացավ: Եվ ասաց առանց կեղծելու, արցունքն աչքերին, որ եթե հարմար գտնեն, ինքը պատրաստ է հենց վաղն էլ մեկնելու բանակ և կռվելու հիտլերյան զավթիչների դեմ: Ի վերջո ի՞նչ նշանակություն ունի, որ ինքը հիսունն անց է, աչքերը, փառք աստծո, հիանալի տեսնում են և ձեռքն էլ չի դողում հրաձգության պարապմունքների ժամանակ:

Հետո խոսեցին երիտասարդները, պայծառ, առողջ, ոգևորված տղաներ, ասացին, որը ընկեր Անմեղիկյանը և բոլոր նրանք, ովքեր զորակոչի տարիքի չեն, կարող են հանգիստ մնալ, հերթը նրանց չի հասնի... Ինչպես սպիտակ ֆինները մի տարի չանցած՝ հանձնվեցին, այնպես էլ Գերմանիան ծնկի կգա: Բոլորն էլ ուզում էին կամավոր գրվել, միայն այս Ադամյանն ու նրա նման էլի մի քանի հոգի էին կծկվել անկյուններում և ծափ էին տալիս: Միայն ծափ էին տալիս: Ուրեմն նրանք գնալու են, և մնալու են սրանք ու պիտի ինքը աշխատի սրա՞նց հետ: Գնալու է նաև դատախազը և հավանաբար դատախազի թեկնածուների ցուցակում կլինի իր անունը ևս: Անպայման: Որովհետև ամենաշատ փորձն ինքը ունի և չունի ոչ մի դիտողություն...

Իսկ կապիտան Ադամյանը դեռ խոսում էր.

- Հետո ցուցանիշների հարց կա, ընկեր Անմեղիկյան, ոչ միայն եռամսյակն է փակվում, այլև՝ կիսամյակը: Վաղը չե՞ն ասի, էս ի՞նչ եք անում: Հափշտակության բացահայտում՝ ունեք, գների խախտում՝ ունեք, սպեկուլյացիա՝ ունեք, իսկ արգելված մասնավոր արհեստ՝ չունեք: Էն էլ որտե՞ղ, շուկայի շրջանում: Հերներս կանիծեն:

- Է , բռնեիք, նորից զայրացավ դատախազի օգնականը, - ձեր փոխարեն ես պիտի բռնեմ, ի՞նչ է:

- Բռնել ենք:

- Ու՛մ եք բռնել:

- Հենց էս սողային:

Դատախազի օգնականը թափահարեց գլուխը.

- Չի կաջի:

- Ես կկացնեմ:

- Ո՞նց, Ադամյան, դու էլ գիտես, որ նա կոշիկ կարող չէ:

- Ի՞նչ գիտեմ, է՛, համառեց կապիտանը:- Մասնավոր կարած կոշիկները ձեռքին շուկայում բռնե՛լ ենք, պրծավ... Որ մատները ծակծկված չեն, ի՞նչ անենք, գուցե թե՛ ձեռնոցներով է կարել: Դրանց շատ չկա: Որ ինքը, խոստովանեց, հերիք չի՞:

- Ո՞նց կխոստովանի:

- Կխոստովանի:

- Ադամյան, ձեռքերիդ ազատություն չտաս,- արյունով լցված աչքերը խոժոեց Անմեղիկյանը:

- Ես,- վիրավորվեց կապիտանը, հետո հիշեց, որ Անմեղիկյանը նոր չի ճանաչում իրեն և ժպտաց:- Դրան չի հասնի: Խելոք-խելոք կստորագրի ընկեր դատախազ...

Դատախազի օգնականը կապիտանին նայեց գրեթե ատելությամբ: Մի պահ քիչ մնաց պողոթկար և ասեր այն ամենը, ինչ իրականում մտածում է կապիտանի ու նրա նմանների մասին: «Դու միլիցիայի աշխատող չես,- մտքում ասում էր նա,- դու միլիցիայի աշխատողի անունը վարկաբեկող ես: Որովհետև ոչ խիղճ ունես, և ոչ էլ օրենքն ես հարգում: Քո տեղը սպանդանոցն է, բայց դու պատահաբար միլիցիա ես ընկել և քեզանից ոչ մի փրկություն չկա: Ընկե՛ր դատախազ... Շան նման զգում էիր վիճակը... էլ չգիտի, որ հենց դատախազ դարձա, շրջանը կմաքրեմ իր նման սաղիստներից և հենց առաջինը իրեն դուրս կշարտեմ: Հենց առաջինը... Բայց դրա համար պետք է, որ ինձ դատախազ նշանակեն, ինձ... Իսկ սրանից ավելի հարմար առիթ այլևս չի ներկայանա»:

Նա սրտանց, ամբողջ հոգով ուզում էր կապիտանի երեսին նետել իր դաժան և ճշմարիտ կարծիքը նրա մասին, բայց աջ ձեռքը նորից ստամոքսին սեղմեց, տնքաց ու հարցրեց.

- Դատարանում կանցնի՞:

- Դատարանում դուք չե՞ք լինելու,- ժպտաց կապիտանը: - Կանցկացնեք, էլի: Իսկ եթե արդեն դատախազ նշանակած լինեն, մի բան, որ մեր կոլեկտիվն ուզում է ամբողջ սրտով, և մաղարիչը մեզ վրա է, ձեր օգնականը քանի՞ գլուխ կունենա, որ ձեր սանկցիայից հրաժարվի:

- Բեր ստորագրեմ, բե՛ր,- հանձնվեց դատախազի օգնականը: - Շան երես ունես, Ադամյան:

Եվ կապիտանը գոհունակ ծիծաղեց:

Իսկ նրա հեռանալուց հետո Անմեղիկյանը թղթերը թաքցրեց անկեղ պահարանում, դուրս եկավ դատախազության շենքից և քայլեց դեպի տուն՝ բոլոր թույլ մարդկանց նման մտքում մեղմացնող հանգամանքներ հորինելով, որպեսզի խլացնի խիղճն ու արդարացնի ստորությունը, «Էհ, այդ աղան ուղղակի բախտ չունի, բախտ: Որ բախտ ունենար, անտեր պատերազմը չէր սկսվի ու Մարկոսյանը չէր գնա Բանակ:Նա հո կփորփրեր, կգտներ իսկական հանցագործին: Ադամյանի նման չէր թքի,

կպցնի գործը՝ հանուն ցուցանիշների և իր հանգստության: Բայց ո՞վ

գիտի գուցե բարին սա էր,- մտածում էր նա,- գուցե այդ գյուղացի տղայի բախտն էլ հենց սրանով է բերում: Ի՞նչ իմանաս: Պատերազմ է,

եթե մենք չբանտարկենք, վաղը մյուս օրը տանելու են ռազմաճակատ ու հենց առաջին օրն էլ կարող է գոհվել՝ ջահել-ջահել: Իսկ հիմա ի՞նչ է պատահել: Դատարանում ես եմ լինելու: Կասեմ՝ մի տարուց ավել չեն տա ու անմիջապես գաղութ կուղարկեն: Թող մի քանի ամիս աշխատի մաքուր օդում: Վնաս չկա: Իսկ եթե մինչև այդ պատերազմն էլ ավարտվի պիտի գա ու շնորհակալություն հայտնի ինձ: Չէ, հաստատ բարին սա էր»:

Ահա ամբողջ պատմությունը:

Ուրեմն փաստն այն է, որ երբ կապիտան Ադամյանը խոսում էր Գրիգոր Ալեքսանյանի հետ ու հարցեր էր տալիս, բանտարկության որոշումն արդեն կապիտանի գրպանում էր:

- Դե լավ,- ասաց կապիտան Ադամյանը,- զահլա չունեմ վերջացնենք: Ստորագրի,- դարձավ նա Գրիգորին:

- Որտե՞ղ,- հարցրեց Գրիգորը:

- Էստեղ, էստեղ ու էստեղ...

Գրիգորը ստորագրեց:

- Էստեղ էլ գրի, որ ամեն ինչ գրված է իմ խոսքերով, ճիշտ է, որի համար էլ ստորագրում եմ:

Գրիգորը գրեց:

- Ապրես,- ասաց կապիտան Ադամյանը,— ուրեմն իմացիր, որ դու մեղադրվում ես գաղտնի արհեստով զբաղվելու մեջ, այսինքն՝ որ կռշիկ ես կարում:

- Ե՛ս,- խղճալի հայացքով կապիտանին նայեց Գրիգորը:- Ես կռշիկ կարել չեմ իմանամ:

- Ուրեմն կարողի անունն ասա... Չե՞ս ասում... ուրեմն դու ես կարել... էս թղթերի մեջ հենց էդպես էլ գրված է, որ դու ես կարել... ու դու էլ ստորագրել ես: Ըհը , քո ստորադրությունը: Եթե ուզում ես էժան պրծնել, դատարանում էլ նույնը պիտի ասես: Հասկացա՞ր:

- Բա որ ասեն՝ մի հատ էլ կարի,- այլևս ոչինչ չհասկանալով, ոչինչ չզգալով, միայն մերկացվելու ահից հարցրեց Գրիգորը:

- Չեն ասի,- քմծիծաղ տվեց Ադամյանը,- նրանք կոշիկ շատ ունեն:

Եվ հոնուտցի Գրիգոր Ալեքսանյանի համար սկսվեցին անորոշ, անձև, անվերջանալի օրեր: Նրան բանտ տարան, որտեղ շատ շոգ էր և Գրիգորը մտածում էր միայն, թե ինչու երկու կողմից պատուհան չեն բացում, որ քամի լինի: Նրան կանչում էին մի առանձին սենյակ, որտեղ աթոռը մեխված էր հատակին ու հարցեր էին տալիս, նույն հարցերը, իսկ Գրիգորին միայն մի հարց էր հետաքրքրում, թե ինչ եղավ Կարոն, ինչպես է, որ չի երևում, չի խառնվում, բանտից չի հանում իրեն: Եվ երբ դատարան տարան, ուրախությունից քիչ մնաց լաց լինի, երբ դահլիճում նստածների մեջ տեսավ Կարոյի երեք քույրերին՝ երեքն էլ իրար նման սիրուն: Դատը դեռ չէր սկսվել, երբ հնամաշ լայնեզր գլխարկով և կեղտից փայլող փողկապով մի ծերունի մոտեցավ նրան:

- Ես քո դատապաշտպանն եմ,- ասաց,- Կարոյի մայրն է վարձել:

- Բա Կարո՞ն ուր է,- անհամբեր հարցրեց Գրիգորը:

- Հենց առաջին օրը նրան բանակ են տարել: Հիմա դու կարող ես հանգիստ պատմել ամեն ինչ, ամբողջ ճշմարտությունը,- շնջաց ծերունին,- հանգիստ պատմիր: Ես իմ պաշտպանությունը դրա վրա եմ կառուցել:- Նա զգաց, որ տղան չի հասկանում ու շտապով ասաց:- Բալիկս, նրանք Կարոյին այլևս ոչինչ չեն կարող անել: Իսկ քո գործը կթեթևանա:

- Հիմի ես ի՞նչ անեմ,- կործանված մրմնջաց պատանին:

- Ասա, որ Կարո Համբարյանն է քեզ տվել այդ կոշիկները:

Գրիգորը նայեց այնտեղ, որտեղ Կարոյի քույրերն էին նստած:

Ասես հաստատելով փաստաբանին, նրանք արտասվում ու գլխով էին անում:

Եվ Գրիգորը տարուբերեց գլուխը.

- Չեմ ասի:

- Ինչու՞,- ապշեց ծերունին:

- Չեմ ասի,— կրկնեց Գրիգորը,- Ես Կարոյի անունը էստեղ չեմ տա:

Դատարանը գրեթե կես ժամում ավարտեց նիստը և ամառվա այդ շոգին սև շալի մեջ փաթաթված մի կին, որ դատավորն էր, մրսած ձայնով հայտարարեց, թե՝ հանուն Հայաստանի խորհրդային հանրապետության, Գրիգոր Սանասարի Ալեքսանյանը այսինչ հողվածի այսինչ մասով դատապարտվում է մեկ տարվա ուղղիչ աշխատանքների:

Մի քանի օր հետո Գրիգորին ճամբար տարան և նա շատ գոհ էր նոր վիճակից, որովհետև գաղութում այնքան շոգ չէր, որքան բանտում: Հողի վրա էին ապրում, ինչպես գյուղում, տանը, և հողի վրա ձգված ներքնակներին էլ քնում էին, որովհետև նոր էր ճամբարը կառուցվում: Ուտելիքի համար չէր անհանգստանում, որովհետև բավարարվում էր տվածով, իսկ երկու անգամ էլ Կարոյի մայրն ու քույրերը եկան տեսության: Քույրերը կարդում էին Կարոյի

ուղարկած նամակները, որոնցում նա անընդհատ-անընդհատ Գրիգորից էր հարցնում, կատակներ էին անում, հպարտանում Գրիգորի հաստատակամությանը, իսկ մայրը Գրիգորին տեսնելիս գիտակցաբար թե ականա անընդհատ ասում էր՝ «Կարո ջան, Կարո ջան»...

Մի անգամ էլ Պետրոս քեռին ու Անուշ հարսն եկան: Խաշած հավ էին բերել, չորացած հոն ու կեղևով եփած կարտոֆիլ: Չոր հոնը այնքան հուզեց Գրիգորին, որ սիրտն ուռավ, լցվեց ու նա հարցրեց դողացող շրթունքներով.

- Բա նանս խի՞ չի գոնե մի անգամ գալիս, որ տեսնեմ...

- Հիլ չեն անում, քե մատաղ,- արտասվեց Անուշ հարսը- գետատար Վարսենիկի աչքերը քռռացել են: Էնքան լաց ա եղել քեզ համար: Հիլ չեն անում, պատերազմ ա, բերքահավաք ա, աշխատող չկա: Իմաց ա տվել, որ կյալ դի... ..

- Իսկ Շամամը դեռ հիվանդանոցո՞ւմ է:

- Հա, բալա ջան...

- Իսկ Լևոնը գիտի՞, որ ինձ բռնել են:

- Չէ, տղա ջան,- ասաց Պետրոս քեռին,- չեն ասում, որ հանգիստ կովի... Դիմացիր, Գրիգոր ջան, բան չի մնացել...

Գրիգորը հենց ճամբարի շինարարությունում էր աշխատում: Ծանր գործ չէր ու ինքն էլ սովոր էր այդ աշխատանքին: Գյուղում շատ էր շաղախ պատրաստել սրա-նրա համար: Ու հիմա էլ նույնն էր անում: Հողի վրա, մի կլոր տեղ բացած իրար էր խառնում կիրն ու ավազը, լցնում մի մեծ դուլի մեջ, իսկ վերևում, պատի վրա աշխատողները թոկով բարձրացնում էին դուլը, դատարկում ու նորից ցած իջեցնում: Ու մինչև որ նույն թոկը շարժելով ազդանշան էին տալիս, թե շաղախ է պեռք, Գրիգորը նստում էր ավազաթմբին ու... մտքով թռչում Հոնուտ: Գյուղում անցկացրած դառն ու որբ մանկությունն անգամ հիմա դրախտ էր թվում նրան, անդառնալի երազ ու ոսկե հեքիաթ:Նա մի ազատ վայրկյան անգամ ճամբարում չէր մնում, անմիջապես տեղափոխվում էր Հոնուտ, Լևոնի հետ, մի-մի ճիպոտ ոտքերի արանքում «Ճխտլըփակի», այսինքն քառատրոփ սլանում էր ծաղիկներով ծածկված մարգագետնի վրայով, մտնում բարձր արտերի մեջ բացված դեղին արահետները, ցորեն քաղում ու որևէ տափակ քարի վրա կրակ անելով հեղի անում, ավերի մեջ տրորում և ուտում այրող, կաթնաբույր, անմահական հատիկները: Մեկ էլ կովում էր Վարսենիկ նանի հետ, թե նանն ինչի է առաջ Լևոնի համար բլուզ կարում և ոչ թե իր, և խեղճ Վարսենիկը միաժամանակ երկուսի համար էր կարում: Մի թևը Գրիգորին էր հագցնում, մի թևը՝ Լևոնին: Որ չկովեն: Մեկ էլ հայտնվում էր փայտե մաշված կամի վրա և հոգնած ձիերի ետևից պտտվում հա պտտվում էր կալում: Ծարավում էր, իջնում էր ձորը, հենց աղբյուրի մոտից բլրողան էր քաղում և սնամեջ ցողունը կտրելով խրում աղբյուրի ակի մեջ ու հենց ցողունով խմում սառը, անապական ջուրը... Կամ էլ կեպին ետ էր շրջում, պառկում, երկու ձեռքով հենվում էր թաց սալաքարերին ու գլուխը թաղում աղբյուրի մեջ...

Թուկը ցնցվում էր, և Գրիգորը Հոնուտից անմիջապես վերադառնամ էր գաղութ, շաղախ էր լցնում ծանր դուլերի մեջ, ուղարկում վերև և նորից, նորից, նորից, ամեն օր, ամեն ժամ հասնում գյուղ: Մի անգամ էլ ինչ պատահեց, հա, սարսափելի բան էր, մինչև հիմա էլ որ հիշում է՝ փշաքաղվում է: Հերիքնազենց տանն էին: Ինքն էր, Լևոնն էր ու Հերիքնազի մինուճար Սահակը: Շատ փոքր էին, խաղ էին անում: Մեկ էլ Սահակը կանգնեց աթոռին, փայտե սյան մեխից հանեց հոր որսորդական հրացանը ու թե.

- Եկեք հրացանով խաղ անենք:

Լևոնը մեծն էր, Սահակի ձեռքից խլեց հրացանը:

- Բա որ մեջը պատրոն եղավ,— ասաց:

- Չկա,- հանգստացրեց Սահակը,- իմ հայրիկը հրացանի մեջ պատրոն կթողնի՞: Ուզո՞ւմ ես կրակի, տես...

Լևոնը հրացանի փողը պահեց դռան վրա ու քաշեց ձգանը: Փակաղակը չխկաց, ու կրակոց չեղավ:

- Տեսա՞ր,- ծիծաղեց Սահակը:-Դե տուր...Հրացանն իմ հորն է, ուրեմն առաջինը ես պիտի կրակեմ:

Նա հրացանի փողը պահեց Լևոնի վրա ու քաշեց ձգանը հետն էլ բղավելով.

- Չըխկ, դու սպանված ես, դե մեռիր...

Հետո ինքը՝ Գրիգորը վերցրեց հրացանը ու պահեց Սահակի վրա.

- Չըխկ դու սպանված ես, դե մեռիր...

Հետո՝ Լևոնը հրացանը պահեց Գրիգորի վրա.

- Չըխկ, դու սպանված ես, դե մեռիր...

Երեքն էլ փովել էին գետնին ու հո չէին ծիծաղում: Էնքան ծիծաղեցին, որ հոգնեցին: Իսկ ամենավերջում Սահակն ասաց.

- Տեսնում եք ծառի ճյուղին կանգնած էն հոպուպին. հիմի էլ կրակում եմ հոպուպի վրա:

Նա պարզեց հրացանի փողը, մի աչքը փակելով՝ սուտ նշան բռնեց ծառի վրա ու քաշեց ձգանը:

Լսվեց մի ահավոր որոտ, հրացանը ուժեղ խփվեց Սահակի ուսին ու ցած ընկավ: Ծառից դալար ճյուղեր ու տերևներ տեղացին ներքև: Կողքի տներից վախեցած դուրս թափվեցին հարևանները: Բայց էլ որտե՞ղ կարող էին բռնել սարսափած տղաներին, որոնք խլացած ականջներով սրտապատառ փախան մինչև Քաջքի ձոր կոչվող հոնի անտառը և անտառից դուրս չեկան, մինչև որ Հերիքնազն ու Վարսենիկը ամբողջ գյուղն իրար խառնելուց հետո

գտան նրանց ձորում, մացառների մեջ թաքնված ու իրենց բոլոր սրբություններով երդվեցին, որ չեն ծեծի տղաներին: Փառք ասածո, որ ողջ են մնացել: Էլ ո՞ր չորացած ձեռքը կբարձրանա նրանց վրա:

«Մուտ բան է: Ինչ որ ճակատին գրված է՝ կկատարվի: Ուրեմն մեր ճակատին գրված էր, ապրելու ենք» - մտածեց Գրիգորը:

Թուրը ցնցվեց և Գրիգորը նոր շաղախ լցրեց հսկա դուլի մեջ ու իր հերթին շարժեց թուրը, որ տղաները վերևում բարձրացնեն: Իսկ ինքը շտապեց Հոնուտ: Վերջին հիշողությունը, որ տարավ նա իր հետ վառ բոցով այրվող թոնիրն էր: Վարսենիկ նանը փայտե տաշտակի մեջ հավասար դասավորել էր կլոր-կլոր հունցված խմորը և սպասում էր բոցն անցնի, որպեսզի կախվի թոնրի վրա ու հաց թխի շիկացած պատերին: Իսկ ինքն էլ սպասում էր, որ սուտ-մուտ բռնի մոր ոտքը, որպեսզի իբր նանը հանկարծ չգլորվի թոնրի մեջ...

Բայց նանը առանց թոնիրն ընկնելու էլ վառվեց, մոխիր դարձավ ահավոր ցավից:

Վերևում, պատի վրա աշխատող տղաներից մեկը անզգուշորեն ձեռքից բաց էր թողել շաղախով լցված ծանր դուլը...

## ՀՈՒՇԱՐՁԱՆ

- Ապի, հե՛յ, ապի...

Սուրենը ոչինչ չլսեց՝ մուրճի բարձրացրած աղմուկի մեջ:

- Քեզ հետ եմ, ապի...- պապի ոտքից քաշեց թոռը:

Սուրենը ետ նայեց, տեսավ ոտքը բռնած Մխիթարին, ժպտաց, գործիքները մի կողմ դրեց, աջ ձեռքի մատներով սրբեց, ճակատից ցած թափեց քրտինքը ու ծնկեց թոռան առաջ:

- Հա, քե մատաղ, հա, ցավդ տանեմ...

- Ապի, Լուսիկն ասում է, թե ձմեռ պապի չկա, թե պապն ու տատն են նոր տարվա գիշերը մեր բարձի տակ խաղալիքներ դնում: Ճիշտ է ասու՞մ:

- Ո՞նց թե ճիշտ է ասում,- բարկացավ քարտաշ Սուրենը:- Ես դրա ականջները կպոկեմ, ո՞նց թե ձմեռ պապի չկա: Ո՞նց թե խաղալիքները մենք ենք բարձի տակ դնում: Պապն ու տատն էլ բան ու գործ չունեն՞:

- Հա, հա,- բավարարված ծիծաղեց Մխիթարը,- դրա ականջները մի լավ կքաշես...

- Անպայման,- խոստացավ պապը:

- Հիմի գնա՞մ իրեն կանչեմ:

- Ինչի՞՞:



- Որ ականջները քաշես:

- Չէ- ասաց պապը,- հիմա ժամանակ չունեմ, աշխատում եմ:

- Իսկ էս ի՞նչ ես սարքում, ապի:

- Հուշարձան,— ասաց քարտաշ Սուրենը:

Մխիթարը աչքերը կկոցած երկար նայեց քարին...

- Հը,- հարցրեց պապը,- ո՞նց է, լա՞վն է:

- Հա,- ասաց թոռը:Նորից երկար նայեց քարին ու ասաց:- Ապի, որ մեծանամ, ես էլ քեզ համար եմ հուշարձան սարքելու:

- Հուշարձան, հուշարձան,- ուրախությունից գոռգոռաց պապը, գրկեց, ձեռքերի վրա քարձրացրեց թոռանը, իջեցրեց՝ պաչեց ու նորից վեր թոցրեց, իջեցրեց, պաչեց ու վեր թոցրեց նորից:- Ես քո ցավը տանեմ, իմ իմաստուն բալա, իմ հեր, իմ թոռ, իմ հուշարձան: Դու որ կաս, արդեն իմ հուշարձանն ես, իմ հոր հուշարձանը, ախպեր ջան... Ախր ես մի բան գիտեի, որ քո անունը Մխիթար դրեցի: Իմ մխիթարություն...

Ինքն էլ ճիշտ այսքան էր, երբ Մխիթար հայրը պատերազմ գնաց ու էլ ետ չեկավ: Դեմքը չէր հիշում և խունացած, դեղնած, անհաջող լուսանկարներով չէր կարողանում պատկերացնել նրան:Բայց, զարմանալի բան, երկար ժամանակ հիշողության մեջ ամուր մեխվել, մնացել էր հոր հոտը: Եվ երբ մի օր մայրը երկաթապատ մի մեծ սնդուկից հանեց զոհված ամուսնու բլուզը, որ տանի Վարսենիկին ու նա էլ քանդի, մի որևէ բան սարքի Սուրենի համար, որդին հանկարծ մոր ձեռքից խլեց բլուզը, դեմքին սեղմեց ու հոտ քաշեց կարոտած, հոտ քաշեց, շնչեց մինչև սրտի խորքը ու լաց եղավ.

- Վա՛խ, իմ հայրիկի հոտն է, նանի ջան... Վա՛խ, նանի ջան, թող մի հատ էլ հոտ քաշեմ...

Երբ առաջին տղան ունեցան, Սուրենը ծննդատան պատուհանից նայող Ադունիկին ասաց.

- Անունը կդնենք Մխիթար:

- Ա՞յ տղա, դուրս կգամ՝ կորոշենք, էլի, հո տեր վռազը չես...

- Դուրս գաս, դուրս չգաս, անունը Մխիթար է լինելու,- ասաց Սուրենը:

Եվ, այնուամենայնիվ, Ադունիկն արդեն տանը մի անգամ էլ փորձեց ետ համոզել ամուսնուն:

- Սուրեն ջան,- ասաց,- իհարկե տան գլուխը դու ես, բայց մի բան ասեմ՝ չնեղանաս: Ասում են՝ լավ չի, որ երեխային զոհված մարդու անուն են դնում: Ասում են՝ հեռի մեզանից, անբախտ է լինում երեխան: Իհարկե, վերջին խոսքը քոնն է, բայց...

- Որ վերջին խոսքը իմն է,- ասաց Սուրենը,- ուրեմն,անունը կլինի Մխիթար:

Բայց դե էլ ինչ կին, որ այդքան հեշտությամբ հրաժարվի իր ասածից:

- Դե լավ, էլի,- թնկթնկաց Աղունիկը,- չնեղանաս, բայց դե Մխիթարն ի՞նչ անուն է, է՛ Մխիթա ր... Տես ուրիշներն ինչեր են դնում՝ Համլետ, Ռուսլան, Էնեաս, Կառլեն... Մարդու քեֆ է գալիս: Եվրոպական, ժամանակակից անուններ են: Հը՞, Սուրեն ջան, հը՞, իմ հերն ասում է...

- Եղավ,- հանգիստ ասաց Սուրենը,- ուրեմն տար ձեր տուն ու հորդ հետ միասին ինչ անուն ուզում եք դրեք: Եղա՞վ:

Եվ որովհետև Աղունիկը լռեց, Սուրենը օրորոցի միջից զգուշությամբ հանեց բարուրը, գրկեց, նայեց շրթունքները ուռցրած, ինչ-որ հոգսերից արդեն ճակատը կնճռոտած որդուն, բարձրացրեց բարուրն ու ինչպես կարդացել էր հենց նոր ավարտած «Երեք հրացանակիրները» վեպում, խոսքը փոխելով բացականչեց.

- Մեռավ Մխիթարը: Կեցցե՛ Մխիթարը...

- Կամաց, արջ,- տեղից վեր թռավ Աղունիկը:- Կամաց, ա՛րջ...

Եվ Սուրենը երջանիկ ծիծաղեց:

Իսկ երբ Մխիթարը Լուսիկից հետո տղա ունեցավ և Մխիթարն ու Սուրենը իրար հետ քչփչալուց հետո հայտարարեցին, թե որոշել են նորածնի անունը ևս Մխիթար դնել, հարսը ուրախ ժպտաց, սիրով ու նվիրված հայացքով նայեց ամուսնուն, իսկ Աղունիկը ծիծաղեց արդեն անչար.

- Լցրեք :Տունը Մխիթարներով լցրե՛ք...

... - Մխիթար, ա՛յ տղա, Մխիթար,- հեռվից լավեց Աղունիկը ձայնը — Որտե՞ղ ես, Մխիթար...

- Ձեն տուր, այ բալա,- ասաց Սուրենը,- չե՞ս լսում, ինչ է:

- Կարող ա հայրիկին ա կանչում,- խորամանկ ժպտաց տղան: -Ճիշտ չի, ապի...

- Հայրիկդ որտե՞ղ է, որ կանչի,— ծիծաղեց Սուրենը:— Հայրիկդ հունձ է անում սարում:

Իսկ Աղունիկը շարունակում էր արդեն անհանգստանալ.

- Մխիթար, որտե՞ղ ես, այ ոչ ու փուչ, ձեն հանի՝ այ կրակ ու պատիժ...

- Ձեն հանի, էլի, ա՛յ տղա,- շշնջաց Սուրենը:

- Գործ չունես,- ի պատասխան շշնջաց Մխիթարը:

- Ինչի՞:

- Կանչում է, որ քնեցնի...

- Է դու էլ քնի:

- Որ քունս չի տանում՝ ո՞նց քնեմ: Դե դու էլ քնի:

Սուրենը բռի մեջ ծիծաղեց: Էս լակոտի հետ խոսել չի լինում:

- Սուրեն, հե՛յ, Սուրեն...

- Ի՞նչ է,- ձայնեց քարտաշը:

- Մխիթարին չե՞ս տեսել: Մեռա ձեն տալով, չկա...

Սուրենը նայեց թոռանը: Նա կծկվել էր քարի ետևում ու ձեռքի ափով բերանը բռնած, աչքերով ծիծաղում էր ու հետն էլ նույն աչքերով պապին խնդրում էր չմատնել իրեն՝ հանուն տղամարդկային փոխըմբռնման և համերաշխության: Եվ Սուրենը ուժ չունեցավ մերժել թոռանը:

- Որտե՞ղ պետք է լինի, մի տեղ խաղում է, էլի,- ձայնեց նա տան կողմը:

Թոռը արագ-արագ խրախուսաբար գլխով արեց, իբր՝ կեցցես, պապ:

- Երեխուն մի բան չպատահի,- լավեց նորից տատի ձայնը:

- Չի պատահի: Էս մի թիվն էլ պրծնեմ, կգնամ կգտնեմ, դու հանգիստ մնա,— ասաց Սուրենը:

Տան դուռը չխկաց:

Մխիթարը դուրս թռավ քարի ետևից:

- Վա՛խ, պապ ջան,- ասաց,- բայց լավ խաբեցինք տատին, չե՞:

- Ես քո հերն եմ անիծել,- ծիծաղեց Սուրենը,- դու ինձ ինչ ասես կսովորեցնես... Դե մի խանգարի: Մի գործ գտիր քեզ համար, մինչև ես էս թիվը վերջացնեմ:

Նա նորից ձեռքն առավ մուրճն ու բրիչը, հանգիստ, համաչափ զարկերով փորեց վերջին թիվն ու կարդաց՝ «Գրիգոր - 1924 - 1941»: Հետո հանկարծ վախեցած թոռան լռությունից, նրա կողմը նայեց: Մխիթարը քարի տաշեղներից տուն էր սարքում: Տաշեղները սահում էին իրար վրայից, փլվում էր տունը, բայց տղան համառորեն, ջանասիրաբար նորից ու նորից քարը զգուշորեն դնում էր քարի վրա: Ու Սուրենը հանկարծ անասելի, գրեթե ֆիզիկական ցավ զգաց սրտում՝ այդ չքնադ, այդ անմեղ երեխայի համար: Հանկարծ մտածեց, որ ինքն էլ հենց նույն տարիքի էր երբ պատերազմ տարան հորը և ինքը մնաց որբ ու անտեր: Ու թեև անասոված էր ինքը, թեև անհավատ էին եղել իր հայրն էլ, պապի պապն էլ, բայց քարտաշ Սուրենը աչքերը վեր՝ կապույտ երկնքին հառեց շշնջաց:

- Տե՛ր, աստված, հեռու տար մեր անմեղ բալեքից պատերազմը: Մեզ չխղճացիր սրանց խղճա ու խնայի: Ամեն ինչի համաձայն եմ, թող սոված մնանք, թող ծարավ մնանք, թող շոր

չունենանք հագներս, մենակ թե պատերազմ չլինի: Մենակ թե ոչ մի երեխա որք չմնա աշխարհում:

- Էդ ի՞նչ ես խոսում, ապի,- վախեցած ձայնեց Մխիթարը:

Քարտաշ Սուրենը ցնցվեց, նայեց թոռանը, ամաչեց ու շփոթվեց անասելի:

- Արտասանում էի,- ասաց նա:

- Ու լրիվ պրծա՞ր,- հիասթափված հարցրեց թոռը:

- Հա ինչ որ պետք էր, ասացի ու պրծա:

Թոռն ուզեց էլի ինչ որ բան հարցնել, նույնիսկ բացեց բերանը, երևի ուզում էր խնդրել, որ պապը նորից արտասանի, բայց նայեց նրա տխուր, միանգամից խստացած դեմքին ու ձայն չհանեց: Կախեց գլուխը, տեսավ, որ նորից փլվել է իր տունը, հառաչեց մեծավարի ու նորից սկսեց անշտապ, զգուշորեն իրար վրա դնել անհարթ տաշեղները, որ պապը պոկել էր հուշարձանի քարից:

Քարտաշ Սուրենը ևս ակամա հառաչեց, խորասուզված իր մտքերի մեջ, վերցրեց քանոնն ու սուր դանակը, չափեց, նոր գծեր քաշեց քարի վրա և գրեց գծերի արանքում՝ «Լևոն — 1920 — 1945»:

## ԼԵՎՈՆ

5.09.39թ.

Նամակս կայարանից Հոնոլու, իմ թանկագին մայրիկ Վարսենիկին:

Իմ սիրելի և անմոռանալի մայրիկ, նախ թույլ տուր իմ անկեղծ սրտից բխած քաղցր ու կարոտալի բարևները ուղարկել քեզ, իմ եղբայր Գրիգորին, իմ քույրիկ Շամամին, և նմանապես Հերիքնազ աքորը, Մաշո աքորը, Թևան դայուն և նմանապես բոլոր բարի կամեցողներին: Իսկ երկրորդը՝ եթե հարցնես ինձանից, ողջ եմ, առողջ եմ ու միայն ձեր քաղցր կարոտն եմ քաշում:

Մայրիկ ջան, ընդամենը երկու օր է, ինչ բաժանվել ենք, բայց ոնց որ մի տարի է անցել, այնքան եմ կարոտել: Շորերս պասիլկա արեցի, ուղարկեցի գյուղի հասցեով, հետևեք, որ ստանաք: Ինձ շոր պետք չէ, որովհետև ասացին, թե երբ որ զորացրվենք, մեր վրայի զինվորական շորերը մեզ են մնալու: Այնպես որ հետևեցեք, որ ստանաք և քանի որ դու ոսկի մատներ ունես, մայրիկ ջան, մի քիչ փոքրացրու ու հագցրու Գրիգորին: Չպահես: Ես որ զամ, մեծացած կլինեմ, իմ վրա էլ չեն լինի:

Գնում եմ բարձր տրամադրությամբ, հետիս տղաները բոլորն էլ լավ տղաներ են և ոչ մի տարբերություն չեն դնում: Այնպես որ՝ շատ ուրախ եմ:

Միրելի մայրիկ, մենակ մի տեղ սիրտս շատ լցվեց և չեմ կարող չգրել: Երբ որ մեզ շարքով տանում էին բաղնիք՝ գլուխներս խուզելու և լողանալու, անց կացանք մեր հին տան առջևով: Հանկարծ հիշեցի, որ մենք լրիվ էինք, բոլորս իրար հետ, ու հանկարծ հիշեցի, որ մենք երջանիկ էինք: Ջարմանալի բան է, չէ՞: Երջանիկ ենք եղել ու չենք իմացել: Կարծել ենք, թե սովորական բան է: Միրտս լցվեց ու շատ կարոտեցի: Դու գիտես՝ ում: Եթե հանկարծ որևէ տեղեկություն լինի, բանավոր թե գրավոր, ինձ իմաց տվեք: Հաջորդ նամակում երևի հասցե ունենամ:

Մնամ ձեր կարոտը քաշող

Լևոն Ալեքսանյան

Կայարան:

15. 11. 39 թ.

Միրելի մայրիկ, կներես որ ծուռ ու մուռ եմ գրում, որովհետև մատներիս վրա փչում եմ՝ նոր գրում: Այստեղ իսկական ձմեռ է, բուք ու բորան, բայց մեզ տաք-տաք շորեր են հագցրել, չենք մրսում: Իմ հրամանատարն ինձնից շատ գոհ է: Գրում եմ, որ ուրախանաս: Երեկ կանգնեցրեց շարքի առաջ ու բոլորին ասաց.

- Սովորեք ծառայել այնպես բարեխիղճ ու այնպես կարգապահ, ինչպես մարտիկ Ալեքսանյանը:

Հետո կանչեց ու երկար խոսեց հետս: Շատ զարմացավ, որ կոմերիտական չեմ և առաջարկեց դիմում տալ: Երբ ես նրան բացատրեցի հանգամանքները, ջղայնացավ.

- Այստեղ, թշնամու դեմ-հանդիման,- ասաց,- բոլորից պարզ է երևում: Թե ով է արժանի կոմերիտական դառնալու: Հենց հիմա նստիր ու գրիր դիմումդ:

Ես էլ գրեցի,

Կներես, մայրիկ ջան, տազնապ հայտարարեցին: Ես թռա:

Քո Լևոն

18.02. 40 թ.

... Իմ աննման մայրիկ Վարսենիկ: Այնքան եմ կարոտել քեզ, Շամամին, Գրիգորին, մեր գյուղին, որ երբ հիշում եմ՝ քթիցս ծուխ է դուրս գալիս: Ես կոմերիտական եմ, մայրիկ ջան: Երաշխավորեցին հրամանատարն ու քաղեկը: Մի շաբաթ առաջ էլ նկարեցին գնդի դրոշակի տակ: Նկարն այնքան էլ հաջող չի, բայց ուղարկում եմ: Սրտիս վրա, որ մի կյոռ, սպիտակ բան կա, մեղավ է, մայրիկ ջան: Վրան ռուսերեն գրված է՝ «Խիզախության համար»: Որ լավ նայեք՝ կարդացվում է: Իսկ թե ինչի համար ստացա, նամակով գրելու բան չէ: Կգամ, մանրամասն կպատմեմ: Միայն իմացիր, որ քո տղան ոնց որ խոսք էր տվել, սրտանց ու ազնվորեն ծառայում է հայրենիքին: Էն Մարկոսին որ տեսնես, այսինքն իմ պապի հոր մյուս թոռանը, իմ

նկարը ցույց տուր ու ասա. «Հիմի՝ ի՞նչ ես ասում, շան տղա, ո՞վ է իսկական կոմերիտականը».  
Հենց այդպես էլ ասա, մայրիկ ջան: Իսկ մնացածը՝ կգամ, կավելացնեմ:

Շատ եմ նեղացած ձեզանից: Նամակ չե՞ք գրում, թե ես չեմ ստանում: Ճիշտ է, մի տեղ չենք մնում, դե կռիվ է, հասկանալի է, բայց ուր գնում ենք, փոստը գալիս է մեզ հետ: Ուզում եմ ասեմ, թե այդ ոնց է, որ ուրիշները նամակ ստանում են ու մենակ ես նամակ չեմ ստանամ: Շատ եմ անհանգիստ Գրիգորից: Մենակ մնաց ախպերս: Հո շատ չեն նեղում: Իմ ոսկեծամ քույրիկը ոնց է, իրեն ասա, անխիղճ, անջիգյար, գիտես թե ոնց եմ ես քեզ սիրում, բա ժամանակ չե՞ս գտնում եղբորդ մի բարև ուղարկելու:

Հետո, նանի ջան, շատ եմ ամաչում՝, բայց ճար չունեմ, ամաչելով էլ գրում եմ, մի խոսքով երևի դու գիտես, մեր գյուղում մի աղջիկ կա... Որ քեզ մոտ գա ու մի բան ասի, իմացիր, որ ես էլ եմ ասում: Խոսք եմ տվել, մայրիկ ջան:

Գիտեմ, որ քեզ համար շատ դժվար է: Գիտեմ, մայրիկ ջան, բայց դու սովոր ես դիմանալու և ամբողջ կյանքում սպասել ես: Էլի պիտի դիմանաս: Մի քիչ էլ սպասի: Ես կգամ, կհաղթենք սպիտակ ֆիններին ու կգամ, որ սրբեմ քո արցունքները, իմ տանջված մայրիկ:

Լևոն

Գործող բանակ:

22.05.40 թ.

Վերջապես ժամանակ ունեցա քեզ նամակ գրելու, մայրիկ ջան: Երբ մարտական առաջադրանքը կատարելուց հետո ետ եկանք, քիչ մնաց ուրախությունից խելագարվեմ: Մեկ էլ տեսա թախտիս վրա միանգամից հինգ նամակ կա՝ քեզանից, Շամամից, Գրիգորից, Հերիքնազից ու Շողերից: Մեկ-մեկ համբուրեցի նամակներն ու բացեցի:

Շատ ուրախ եմ, որ ողջ եք, առողջ եք: Ես էլ եմ առողջ ու մի հետաքրքիր բան ասեմ, մայրիկ ջան, գյուղում որ մի թեթև քամին տալիս էր, մրսում էի տեղն ու տեղը ու սկսում փռշտալ: Հիշո՞ւմ ես, բանակ գնալուց առաջ Գրիգորն էլ ձեռք էր առնում, թե դու քո փռշտոցներով ֆիններին լեղաճաք կանես: Այստեղ համ ժամերով պառկած եմ մնացել ձյունների մեջ, համ բուք ու բորանի տակ պահակ կանգնել, համ մինչև ոսկորներս թրջվել եմ անձրևից, բայց ոչ մի անգամ ոչ հազացել եմ ու ոչ էլ՝ Գրիգորին ասա, փռշտացել: Առանց իմ փռշտոցների էլ ֆինները լեղաճաք փախչում են:

Եվ իմ կարծիքով գաղտնիքը գիտես որն է, մայրիկ ջան, գաղտնիքն այն է, որ երբ գյուղում մրսում էի, գիտեի, որ իմ քաղցր մայրիկը ինձ համար վռագ-վռագ հոնի թթու կեփի կամ էլ տաք-տաք չայ կտա՝ վարդի մուրաբայով, դրա համար էլ թուլանում էի ու հանգիստ մրսում, իսկ այստեղ ինձ ո՞վ է հոնի թթու սովորը, իմ անուշ մայրիկ: Ում հույսին հիվանդանամ:

Հա, մի բան էլ ասեմ՝ ուրախացիր, գիտեմ, որ դու քիչ ուրախություն ունես, նանի ջան: Գնդի հրամանատարն ասաց, որ հենց որ հաղթենք ֆիններին, ինձ ուղարկելու է տանկիստների դպրոց: «Դու հիանալի կովող ես, մարտիկ Ալեքսանյան,- ասաց,- կուղարկեմ, տանկ վարել

կտվորես: Իսկ հենց որ գորացրվես՝ արդեն մասնագիտություն կունենաս՝ ուզում ես տրակտոր նստիր, ուզում ես ավտոմեքենա: Ինքդ կորոշես»:

Նավթը պրծավ, մայրիկ ջան, ճրագը հանգչում է ու ես վերջացնում եմ իմ նամակը, որ քնեմ: Ի՞նչ իմանամ, երբ են վերկացնելու:

Քեզ միշտ սիրող ու կարոտած Լևոն

Գործող բանակ:

18.09.40

Ես տանկային դպրոցի կուրսանտ եմ: Ամբողջ դպրոցում մայրիկ ջան, մի քանի հոգի ենք, որ մասնակցել ենք ֆիննականին և ես, քո որդին, միակն եմ, որ մեղալ ունեմ: Մնացած սովորողները երեխաներ են: Այնպես որ՝ պատիվս բարձր է: Երկու օր առաջ խնդրեցին, որ պատմեմ ֆիննական պատերազմի մասին: Ու ես պատմեցի ռուսերեն: Շատ էի վախենում, որ կծիծաղեն սխալներիս վրա: Բայց ոչ ոք չծիծաղեց:

Շամամը ո՞նց է, մայրիկ ջան: Իսկ Շողե՞րը ոնց է:

Ախ, ոնց եմ կարոտել ձեզ:

Լևոն

Չեյաբինսկ: Տանկիստների դպրոց.

28.06.41..

Անգին մայրիկ, ստացա քո ուղարկած քառասուն ռուբլին: Եվ ոնց որ ստացա, այնպես էլ ետ եմ ուղարկում: Ինչո՞ւ ես ինձ տանջում, մայրիկ ջան: Իմ ինչի՞ն է պետք փողը: Առանց այդ էլ ամաչում եմ, որ մեծ տղա եմ, ու քեզ ոչնչով չեմ կարողանում օգնել: Սիրտս լցվում է, երբ պատկերացնում եմ, թե ոնց ես դեռ լույսը չբացված գնում գործի (ականջիս մեջ ձեր բրիգադիրի ձայնն է, «Վարսենի կ») ու վերադառնում մթնով, իսկ հետո էլ նստում ու թխկթխկացնում քո կարի մեքենան: Փոխանակ մենք քեզ պահենք, էլի դու ես պահում մեզ, իմ սիրելի, իմ տանջված մայրիկ: Ինձ ոչ մի բան պետք չէ, թե կարող ես էլի Շամամին ու Գրիգորին օգնի: Էդ ցա՞վը որտեղից կպավ իմ կջկչան քույրիկին: Լավ է, որ գոնե Գրիգորը Երևանում է, կհետևի նրան:

Իսկ այն հեռավոր տեղից լուր չկա՞, մայրիկ:

Հավատա, երբեք այնքան չեմ ցանկացել տանը լինել, որքան հիմա: Քո կողքին լինել: Խնդրում եմ չնեղանաս, բայց ոնց որ թե մեր տունը ձեռքից գնում է: Ախր ինչքան էլ հերոս լինես, մայրիկ ջան, էլի կին ես: Տունն առանց տղամարդի ի՞նչ կլինի: Դե ոչինչ, բան չի մնացել, օրերն եմ հաշվում, թե երբ պիտի գամ: Մնացել է հարյուր քսանհինգ նախաճաշ, հարյուր քսանհինգ ճաշ և հարյուր քսանվեց ընթրիք:

Քո որդի Լևոն

Տանկիստների դպրոց.

17.07.41 թ.

Մայրիկ ջան, անուշ մայրիկ, ասա, ես ինչ անեմ, որ դու լաց չլինես: Նամակիդ տողերը հագիվ եմ կարողանում կարդալ ամեն բառի վրա մի արցունք կա չորացած: Ի՞նչ անեմ: Ես ո՞նց սրբեմ քո արցունքները: Երբ իմացա, որ հիտլերյան Գերմանիան պատերազմ է սկսել, մայրիկ ջան, առաջին հերթին մտածեցի, որ մեր ընտանիքի դեմ է պատերազմ սկսել, մեր տան վրա է հարձակվել: Ախր ես օրերն էի հաշվում, որ ձեզ հասնեմ, իսկ հիմա...

Բայց դուք կովից-բանից չվախենաք, ցավդ տանեմ: Ընկեր Վորոշիլովը, ընկեր Տիմոշենկոն և ընկեր Բուդյոնին երեք ճակատ են սարքել և մեկ հարձակումով բավականին քշել են գերմանացիներին և հազարավոր գերիներ վերցրել: Հավատացած եղեք, որ սրանից հետո մեր զորքը նրանց պիտի քշի շարունակ:

Իմ մասին էլ կարող եմ հայտնել, որ հիմա Չեյաբինսկի տանկային գործարանում եմ աշխատում: Չգիտեմ ո՞նց որոշեցին, բայց այդպես է: Ախր քիչ էր մնացել, որ ավարտեի, օֆիցեր էի դառնալու: Մի բան եմ կասկածում:

Շատ եմ խնդրում քեզ, Հերիքնազին, Շողերին և բոլոր նրանց, ովքեր ստանում են իմ նամակները, որ իմ հասցեն ուրիշի ցույց չտան: Ուրիշի ցույց մի տվեք, որովհետև կասկածում եմ, որ տանկիստների դպրոցի հասցեն ուրիշի (դու գիտես թե ում) ձեռք է ընկել և նա էլ նամակ է գրել մեր ղեկավարությանը: Ե՞րբ պիտի ինձ հանգիստ թողնեն: Ե՞րբ: Երբ պիտի թողնեն ապրենք:

Շատ անհանգիստ եմ Շամամից, Գրիգորից... Շողերը դեռ մեր տա՞նն է, թե իրենց տնից է գրում: Շատ անհանգիստ եմ...

Լևոն

Չեյաբինսկի տանկային գործարան

28. 10. 41 թ.

Միրելի մայրիկ, խոստովանում եմ, ես հոգուս խորքում համոզված էի, թե ուրախությունն չեմ տեսնելու: Համարյա հաշտվել էի այն մտքի հետ, թե ուրախությունը ուրիշների է, իսկ ես ու մենք կողքից նայողներ ենք: Ինչ անեմ. մինչև հիմա այդպես է եղել: Ու մեկ էլ՝ քո նամակը: Ուրեմն, հայրիկս կա: Ուրեմն՝ իմ զարմանալի հայրիկը հեքիաթի փյունիկ թռչունի պես նորից ծնվել է մոխիրներից: Կեցցե՛ իմ հայրիկը և կեցցես դու, որ ամբողջ կյանքում սպասել ես նրան: Չնեղանաս, մայրիկ ջան, բայց հանկարծ ուզեցի հայրիկին գիտես ինչի հետ համեմատել՝ ճանապարհի կողքին աճած տուղտի հետ: Անցնում են մարդիկ՝ ոտքերով տրորում են, անցնում են սայլերը անիվներով են տրորում: Ծալում են, ճնշում են, թաղում են փոշու մեջ ու մտածում ես, թե վերջ, ջնջվեց, կորավ տուղտը, էլ ոտքի չի կանգնեի, բայց մեկ էլ տեսնում ես՝ ծեծված կողերն ուղղում, գլուխը հողից դանդաղ-դանդաղ բարձրացնում է այդ հպարտ, աննկուն, համառ բույսը ու թափ է տալիս տերևների փոշին... Հաջորդ նամակում ինձ



անմիջապես ուղարկի հայրիկի դաշտային փոստարկղի համարը, մայրիկ ջան, որպեսզի նամակ գրեմ իմ զինվոր հորը: Փառք ու պատիվ Սանասար Ալեքսանյանին:

Ձեր որդի Լևոն

Տանկային գործարան:

6.07.42 թ.

Իմ քաղցր մայրիկ, ոչինչ չեմ հասկանում ու կասկածների մեջ եմ: Ինչո՞ւ ինձ չուղարկեցիր հայրիկի դաշտային փոստարկղի համարը: Ինչո՞ւ Շամամն ու Գրիգորը նամակ չեն գրում ինձ: Իմ հարցերին ոչ դու ես պատասխանում, ոչ Շողերը և ոչ էլ Հերիքնազը: Ուզում եք զինկոմիսարիատի՞ն նամակ գրեմ, ի՞նչ է: Մեղք եմ, չէ՞: Ինչի՞ եք տանջում: Լեզուս չի պտտվում, որ ամեն ինչ պարզ գրեմ: Ի՞նչ է պատահել, մայրիկ ջան: Խնդրում եմ բացարձակ գրեք, որովհետև տանջվում եմ անորոշությունից:

Նորից եմ կրկնում, ինձ ոչ մի բան պետք չէ: Ինչով կարող ես՝ Շամամին օգնիք և Գրիգորին: Ես գիտեմ, Շամամը դեռ հիվանդանոցում է, իսկ իմ անուշ եղբայրը՝ բանտում: Ես գիտեմ: Եվ հաստատ գիտեմ, որ Գրիգորը մի ուրիշ մարդու գոհ եղած կլինի, որովհետև նա անընդունակ է ստորության կամ անազնվության: Այնպես որ՝ նրանց օգնի, եթե կարող ես, մայրիկ ջան: Ես միայն մի բանից եմ նեղվում. ծխախոտի պակասից: Այստեղ բողկի չորացած թևեր են վաճառում, փոքրիկ բաժակը հինգ ռուբլի: Մի պապիրոսը 6—7 հոգով ենք ծխում: Այնպես որ, թե կարող եք՝ ծխախոտ ուղարկեք: Ուրիշ ոչինչ:

Քո անհանգիստ որդի Լևոն Տանկային գործարան

31. 12.42. թ.

Շնորհավոր ձեր նոր տարին, իմ հարազատներ:

Մեղրով շաղախված ու կարոտալի խոսքերս հեռավոր Չեչարհինսկից ուղարկում եմ դեպի կաթնաղբյուր Հայրենիք, ծաղկածիծաղ Հայաստան, իմ հարազատ մայր Վարսենիկ Ալեքսանյանին:

Մայրիկ ջան, դեռ տանկային գործարանում եմ: Պլաններս կատարում եմ երկու հարյուր տոկոսով: Որպես լավ աշխատողի, խոստացել են արձակուրդ տալ, որ մի քանի օրով գյուղ գամ, տեսնեմ ձեզ: Երեկ պարզևատրեցին ինձ, մի ձեռք զինվորական հագուստ տվեցին, մի գլխարկ ու մի գույգ կոշիկ: Եվ հարյուր ռուբլի փող: Այդ հարյուր ռուբլին ձեզ եմ ուղարկում, մայրիկ ջան, երեխաների վրա ծախսիր: Գիշեր-ցերեկ աչքիս առաջ են Շամամն ու Գրիգորը: Դե՛ հաշվում եմ, Գրիգորի տարին վաղուց լրացած պետք է լինի: Բանտից դու՞րս է եկել, թե չէ: Այստեղ մի երկու անգամ մեզ ամերիկյան խտացրած կաթ տվեցին, տուփերի մեջ: Հավաքեցի, վաճառեցի շուկայում ու Շամամի համար մի սիրուն ծաղկավոր շոր առա: Որ գամ, կրեբեմ հետս: Որ չգամ՝ կուղարկեմ: Բժիշկներն ի՞նչ են ասում, մայրիկ ջան...

Անգին մայրիկ, ես քեզ խրատ տալու իրավունք չունեմ, որովհետև դու խելոք մայրիկ ես, տառապած ու փորձված, և տեսել ես շատ դժվարություններ և նամուսով ու պատվով ես

ապրել: Պատիվդ միշտ բարձր պահիր, իմ Վարսենիկ մայրիկ, և էլի պայքարի այս վերջին դժվարությունների դեմ, մինչև որ արժանանանք իրար: Չպետք է նեղանալ ոչ մի բանից, ծանր ժամանակներ են, բա ի՞նչ ես կարծում, աշխարհում պատերազմ է, արյուն է թափվում: Շատ ծնողներ են սպասում իրենց գավակներին պատերազմի բեմից՝ են լ ո վ գիտի, կան թե չկան: Պետք է դիմանալ, համբերել, մինչև որ ետ քշենք գազազած շուն Հիտլերին ու դրանից հետո վայելենք մեր խաղաղ կյանքը:

Մի մտածիր, մայրիկ ջան, ինչ էլ լինի գալու եմ, հասնելու եմ քեզ և պիտի պահեմ քեզ այնպես, որ մոռանաս անցյալի ամեն մի դառնություն ու դժբախտություն:

Այդ հույսով ապրող՝ Քո Լևոն

Տանկային գործարան:

15. 03. 43 թ.

Այլևս հարցեր չեմ տալիս, մայրիկ ջան, որովհետև ինչքան տվեցի, իմ հարցի ոչ մի պատասխանը չստացա: Ես չգիտեմ ինչ էք մտածում դուք, բայց լավ իմացեք, որ ճիշտ չեք անում: Երբ լռում եք, ես շատ ավելի սարսափելի բաներ եմ պատկերացնում, քան թե իրականում կարող են լինել: Ի՞նչ ասեմ, դուք ու ձեր խիղճը:

Ես լավ եմ ու վերջապես հասա իմ նպատակին հենց հիմա, որպես բրիգադիր, հավաքում եմ այն տանկը, որով ռազմաճակատ եմ մեկնելու: Մեկնելու եմ որպես տանկի հրամանատար: Պետական բոլոր քննությունները, հանձնեցի «գերազանց»: Շատ էի վախենում, թե կկտրվեմ: Ախր ով որ լավ չի հանձնում քննությունները, ծիծաղում են նրա վրա, ծաղրում են, թե բանակից խուսափելու համար դիտմամբ սխալ է պատասխանում:

Ուրեմն հերթը հասավ ինձ: Իմ տանկով գնում եմ կովելու ֆաշիստների դեմ, որոնք աղետ ու ավեր բերեցին մեր երկրին: Գնում եմ կատարելու իմ պարտքը հայրենիքի առջև:

Եվ գնալուց առաջ քեզ տալիս եմ իմ վերջին հարցը, իմ անզին մայրիկ, վերջին հարցը.

- Որտե՞ղ է Շողերը:

Արդեն երեք ամիս է, ինչ նրանից նամակ չեմ ստանամ:

- Որտե՞ղ է Շողերը:

Եթե այս հարցիս էլ չպատասխանես, այլևս նամակ չեմ գրելու քեզ:

Գրիր ճշմարտությունը, ինչքան էլ դաժան լինի այն: Ես վաղուց արդեն երեխա չեմ, մայրիկ, ու այնպիսի բաներ եմ տեսել, այնպիսի ապրումներ եմ ունեցել, որ Հոնուտում հարյուր տարի էլ ապրելի, չէի տեսնի:

Քո Լևոն

Տանկային գործարան:

26. 09. 43 թ.

Կովելով գնում ենք առաջ, մայրիկ ջան: Անցնում ենք ավերված քաղաքների ու հիմնահատակ կործանված գյուղերի միջով: Ես չեի կարծում, թե իմ հոգու մեջ այդքան աստելություն կարող է լինել: Հինն ու նորը գումարվել է իրար: Ի՞նչ էք ուզում մարդկանցից, առանց այդ էլ հազար ցավի տեր են, ինչո՞ւ էք քանդում մարդկանց տները, ինչո՞ւ էք սպանում նրանց, այրում, ոչնչացնում նրանց ստեղծածը: Ինչի՞ համար: Ինչո՞ւ չեք թողնում մարդը ապրի: Ինչո՞ւ էք լացացնում, նվաստացնում, ստորացնում: Շատ գյուղերում այլևս մարդիկ չկան, մեկ-երկու ուրվականներ են, նույնիսկ չեն ուրախանում՝ տեսնելով մեզ: Այրված տներն են ցույց տալիս, թափահարում են գլուխները ու այնպիսի տխուր, ինչլացնոր աչքերով են նայում, որ դու քեզ մեղավոր ես զգում նրանց առաջ: Նրանք անձայն հարցնում են, «Բա որտե՞ղ էիք մինչև հիմա, անխիղճ մարդիկ»: Նայել չի լինում: Իմ տանկի կապավորը... (գրաքննիչը ջնջել է): Ստիպված իջեցրինք, որ հոսպիտալ ուղարկեն:

Ինձ վստահել են մի նոր, ահռելի զենք, որի ձայնից անգամ թշնամին սարսափում է: Տանկի թնդանոթի յուրաքանչյուր ականը... (գրաքննիչը ջնջել է) կիլոգրամ է: Երբ բաց եմ թողնում մի ական թշնամու դիրքի վրա, հետն էլ ասում եմ.

- Էս այրված տների ու անտուն մարդկանց համար: Մեկն էլ բաց եմ թողնում ու ասում.

- Էս էլ իմ տանջված Վարսենիկ մայրիկի համար: Գոռում եմ ու կրակում, գոռում եմ ու կրակում, բոլոր նրանց դեմ, ովքեր տուն են քանդում, նրանց դեմ, որ չեն թողնում ապրենք, նրանց դեմ, ովքեր ինձ չթողեցին տուն վերադառնալ ու պահել, պահպանել ձեզ:

Ովքեր սպանեցին իմ Սանասար հորը, Շամամ քույրիկին ու Գրիգոր եղբորս: Ովքեր չթողեցին, որ Շողերը սպասի ինձ ու սպանեցին նրա հույսը: Եվ ովքեր քեզ մենակ են թողել աշխարհում, իմ տանջված, իմ միակ, իմ հերոս մայրիկ... Մայրիկների թագուհի...

Իմ մասին չմտածես, ես ողջ եմ մնալու, անգին մայրիկ, ու մինչև մեր կարմիր դրոշը չբարձրացնենք Բեռլին քաղաքի վրա, սիրտս չի հանգստանալու: Այդ ժամանակ միայն առանց ամաչելու կվերադառնամ տուն ու կհիմանամ, որ զուր չեն եղել մեր կռիվն ու թափած արյունը:

Քո Լենն

Գործող բանակ, դաշտային

վոստարկդ. 44/268

29. 05. 44 թ.

Մայրիկ ջան, երբ դպրոցում աշխարհագրության դասին փայտիկով ցույց էի տալիս Ուկրաինան, բա իմ մտքով կանցնե՞ր, որ մի օր իմ տանկով ծայրեծայր կտրելու եմ այդ հսկա երկիրը, մեր հայրենիքի շտեմարանը, որից հիմա մոխիր ու ծուխ է մնացել: Ու հպարտությամբ եմ մտածում մեր ժողովրդի մասին, որը նորից քաղաքներ է կառուցելու, ավելի լավ ու մեծ քաղաքներ, արտեր է ցանելու և զգելու այգիներ: Ու այդ ժողովուրդը իմ աչքին հավաքվում, հավաքվում, դառնում է Սանասար Ալեքսանյան, դառնում է իմ հայրը,

որին հարյուր անգամ տրորեցին, բայց չկարողացան ընկճել, որը Սիբիրում էլ այգիներ էր գցում ու հավատում արդարության հաղթանակին: Չարմանալի առեղծված է մարդը: Ես մինչև հիմա էլ մտածում եմ, թե հայրիկը ի վերջո իմացա՞վ, թե ովքեր են իր թշնամիները, կամ իմացա՞վ, թե ինչի համար էին հավածում իրեն, եթե իմացել է ու շարունակել այգիներ տնկել, ուրեմն շատ մեծ մարդ է եղել իմ հայրը և քո ամուսինը, իմ տառապած մայրիկ: Եվ մենք բոլորս պետք է խոնարհվենք նրա հիշատակի առաջ: Քո նամակը ցնցեց ինձ: Մի՞ թե հենց այդպես էլ եղել է, միթե՞ ի պատասխան գյուղ եկած նոր հանձնաժողովի նախագահի հարցին, թե ինչո՞ւ եք զրպարտական նամակներ ուղարկել Սանասար Ալեքսանյանի մասին, Բագրատ Թոփալյանը այդպես էլ ասել է՝ «Մենք մեղավոր չեինք, ժամանակն էր մեղավոր»: Հենց այդպես էլ ասա՞ց: Ասաց՝ ժամանակն էր մեղավոր: Իսկ ո՞վ է ստեղծել այդ ժամանակը, եթե ոչ դու և քո նմանները, վերևում ու ներքևում, Բագրատ Թոփալյան: Խե՛ղճ ժամանակ: Ամեն ինչ կարելի է նրա վրա գցել: Ժամանակը հո չի կարող պատասխան տալ:

Որքան կուզեի այդ պահին ես էլ քո կողքին լինել ու նայել Բագրատ Թոփալյանի աչքերին: Եվ մյուսների աչքերին, որոնք թեև չեն չեն գրել, բայց գլուխները կախ ձեռք են բարձրացրել կամ իմացել ու լռել են: Ո՞նց են կարողացել ապրել այդ մարդիկ, չեն հասկանում: Ոնց են կարողանում գիշերները քնել: Միթե երազ չեն տեսնում ու սարսափած վեր չեն թռչում երազի մեջ: Շատ կուզենայի նայել նրանց աչքերին: Բայց չեմ կարող, ես կովում եմ: Իսկ նրանք չեն կովում: Նրանք պատերազմի ժամանակ հիվանդանում են, ծերանում են, կուրանում ու խլանում են: Իսկ հենց որ պատերազմը ավարտվի, կառողջանան անմիջապես, որպեսզի դեկավարեն:

Ի՞նչ հաճույքով հաղթանակից հետո ես իմ տանկով գյուղ կմտնեի... Այսինքն տանկ պետք չէ, միայն թե վերադառնանք: Միայն թե վերադառնանք... Եթե մեր իշխանությունը պատերազմի այս ծանր օրերին ժամանակ է գտնում հանձնաժողով կազմելու, որպեսզի քննի ու արդարացնի անմեղ տեղը հալածված ու դատապարտված մի մարդու, ապա ի՞նչ կլինի պատերազմից հետո: Որտե՞ղ պիտի թաքցնեն գլուխները բոլոր մեղավորները, բոլորը, Բագրատ Թոփալյանի նման մարդիկ:

Մի շաբաթ առաջ մեր տանկային դիվիզիան կանգնած էր երկաթուղային կայարանի մոտ: Մեր կողքին մի գնացք կանգ առավ վիրավորներով լի: Մեկը պատուհանից գլուխը հանել էր ու պապիրոս էր խնդրում անցնող-դարձողից: Նայեցի տեսնեմ՝ ո՞վ լինի: Մուսայել ապոր Արտաշը:

-Այ տղա,- ասում եմ,- քեզ ի՞նչ է պատահել:

Նայում է ինձ, նայում է կրծքիս գվարդիական նշանին, կարմիր աստղի շքանշանին, մեղալներին, սպայական ուսադիրներին և նայում ու չի ճանաչում:

- Հա՞յ ես, ախպեր ջան,- հարցնում է կակազելով:

- Ոչ միայն հայ եմ, Արտաշ Մերոբյան,— ասում եմ,- այլև հոնուտցի եմ և էն տղան եմ, որի վրա խմբով էիք հարձակվում, իսկ ես մեկ-մեկ անիծում էի ձեր հերը՝ իմ եղբայր Գրիգորի հետ:

Քիչ էր մնացել գնացքի պատուհանից ցած գցի իրեն: Իջավ, գիրկս ընկավ, փաթաթվեց, լաց էր լինում երեխայի նման, չէր կարողանում հանգստանալ: Գլխին նոնակի բեկոր էր կպել,

կակազում էր սաստիկ: Հանեցի մի լրիվ տուփ պապիրոս տվեցի իրեն ու մի բուռ էլ մախորկա: Ժամանակ շատ կար, նստեցինք, խոսեցինք, ես էլ պատմեցի քո նամակի և հայրիկին արդարացնելու համար գյուղ եկած հանձնաժողովի մասին: Մի տեսակ խղճահարությամբ ինձ նայեց: Ծխեց, ծխեց, ա՛խ քաշեց ու հանկարծ հարցրեց, թե խմելու բան չունե՞ս: Իսկ երբ իմ բակլաշկայից էլ երկու կում սպիրտ խմեց, նորից լաց եղավ, փաթաթվեց ու մեկ էլ այնպիսի բան ասաց, մայրիկ ջան, այնպիսի բան ասաց, որ քիչ մնաց խելագարվեի:

- Դու ոչ մի բան էլ չգիտես: Ի՞նչ կուլակաթափ, ի՞նչ ժողով, իմ հերն ինձ մանրամասն պատմել է,- ասաց:- Սանասար Ալեքսանյանի տեղն ով էլ լիներ այն ժամանակ՝ կաքսորեին: Գյուղի դեկավարները նստելու տեղ չեն ունեցել, նրանց լավ շենք է պետք եղել, դրա համար է Բագրատ Թովալյանն առաջարկել աքսորել Սանասար Ալեքսանյանին: Միայն դրա համար, գրասենյակի համար... Հո իր տունը չէ՞ր գրասենյակ դարձնելու:

Ահա թե ինչից է սկսվել մեր դժբախտությունը: Միայն թե թախանձագին խնդրում եմ քեզ՝ ոչ մեկի ոչ մի խոսք: Մինչև ես գամ: Մինչև ես գամ, մայրիկ, որ շարունակեմ իմ կռիվը:

Գվարդիայի ավագ լեյտենանտ, տանկի հրամանատար, միշտ քո խոնարհ որդի Լևոն Ալեքսանյան

Գործող բանակ

14. 12, 44 թ.

Իմ աննման մայրիկ: Ինչպես մի ռազմաճակատային երգում է ասվում, որքան հեռանամ եմ քեզանից, այնքան մոտենում եմ քեզ: Մենք արդեն Մոլդավիայում ենք և գրեթե առանց կանգ առնելու առաջ ենք գնում: Չգարմանաս, որ ձեռագիրս անձոռնի է և չվախենաս, որ ձախ ձեռքով եմ գրել: Հակառակի նման աջ ձեռքիս ցուցամատը դռան տակ եմ թողել: Դե ես փոքր ժամանակ էլ ձախորդ Փանոս էի:

Համբուրում եմ, քո Լևոն

Գործող բանակ

22.03.45 թ.

Մայրիկ ջան, շատ ծիծաղեցի, երբ ստացա նամակդ: Եվ պարզապես քո խաթեր, որ հանկարծ երազդ սուտ դուրս չգա, խոստովանում եմ, որ մատու դռան տակ չէի թողել, այլ վիրավորվել էի մի թեթև: Բայց հիմա հո համոզվեցիր, որ արդեն լավ եմ: Տեսնո՞ւմ ես, նորից աջ ձեռքով եմ գրում: Հետո դե ամոթ էլ էր, երեք տարի ռազմաճակատում լինես, ու ոչ մի անգամ չվիրավորվե՞ս: Դա էլ մի բանի նման չէր: Նամանավանդ որ հունգարացի սիրուն աղջիկներն էլ ամեն օր հոսպիտալ էին գալիս, հասկանաս թե չհասկանաս, խոսում էին իրենց քաղցր լեզվով և իրենց ձեռքով թխած բլիթները մեկնում մեզ: Է՛հ, սուտ եմ ասում, մայրիկ ջան, քո թխած կարմիր ցորեն հացից քաղցր բան աշխարհում չկա: Բան չի մնացել, կարժանանամ շուտով:

Իմ անուշ մայրիկ, նորից գրում ես, թե մի աղջկա անուն տուր, բերեմ տանը պահեմ մինչև քո գալը: Թեև այդ մասին գրել եմ քեզ, որ դրա ժամանակը չէ, բայց քանի որ դու սրտանց ես ուզում և կարծում ես, թե երկուսով ավելի թեթև կանցնի ժամանակը, կասեմ: Գուցե և նեղանաս, մայրիկ ջան, բայց եթե ինձ ես հարցնում, խնդրում եմ նորից Շողերին տուն բերես: Քեզանից չեմ թաքցնում, իմ մեծահոգի մայրիկ, Շողերից ես միշտ նամակ եմ ստանամ, պարզվում է, որ անբախտ է եղել նրա ամուսնությունը: Հարսանիքից մի ամիս հետո բանակ են տարել նրա ամուսնուն և խեղճը զոհվել է պատերազմում: Այնպես որ Շողերն ազատ է, և նամակներից էլ զգում եմ, որ սրտում դեռ պահում է առաջվա սերն իմ նկատմամբ:

Մի մոռացիր, որ պատերազմ է, իմ թանկագին մայրիկ, և շատ ու շատ հասկացություններ խառնվել են իրար: Երբ մահն ամեն օր աչքիդ առաջ է, ակամա ուրիշ տեսակ ես նայում կյանքին: Եվ շատ բաներ, որ առաջ չափազանց լուրջ ու կարևոր էին թվում, դառնում են ծիծաղելի ու մանրուք: Այնպես որ իմացիր, մայրիկ ջան, որ ես ներում եմ նրան ու թեև հասկանում եմ, որ քեզ համար ավելի դժվար է, բայց խնդրում եմ խոնարհաբար, որ դու էլ ներես: Ներես՝ հանուն ինձ:

Տեսնո՞ւմ ես, որ շատ բան է փոխվել, կյանք ջան: Բա թեկուզ երեք տարի առաջ ես ինձ թույլ կտայի՞՞ այսպիսի նամակ գրել իմ մայրիկին: Ամոթից գետինը կմտնեի: Ուրեմն՝ հասկացիր ու ներիր մեզ: Չե՞՞ որ դու աշխարհի ամենաբարի ու ամենախմաստուն մայրիկն ես:

Լևոն

Գործող բանակ

25.04.45 թ.

Երդվում եմ, որ օրերով տանկից դուրս չեմ գալիս: Քեզանից էլ նամակ չեմ ստանում և ոչ մեկից էլ չեմ ստանում, բայց չեմ անհանգստանում, որովհետև այնքան արագ ենք առաջ շարժվում, որ դաշտային փոստատարը երևի չի հասնում մեզ:

Քիչ է մնացել, իմ Վարսենիկ մայրիկ, արդեն պարզ երևում է, որ շուտով, շատ շուտով իրականություն կդառնա մեր ամբողջ ժողովրդի երազանքը և իմ երազանքը: Գայլը պոչը՝ քաշել, կծկվել է իր որջում: Մնում է մի հարված, մի հզոր հարված, և ինչպես միշտ գրել եմ քեզ՝ մեր կարմիր դրոշը կծածանվի Բեռլինի վրա: Ու ես տուն կգամ: Կգամ քեզ մոտ, մայրիկ ջան: Ու բոլորը կտեսնեն, թե որդին ինչպես պիտի պահի իր սիրասուն մայրիկին:

Դու գիտես, որ ես կգամ, իմ Վարսենիկ մայրիկ, կգամ, որովհետև

այդ օրվա համար շատ եմ տանջվել ու սպասել:

Միշտ քո Լևոն

Գործող բանակ:

**ՀՈՒՇԱՐՁԱՆ**

- Բարի լույս, Սուրեն: Բեղդ մի վառի, ափսոս է:

Սուրենը բարձրացրեց գլուխը, ետ նայեց, բերանից հանեց իրոք արդեն շրթունքներն այրող սիգարետը, ցած նետեց ու ժպտաց.

- Շնորհակալություն ուշադրության համար: Բարի լույս: Ցուլակը ծիծաղեց:

- Մեկնաբա՞ն ես, ինչ է: Շնորհակալություն ուշադրության համար.

- Բա ի՞նչ եմ,- ասաց Սուրենը: - Ես էլ քարի մեկնաբան եմ:

- Ինչ ճիշտ է, ճիշտ է,- համաձայնեց Ցուլակը, դանդաղ պտտվեց հուշարձանի շուրջը, աչքերը կկոցելով նայեց չորս կողմից, աջ ձեռքի բռունցքով խփեց քարտաշ Սուրենի թաց մեջքին ու կրկնեց նորից:- Ինչ ճիշտ է, ճիշտ է, ախպերս:

Հետո կանգ առավ քարի դիմաց, շրթունքներն անձայն շարժելով կարդաց մակագրությունները:

- Ուրեմն՝ ասածդ արեցիր:

- Հա:

- Կեցցես դու,- մեկ՝ հուշարձանին ու մեկ էլ՝ հեղինակին չթաքցրած հիացմունքով նայելով, ասաց Ցուլակը: - Ապրես դու: Եվ տես ինչ է ստացվում: Մեր գյուղից պատերազմի առաջին զոհը և վերջին զոհը Վարսենիկ աքոր ընտանիքից է: Սկզբում հայրը, վերջում՝ որդին: Տես ինչ է ստացվում: Կեցցես դու, Սուրեն, մի ապրող գործ էլ ստեղծեցիր: Ուրեմն, վերջացրիր:

- Դեռ չէ,- գովեստից երեխայի նման շիկնած առարկեց Սուրենը:

Ցուլակը զարմացավ.

- Այսինքն ո՞նց թե չէ: Գրել-վերջացրել ես:

- Չեմ վերջացրել:

Սուրենը մեկ անգամ էլ կարդաց մակագրությունները:

- Ինչո՞ւ: Ո՞վ է մնաց:

- Վարսենիկ աքիրը,- ասաց քարտաշ Սուրենը:

- Չէ, քեզ մի բան է պատահել,- ուսերը թոթվեց նախագահը:- Այ տղա, ո՞վ է տեսել ողջ-առողջ մարդու անունը գրեն քարին:

- Ես քեզ հարյուր անգամ ասել եմ, բայց չեմ ծուլանում, հարյուրմեկերորդ անգամ եմ ասում: Նա Հայրենական պատերազմի ամենամեծ զոհն է,- խոժոռվեց քարտաշ Սուրենը,- և ինչ-որ ունեցել է աշխարհում, հիմա այս քարի վրա է: Առանց իր անունի չի լինի:

- Իրեն հարցրե՞լ ես:

- Չեմ էլ ուզում հարցնել:

- Ուրեմն մահվան թիվն է՞լ ես գրելու,- հեզնեց Յուլակը:

- Չէ,- լրջորեն պատասխանեց Սուրենը,-թվի տեղը բաց եմ թողնելու:Աստված տա, որ երկար կյանք ունենա մեր Վարսենիկ աքիրը ու նրա մահվան թիվը իմ Մխիթար թոռը գրի: Հա բայց իր անունը պիտի գրվի քարին:Ուրիշ տեսակ չի լինի:

Ու որպեսզի ապացուցի, որ ինքը հաստատ է իր վճռի մեջ և ոչ մի առարկություն չի ընդունում, քարտաշ Սուրենը ձեռքն առավ երկաթե քանոնն ու սուր դանակը, չափեց, վերնից ու ներքևից գծեր խազեց ու գրեց գծերի արանքում, «Վարսենիկ– 1902—19...»:

### ՎԱՐՍԵՆԻԿ

Պատերազմի ժամանակ զարմանալի ու տարօրինակ շատ բաների հետ, առաջին հայացքից տարօրինակ մի բան էլ էր կատարվում: Մարդիկ ուրախանում էին, երբ ստանում էին եռանկյունի կոպիտ, անշուք ծրարներ և սարսափում երբ ծրարները լինում էին սովորական, քառանկյունի, կանոնավոր: Որովհետև սովորական, կանոնավոր այդ ծրարները պատերազմի ժամանակ գլխավորապես պաշտոնական բնույթի էին և իրենց հետ բերում էին դժբախտություն:

Պատերազմի ավարտից ուղիղ երկու ամիս հետո, երբ երկու ամիս շարունակ ցնծում էր ողջ ժողովուրդը և կամաց-կամաց տուն էին դառնում վիրավոր ու հոգնած ռազմիկները, սովորական,քառանկյունի,կանոնավոր մի ծրար եկավ Հոնուտ,որտեղ գրված էր, թե մարտական առաջադրանքների կատարման ժամանակ, 1945 թվականի մայիսի 7- ին, հերոսաբար զոհվել է գվարդիայի ավագ լեյտենանտ,տանկի հրամանատար,կոմունիստ Լևոն Սանասարի Ալեքսանյանը:Գրված էր նաև,որ նրա կուսակցական տոմսը, հետմահու տրված Կարմիր դրոշի շքանշանը. Կարմիր աստղի շքանշանը ու մի շարք մեդալները հրամանատարությունն ուղարկել է Տաուշի զինկոմիսարիատ: Եվ ամենավերջում գրված էր նաև, որ Լևոն Սանասարի Ալեքսանյանի ծնողները պետք է հպարտ լինեն այդպիսի խիզախ որդի ծնելու և դաստիարակելու համար:

Հազար ցավ ու կրակ տեսած գյուղը հառաչեց: Բոլորն էլ համոզված էին, որ այլևս չի դիմանա, կխելագարվի Վարսենիկ աքիրը կամ ձեռք կբարձրացնի իր վրա: Այդ համոզմունքն ավելի ամրացավ, երբ Վարսենիկ աքիրը ոչ ճչաց, ոչ հող շաղ տվեց մազերին և ոչ էլ ուշագնաց եղավ:Նա միայն երերաց ու գունատվեց միանգամից, փակեց աչքերը, շրջվեց ու դանդաղ-դանդաղ մտավ տուն:Ոչ ոք չհամարձակվեց հետևել նրան:Բայց չէին էլ կարող թույլ տալ, որ ով գիտե... Դրա համար էլ Հերիքնագին խնդրեցին տուն մտնել, մենակ չթողնել Վարսենիկ աքորը: Հերիքնագի ամուսինն էլ էր զոհվել պատերազմում և բոլորին թվում էր, թե դա նրան որոշ իրավունքներ է տալիս մխիթարելու իր սգավոր հարսին: Հերիքնագը հրաժարվեց, լաց եղավ, հրաժարվեց և, այնուամենայնիվ, վճռեց մտնել տուն: Բայց դուռը ներսից փակ էր: Հերիքնագը վախեցավ, ամուր բախեց դուռը, ներկաները շրջապատեցին նրան: Հերիքնագը նորից բախեց ու լացակումած խոսքերով ձայն տվեց Վարսենիկ աքորը, խնդրեց, աղաչեց



բացել դուռը: Եվ դուռը բացվեց: Վարսենիկ աքիրը դուրս եկավ, կանգնեց շեմին, աստվածամոր տխուր դեմքով ու տխուր աչքերով նայեց հավաքվածներին ու կամացուկ և կարծես թե հանգիստ ձայնով ասաց.

- Ես ուզում եմ մենակ մնալ, ժողովուրդ ջան...

Մի քանիսը և նրանց թվում Հերիքնազը լաց եղան բարձրաձայն, ասես Վարսենիկ աքորը հրավիրելով լաց լինել իրենց հետ ձայնով, երգելով, կնիկավարի, լաց լինել ու խոսել, խոսել, խոսել, որպեսզի դատարկվի,

հանգստանա սիրտը, չքարանա հանկարծ: Փորձեցին Լևոնի անունը տալ ու փառաբանել նրան, փորձեցին մխիթարանքի ինչ-որ խոսքեր գտնել, բայց Վարսենիկ աքիրը խոտորեն կիտեց հոնքերը.

- Չխոսեք,- ասաց նա,- կնեղանամ:

Եվ այնպես ասաց, որ մարդիկ հասկացան միանգամից ու ամաչեցին: Որովհետև սա այն դեպքն էր, որ մխիթարանքի յուրաքանչյուր խոսք վիրավորական կդառնար: Ի՞նչ պետք է ասեին. «Դո՛ւ ողջ լինես»: Ի՞նչ պետք է, ասեին, «Նրա չապրած տարիները քո մյուս երեխաների՞ն», Ի՞նչ պետք է ասեին. «Աստծո՞վ մխիթարվես»: Իսկ նրա ինչի՞ն էր պետք աստված: Նրա ինչի՞ն էր պետք այն աստվածը, որը չկարողացավ պահել նրա անմեղ ամուսնուն ու զավակներին: Նրա ինչի՞ն էր պետք վերացական, ընդհանրապես աստվածը, երբ ինքն իր իրական, իր ստեղծած, իր կենդանի աստվածներին էր կորցրել:

Ետ դարձավ ու նորից տուն մտավ: Եվ երեք օր դուրս չեկավ տնից: Անհանգստացած Հերիքնազն ու մյուս հարևանները մեկ-մեկ որևէ երեխայի ուղարկում էին, որ թաքուն նայի պատուհանից, տեսնի ինչ է անում Վարսենիկ աքիրը: Եվ մնում էին ապշած, երբ երեխաները գալիս ու ասում էին զարմանքով:

Կար է անում:

Իսկ չորրորդ օրը, վաղ առավոտյան, երբ բրիգադիրը ձայն էր տալիս աշխատավոր կանանց, Վարսենիկը դուրս եկավ տնից փոցխն ուսին ու գնաց ծխախոտի դաշտում աշխատելու: Նա այլևս երբեք, ոչ մի առիթով, ոչ մի տեղ չխոսեց իր ամուսնու և երեխաների մասին և անբառ թույլ չտվեց, որ ուրիշները խոսեն: Միշտ չէ, որ խոսքերը որևէ արժեք ունեն: Ավելի հաճախ դրանք աղքատացնում, հասարակ են դարձնում ապրումները:

Ովքեր չէին հասկանում նրան, տեսնելով նրա արտաքին սառնասրտությունը, հպարտությունն ու վշտերին դիմանալու ուժը, ասում էին զարմացած.

- Ռուսի սիրտ ունի Վարսենիկը:

Իսկ ովքեր հասկանում էին, խոնարհվում էին նրա առաջ:

Ոմանք էլ մտածում էին, թե վերահաս դժբախտություններից կկարծրանա, ակամա չարությամբ կլցվի Վարսենիկի սիրտը և սեփական տրամաբանությունից ու կենսավորձից

ելնելով, գտնում էին, թե նա այլևս չի կարողանա, չի ցանկանա տեսնել ուրիշների ուրախությունն ու երջանկությունը:

Նրանք սխալվում էին: Նրանք չէին ճանաչում Վարսենիկին:

Տեղի ունեցավ հակառակը:

Առանց այդ էլ առատաձեռն ու մեծահոգի կինը, որ իր բարությունն ու սերը շոայլորեն բաժանում էր մարդկանց, հիմա տալիս էր նաև այն ամենը, ինչ ուներ ու պահել էր իր գավակների համար: Նա, որ ամենաշատն էր մխիթարանքի կարոտ, ինքն էր մխիթարում մարդկանց ոչ միայն խոսքով, ոչ միայն գործով, այլ նաև նրանով, որ ապրում է և ապրելու իր ձևով: Նրանից մոր հոտ էր գալիս: Եվ առաջինն այդ մասին հայտարարեց փոքրիկ մի աղջիկ դեռ այն ժամանակ, պատերազմի առաջին տարում:

Վարսենիկն աշխատում ու ապրում էր Գետափի ծխախոտի չորանոցում, երբ ջրվորներից մեկը գրկած չորանոց բերեց երեք-չորս տարեկան մի փոքրիկ աղջկա, որը լաց էր լինում սրտամորմոք:

- Մի թփի տակ ընկած լաց էր լինում,- ասաց ջրվորը,- դես հարայ տվեցի, դեն հարայ տվեցի, ոչ մեկը մոտ չեկավ: Ի՞նչ անեի, վերցրեցի-բերեցի:

Ծխախոտագործ կանայք շրջապատեցին փոքրիկին, սկսեցին փաղաքշել, խոսել նրա մայրենի լեզվով, հաց մեկնեցին: Ոչինչ չօգնեց: Երեխան շարունակում էր ճչալ, ու թեև պատերազմ էր, բայց հացն էլ չվերցրեց:

Այդ ժամանակ Վարսենիկը մոտեցավ երեխային, մեկնեց ձեռքերն ու կամացուկ ասաց,

- Լաց մի լինի, բալա,,,

Եվ կատարվեց զարմանալին: Երեխան լռեց միանգամից, արտասովալի աչքերով Վարսենիկին նայեց, մրմնջաց, «անա » ու գիրկն ընկավ: Անմիջապես լուր ուղարկեցին հարևան աղբբեջանական գյուղերը հայտարարելով, թե Գետափում մի կորած փոքրիկ աղջիկ կա, ով կորցրել է, թող գա տանի: Սակայն մի քանի օր ոչ ոք չերևաց: Եվ այդ մի քանի օրը աղջիկը ոչ մի քայլ չէր հեռանում իր Վարսենիկ անայից, ամենուր հետևում էր նրան՝ փեշը բռնած ու գիշերն էլ քնում էր Վարսենիկի ծոցում, փոքրիկ ձեռքերով գրկած նրա պարանոցը: Բայց դե Վարսենիկը Վարսենիկ չէր լինի, եթե բավարարվեր այդքանով: Չգիտես որտեղից ինչ կտոր գտնելով, նա մի սիրուն շոր կարեց աղջկա համար, իր ձեռքով լողացրեց աղջկան, հագրեց, սանրեց մազերը ու բոլորը տեսան, որ շատ սիրուն աղջիկ է Ամինան:

Իսկ մի շաբաթ հետո եկան Ամինայի ետևից:

Յոթ ձիավոր աղբբեջանցիներ քառատրոփ մտան Գետափ: Հարցնելով գտան չորանոցը, իջան ձիերից, ներս մտան, հանեցին փափախները ու խոնարհվեցին Վարսենիկ աքոր առաջ:

Վարսենիկը ժպտաց ու նրանց մեկնեց Ամինային, մաքուր, սիրուն, իր նոր շորի մեջ, մազերին՝ ժապավեն:

Աղջիկն իսկույն ճանաչեց հորը, ուրախ ճիչով նրա գիրկն ընկավ, բայց երբ հայրը ձեռքից բռնած նրան ձիուն մոտեցրեց, Ամինան հանկարծ պոկվեց հոր ձեռքից, նետվեց դեպի Վարսենիկն ու փաթաթվեց ոտքերին:

Եվ լաց էր լինում սրտակեղեք, չէր թողնում, որ իրեն Վարսենիկից պոկեն: Մոր հոտ էր գալիս Վարսենիկից:

Մոր ձայնն էր խոսում Վարսենիկի մեջ, երբ հետո, մի ուրիշ օր բացեց Անթառամի տան դուռը:

Նրա ջահել հովիվ ամուսնուն կայծակը խփել էր սարում: Անթառամը չէր ուզեցել ապրել սիրած ամուսնու մահից հետո, և թույն էր խմել, որով այգիներն էին սրսկում: Մի կերպ կարողացել էին փրկել աղջկան, սակայն, նա հանգիստ ձայնով հայտարարել էր, թե միևնույն է, վերջ է տալու կյանքին: Սարսափահար ծնողները Վարսենիկ աքոր մետ եկան:

- Թե դու փրկեցիր, փրկեցիր,- լաց եղան նրանք:

Եվ Վարսենիկը գնաց Անթառամի տուն: Երբ ներս մտավ, հիվանդին հետևողներն անմիջապես դուրս եկան սենյակից: Անթառամը բացեց աչքերը և անսահման տխրությամբ Վարսենիկ աքորը նայեց,

- Ես գիտեմ, թե դու ինչի ես եկել, մեծ մայր,- ասաց Անթառամը: - Ես ասածու նման պաշտում եմ քեզ, բայց զուր ես եկել:

Ու Վարսենիկ աքիրն ասաց.

- Մարդը մեռնում է միայն այն ժամանակ, աղջիկ ջան, երբ նրան հիշող չկա: Որ դու չլինես, ո՞վ է հիշելու Բենիկին: Քո կարծիքով ինչո՞ւ եմ ապրում ես... Իսկի մտածե՞լ ես...

Աղջիկը ետ ընկավ բարձին ու հանկարծ քանդվեց, փղձկաց, լաց եղավ այդ ամբողջ պատմության ընթացքում առաջին անգամ:

Իսկ Վարսենիկ աքիրը հանդարտ դուրս ելավ տնից և աղջկա խորտակված ծնողներին ասաց.

Հանգիստ եղեք, կապրի Անթառամը:

Եվ Անթառամն ապրեց:

Էհ, ո՞ւմ չէր հասնում Վարսենիկ աքիրը:

Քարտաշ Սուրենը իրենից մեծ մի քույր ուներ, փոքր ժամանակ ընկել էր ձիուց, վնասվել էին ոտքերը: Որքան մեծացավ, այնքան ավելի ընդգծելի դարձավ արատը և ահռելի՝ նրա ծնողների վիշտը: Ինչպե՞ս պիտի ապրի Մանուշակը, ինչո՞վ պիտի ապրի, երբ հնարավորություն չունի դաշտ գնալու, աշխատելու այգիներում կամ հանդում: Ու մի օր Սուրենի մայր Գեղեցիկը հառաչելով սիրտը բացեց Վարսենիկ աքոր մոտ, խորհուրդ հարցրեց:

- Փող ունե՞ս, Գեղեցիկ:

- Ինչքա՞ն,- զարմացավ Գեղեցիկը:

- Մի կարի մեքենայի:

- Կհավաքեմ,- դեռ ոչինչ չհասկանալով, ասաց Գեղեցիկը:

- Դե մինչև հավաքես, աղջիկդ դերձակուհի կդառնա և դու կարող ես հանգիստ մնալ նրա ապագայի համար: Եթե մի անհանգստացող լինի, ես պիտի լինեմ,- մեղմ ժպտաց Վարսենիկը,- իմ հացը պիտի կտրի:

Մանուշակին տուն բերեց, պահեց, արհեստ սովորեցրեց ու երբ

Մանուշակը նույնիսկ կարողացավ շալվար կարել, Վարսենիկ աքիրն ասաց.

-Արդեն իմ չափ գիտես, գնա աշխատի, բալա...

Եվ Մանուշակի նման քանի-քանի հոգու արհեստ սովորեցրեց, ոտքի կանգնեցրեց, ինչպես տաուշեցի Սաթենիկն էր ասում, «Մի կտոր հացի տեր դարձրեց» Վարսենիկ աքիրը ոչ միայն Հոնուտից, այլև Տաուշի շրջանի գրեթե բոլոր գյուղերից:

Ձեռքի հետ, ձեռքի տակ Վարսենիկը պահեց, մեծացրեց նաև Հերիքնազի երեխաներին, երբեք չմոռանալով, որ երեսուն թվականի այն անիծյալ օրը, երբ տարան Մանասարին, Հերիքնազը միակն էր, որ չվախեցավ, սայլ բերեց երկաթուղային կայարան ու գյուղ տեղափոխեց Վարսենիկին ու երեխաներին: Եվ եթե գյուղ չհասան, Հերիքնազը չէր մեղավորը:

Մեղավորը, Բագրատ Թոփալյանը, իր մեղքերի ծանրության տակ կքաճ, որ այնքան հազվադեպ է պատահում այս աշխարհում, ժամանակից շուտ ծերացած, ողջ օրը նստում էր գրասենյակի առջև գցած քարին, անմիտ, դատարկ աչքերով նայում էր անցնող-դարձողին ու հարցնում.

- Նախագահը ե՞րբ պիտի գա, ասում եմ՝ նախագահը երբ պիտի գա:

Նրան ոչ ոք չէր պատասխանում, և Բագրատ Թոփալյանն ինքն էլ որևէ պատասխանի չէր սպասում, որովհետև այդ հարցը տալիս էր նույնիսկ նախագահին:

Միայն երբեմն-երբեմն չէր դիմանում և նրա հարցին պատասխանում էր դպրոցի հավաքարար Ջավահիր նանը, որի ամուսնուն ևս մի ժամանակ արտոբել էին Բագրատ Թոփալյանի գրպարտագրերով: Նա կանգնում էր ուղիղ Բագրատ Թոփալյանի առաջ, քթկալը ցած էր բերում ու ասում.

- Նախագահը քո ինչի՞ն է պետք, նախկին Բագրատ բեկ, քեզ Գաբրիել հրեշտակապետն է պետք:

Ու Բագրատ Թոփալյանը հարցնում էր նորից.

- Բա ե՞րբ պիտի գա...

- Այ եղ մեկը չգիտեմ,- ասում էր Ջավահիր նանը: - Ոնց որ երևում է իսկի նրան էլ պետք չես:

Ոչ ոքի պետք չէր այլևս Բագրատ Թոփալյանը: Նույնիսկ հարազատ որդուն,

որը հոր հին կապերով ու սեփական ձեռներեցությամբ կարողացել էր առաջ սողալ պաշտոնական սանդուղքներով և դառնալ Պետալյանի կոլեգիայի անդամ: Մանուշար Թոփալյանը հիմա սաստիկ ամաչում էր հոր վիճակի համար, և երբ որևէ խնջույքի ժամանակ ծնողների կենացն էին առաջարկում, տխուր դեմք էր ընդունում ու միանում նրանց, ովքեր ծնողներ չունեին և որոնց ծնողների մասին ասում էին. «Թող նրանց հոգին երկնային արքայություն ընկնի»:

Բայց Բագրատ Թոփալյանի հոգին ոչ երկնային արքայության մեջ էր, ոչ էլ Մանդարամետում, այլ կծկվել էր անմիտ աչքերով ծերունու վտիտ մարմնի մեջ ու տաքանում էր Հոնուտ գյուղի գրասենյակի առջև ընկած տափակ քարի վրա:

Երբեմն-երբեմն նրա գիտակցությունն ասես թե վերադառնում էր: Այդ պահերին Բագրատ Թոփալյանը ձայն էր տալիս դպրոց շտապող կամ դպրոցից վերադարձող երեխաներին.

- Ա՛յ երեխեք, եկեք նստեք կողքիս, ձեզ պատմեմ, թե ոնց եմ իմ էս ձեռքով Մրդուզի անտառում խփել երեք բանդիտների... Ա՛յ, էս ձեռքով...

Բայց մինչև հավաքվում էին երեխաները, կորցնում էր մտքի թելը, սկսում գառանցել, անկապ-անկապ խոսքեր ասել, խառնում էր իրար ամեն ինչ և ի վերջո չէր հասկացվում, թե որտեղ և ում դեմ է կռվել, կամ երբևէ կռվե՞լ է արդյոք որևէ բանի համար անմիտ աչքերով այդ ծերունին:

Ոչ ոքի պետք չէր այլևս Բագրատ Թոփալյանը, որովհետև կյանքում երբեք ոչ ոքի պետք չէր եղել, և դրա համար էլ մենակ ու անտեր էր հիմա:

Իսկ նրա գոհը մենակ չէր:

Ողջ գյուղը նրան համարում էր իր մայրը: Երբ ամուսնանում էին ջահելները, անպայման առաջին հերթին Վարսենիկ աքորն էին այցելում, նախ որ նրա օրհնությունը լսեն, և ապա, որ հարսի շորը մեծ մայրիկը կարի: Երբ որևէ հոնուտցի երկու-երեք օր հարբած էր տուն գալիս, կինը Վարսենիկի անունով էր սթափեցնում նրան, «Վարսենիկ աքորը կասեմ, ամոթից գետինը կմտնես»: Երբ որևէ բրիգադ ավարտում էր բերքահավաքը և նշանավոր Մարաթա ծառերի տակ մեծ խնջույք էին կազմակերպում այդ առթիվ, բրիգադիան անպայման Վարսենիկի դուռն էր կտրում.

- Վարսենիկ աքիր, շերեփոջ վերցրու, արի...

- Այ տղա,- կեղծ բողոքում էր Վարսենիկը,- էդքան ջահել հարսներ կան, թող ճաշն էս անգամ էլ նրանք եփեն, էլի...

- Բա ժողովուրդը մեղք չի՞,- ծիծաղում էր բրիգադիորը և Վարսենիկ աքորն ավելի նեղը գցելու համար, ավելացնում:- Արի, արի Վարսենիկ աքիր, ճաշը որ եփես, քեզ աշխօր կգրենք:

Եվ Վարսենիկ աքիրը ժպտում էր ներողամտորեն.

-Աշխօրն ի՞նչ եմ անում, այ բալա...Կգամ, կգամ կեփեմ, թող անուշ լինի ձեզ... Ոչ ոք նրա շուրթերից տրտունջ չլսեց ու չլսեց անեծք: Ապրում էր հանգիստ, արժանապատվությամբ, աշխատելով որևէ կերպ օգտակար լինել մարդկանց: Եվ եթե բարկանում էր հանկարծ, միայն այն մայրերի վրա, որ ինչ-որ հարցում անուշադիր են իրենց երեխաների նկատմամբ: Եվ որովհետև նրա տան կողքին Հերիքնագն էր ապրում, դիտողությունների մեծ մասն էլ հենց Հերիքնագին էր բաժին ընկնում:

- Այ աղջի, մի պարկ կարտոֆիլ սարքի ուղարկի քաղաք, ձմեռ է գալիս:

- Սահակին հոն ուղարկեցի՞ր, հոն էր ուզում: Թե չունես՝ ես տամ:

- Հերիքնագ, թե արևդ սիրես, ահագին ավելուկ ունեմ, չեմ իմանում ինչ անեմ, Պետիկին ուղարկի:

Այդ անհատակ վշտի տեր կնոջ աչքին ոչ մեկը արցունք չտեսավ: Ոչ մեկը... Շողերից բացի:

Փոքրիկ որդուն ամռանը գյուղ էր բերել Շողերը և մի օր ձեռքից բռնած անցնում էր հին աղբյուրի մոտով, երբ դեմ-դիմաց հանդիպեց Վարսենիկ աքորը: Շփոթվեց սաստիկ, կանգ առավ, ակամա երկու ձեռքով ոտքերին սեղմեց որդուն: Վարսենիկ աքիրը տխուր նայեց նրան ու ժպտաց.

- Բա գյուղ ես եկել ու չեմ գալիս ինձ մոտ, աղջիկ ջան...

- Ամաչում եմ,- ասաց Շողերը:

Երեխան լայն բացած աչքերով անձանոթ տատին էր նայում:

- Քոնն է , - հարցրեց Վարսենիկ աքիրը: - Հա,- կարմրեց Շողերը:

- Հորով-մորով մեծանա,- մաղթեց Վարսենիկ աքիրն ու հանկարծ ծնկի իջավ փոքրիկի առաջ:- Անունդ ի՞նչ է, քե մատաղ,- հարցրեց նա, հետն էլ գրպանում կոնֆետ որոնելով:

-Լևոն,- մրմնջաց տղան:

- Ի՞նչ,- կարծեց թե սխալ լսեց Վարսենիկը:

-Լևոն,- ձայնը բարձրացրեց տղան:

Շողերը տեսավ, թե ինչպես են արտասուքները գլորվում ծեր կնոջ գունատ դեմքի վրայով և ինքն էլ չդիմացավ:Գրկեց Վարսենիկ աքորը, կրծքին սեղմվեց ու կրկնում, հա կրկնում էր լացակումած.

- Ներիր, մամա ջան, ներիր, մամա ջան...

Փոքրիկ տղան մորը նայեց զարմացած, հետո անձանոթ տատիկին, որը չգիտես ինչու լաց էր լինում երեխայի նման, ու հարցրեց կարեկցանքով, ուռցնելով շրթունքները.

- Ինչո՞ւ ես լաց լինում, տատի... Մամ, տատին ինչո՞ւ է լաց լինում...

Ինչո՞ւ է լաց լինում: Դե եկ ու պատասխանի այդ հարցին, պատասխանի, թե ինչու է լաց լինում Վարսենիկ աքիրը:

## ՀՈՒՇԱՐՁԱՆ

... Ինչ-որ մեկը շնջաց.

- Վարսենիկ աքիրը:

Շշուկը ծայր առավ ու տարածվեց ընդարձակ գերեզմանատան մեջ: Կանայք, ասես հրամանով, լռեցին, և բոլորի հայացքներն ուղղվեցին դեպի գերեզմանատան մուտքը, որի դարպասից ներս էր մտել և հանդարտ, վեհաշուք առաջ էր գալիս Վարսենիկ աքիրը:

Հետո բոլորի հայացքները դարձան դեպի փոքրիկ տափարակը, որից բարձրացել ու որին թիկն էր տվել քարտաշ Սուրենի կառուցած հուշարձանը, ապառաժ քարը, որ ասես նոր չէր դրվել այդտեղ, այլ կանգնած էր դարեր:

Նախագահ Ցոլակը, որին ստիպել էին խմել տարբեր շիրմաթմբերի մոտ, արդեն բավականին հուզված ու ոգևորված էր: Նա ընդառաջ գնաց Վարսենիկ աքորը, բռնեց թևը.

- Արի, արի, մի տես ինչ է սարքել Սուրենը:

Վարսենիկ աքիրը կանգ առավ ու երկար, անքթիթ նայեց ապառաժ քարին, քայլեց կողքով, ասես հմայված, նորից կանգ առավ ու լուռ կարդաց մակագրությունները: Հետո մատներով շոյեց, շոշափեց գրերը, ինչպես կույրերն են իրենց գիրքը կարդում, ու պայծառ, վճիտ աչքերով նայեց քարտաշ Սուրենին:

- Շնորհակալ եմ, տղա ջան,- ասաց նա մեղմ, փաղաքուշ ձայնով,- դու իմ բոլոր կորածներին իմ կողքը բերեցիր: Շնորհակալ եմ:

Նա մեկնեց ձեռքը, և քարտաշ Սուրենը երեխայի նման հուզված դեպի Վարսենիկ աքիրը նետվեց ու բռնեց նրա ափը: Եվ Վարսենիկ աքիրը թեքվեց ու համբուրեց քարտաշի հողոտ, կոշտ ու կոպիտ ձեռքը: Դա այնքան հանկարծակի ու անսպասելի եղավ, որ քարտաշ Սուրենը մնաց կարկամած: Հետո թափով քաշեց ձեռքը, գրկեց Վարսենիկ աքորը ու ասաց հուզմունքից խոպոտած, խռոված ձայնով:

- Էդ ի՞նչ ես անում, էդ ի՞նչ ես անում, աքիր: Ուզում ես, որ մենք էլ քո ո՞տքը համբուրենք:

Աղունիկը մի կողմում փոքրիկ մի սեղան էր բացել, կտրտել սուրբ խաչի համար ավանդական ձմերուկը, հաց, պանիր ու պոմիդոր դրել ու հիմա տաշովի բաժակները թթի օղի էր լցնում ու արտասվում:

Եվ Յուլակը, որպեսզի ինքն էլ լաց չլինի, գոռաց Ադունիկի վրա:

- Էդ ի՞նչ ես անում, այ քուր, երեսդ բաժակներից հեռու տար, սպիրտի տոկոսը իջեցնում ես:

Հետո վերցրեց բաժակներից մեկը Վարսենիկ աքորը տվեց, մյուսը մեկնեց քարտաշ Սուրենին և բարձրացնելով իր բաժակը ու մի պահ նայելով օդու մակերեսին առաջացած օղակների շղթային, ասաց,

- Կենացդ, մայր:

Իսկական հոնուտցի էր նախագահ Յուլակը և ինչպես վայել է իսկական հոնուտցիներին, գինովի վիճակում խոսում էր անկեղծ, ոգևորված, գեղեցիկ, վերամբարձ բառերով:

- Կենացդ, մայր,- կրկնեց նա:- Ի խորոց սրտի ես խմում եմ քո նվիրական կենացը: Դու իսկական մայր ես: Դու մի ամբողջ ժողովրդի մայր ես: Դու դասական օրինակ ես, թե ինչպես կարելի է ապրել աշխարհում: Այն ժողովուրդը, որ քեզ նման սիրասուն և անձնագոհ մայրեր ունի, դեռ շատ երկար կտանի իր քարավանը պատմության ճանապարհներով և պատվով ու արժանապատվությամբ կտանի...

Վարսենիկ աքիրը բարի հայացքով Յուլակին նայեց:

- Մի խոսի, Յուլակ շան:

Քարտաշ Սուրենը ծիծաղեց,

- Չի կարող,- ասաց նա:- Դրանք որ չխոսեն, ինչո՞վ են ապրելու:

Բայց հեշտ չէր նախագահ Յուլակին հունից հանել: Նա միայն ներողամիտ ժպիտով քարտաշ Սուրենին նայեց ու շարունակեց նույն ոգևորությամբ:

- Ես գիտեմ, թե ինչ կարող էի պատասխանել քեզ, տարաբախտ մարդ -ասաց նա:- Բայց այսօր դու հորեյար ես և ես ներում եմ քեզ: Եվ ուրեմն, քո կենացը, մայր, մայր, մայր...- նա երևի հիշեց նաև իր մորը, դրա համար էլ աչքերը արտասուքով լցվեցին: - Մայրն ինքնին սրբություն է,— ասաց նա:— Իսկ դու մայրերի մայրն ես և ես իմ անունից, բոլոր հոնուտցիների անունից խոնարհում եմ գլուխս քո մեծության առաջ, քո անսփուփ վշտի ու ծով համբերության առաջ...

Նա դեպի երկինք բարձրացրեց բաժակը բռնած ձեռքը ու խմեց մինչև վերջ:

- Բլուզդ հանի, Յուլակ շան,- ասաց Վարսենիկ աքիրը:

- Ի՞նչ,- զարմացավ Յուլակը:- Բլո՞ւզս, ինչո՞ւ...

- Թնի տակը մի քիչ քանդված է,- ասաց Վարսենիկ աքիրը,- հանի ինձ տուր, կարեմ:

- Էհ,- նեղացավ Յուլակը,- դրա ժամանակն է:



- Հանի-հանի, ցավդ տանեմ,- ասաց Վարսենիկ աքիրը,- թելն ու ասեղը միշտ ինձ հետ են: Հանի...

Նախագահին ամաչելով հանեց բլուզը, Վարսենիկ աքորը մեկնեց ու ինքը նստեց խոտին, սփռոցի առաջ: Վարսենիկ աքիրը ձեռքն առավ թելն ու ասեղը, Ադունիկի գարմացած հայացքի տակ, աչքերը մի թեթև կկոցելով, անմիջապես թելեց ասեղը ու սկսեց կարել Ցուլակի բլուզը:

- Նորից լցրու բաժակս, Սուրեն,- խնդրեց Ցուլակը:

- Լցնեմ, ախպեր ջան,- շիշը ձեռքն առավ քարտաշ Սուրենը:

- Լացս գալիս է,- ասաց Ցուլակը:

- Ինչո՞ւ:

- Չգիտեմ,— ասաց Ցուլակը,- բայց երբ նայում եմ Վարսենիկ աքորը, լացս գալիս է, Սուրեն:

- Ճիշտ է,- համաձայնեց Սուրենը:

Ցուլակը նորից ձեռքն առավ բաժակը, Վարսենիկ աքորը նայեց, որը վարժ շարժումներով կարում էր քանդված տեղը, նայեց, նայեց ու ասաց.

- Վարսենիկ աքիր, ներիր ինձ, մի քիչ հարբած եմ էսօր ու մարդ եմ, էլի, սիրտս լցված է, դրա համար էլ ուզում եմ մի հարց տալ քեզ:

- Հարցրու, տղա ջան,- ատամներով թելը կտրեց ու բլուզը Ցուլակին մեկնեց Վարսենիկը:

Ցուլակը հագավ բլուզը:

- Ո՞նց կարողացար եղբան ցավը տանել, Վարսենիկ աքիր: Դու, օրինակ, կարո՞ղ ես մի քանի բառով բնութագրել...— նա ամաչեց այդ բառից ու շտապով ավելացրեց:— Դու կարո՞ղ ես ասել, թե ինչ է եղել քո կյանքը:

Վարսենիկը իր պարզ աչքերով նախագահին նայեց, հետո բարձրացրեց գլուխը, ապառաժ քարին նայեց ու քարի վրա փորված գրերին.

- Իմ ամբողջ կյանքը էս քարի վրա գրված է,- ասաց նա:

- Հա ,,- խեղդվեց քարտաշ Սուրենը:

- Սուս,- ընդհատեց նրան Ցուլակը, նկատելով, որ Վարսենիկն էլի ինչ-որ բան է ուզում ասել:— Ասա, Վարսենիկ աքիր...

Ամենքին էր հայտնի, որ Վարսենիկ աքիրը ոչ կարգին կրթություն է ստացել և ոչ էլ սիրում է խոսել, բայց երբ նա խոսեց, Ցուլակը, Սուրենը, Ադունիկը ապշահար մնացին:

Վարսենիկ արքիրն ասաց.

- Հարցնում ես, թե ի՞նչ է եղել իմ կյանքը, տղա ջան: Էսօր, էս սուրբ քարի առաջ կասեմ ես: Իմ կյանքը եղել է կռիվ:

-Կռի՞վ: Ո՞ւմ դեմ,- առաջ թեքվեց Սուրենը:

- Կասեմ,- ասաց Վարսենիկ արքիրը: - Իմ կռիվը աստծո հետ է եղել: Աստված պատերազմ սկսեց իմ դեմ, բայց ես հաղթող դուրս եկա: Որովհետև նա խլեց ինձնից ինչ ունեի ես, բայց իմ խիղճն ու միտքը չկարողացավ խլել:

1984 թ.